


ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌԱՍԻԱՐՀԻ
ԿՏԻՔԵՒԹԵԸ
ՀԻՆ ԱՐԵՎԵԼԻ
ԿԵՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



27th September
Bunya Pines & Mt. Barney
Queensland Australia

27.07.1998

Bob Morris

736.3 (479.25) ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՔԱՂՔԻ ՌԱՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ
«Էթնոս» Էթնո-ՍԵԱԿՈՒԹՅԱՅԻՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ԱՐԱՄԵ» ԳԻՏԱ-ՍԵԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌԱՆԱՇԽԱՐՁԻ ԿՆԻՔՆԵՐԸ
ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԿՆՔՎԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 1998

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАЦИОНАЛЬНОЙ
АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАУЧНЫЙ ЦЕНТР ЭТНО-КУЛЬТУРНЫХ ИССЛЕДОВАНИЙ "ЭТНОС"
НАУЧНО-КУЛЬТУРНОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО "АРАМЕ"

A. S. PILIPOSYAN

ПЕЧАТИ АРМЯНСКОГО НАГОРЬЯ
В СИСТЕМЕ
ДРЕВНЕВОСТОЧНОЙ ГЛИПТИКИ

ЕРЕВАН 1998

A 84789

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NATIONAL
ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA
SCIENTIFIC CENTRE OF ETHNO-CULTURAL RESEARCH "ETHNOS"
SCIENTIFIC - CULTURAL CHARITY ASSOCIATION "ARAME"

A. S. PILIPOSYAN

THE SEALS OF ARMENIAN HIGHLAND
WITHIN THE
ANCIENT EAST GLIPTIC SYSTEM

YEREVAN 1998

ԴՏԳ 390/395/
ԳՄԴ 63.23

Փ 553

Դրատարակվում է
ՀՀ ԳԱԱ Դնագիտության եւ
ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատճ. գիտ. դոկտոր
Ա. Ա. Թալանթարյան

Փիլիպոսյան Աշոտ

Փ 553

Յայկական լեռնաշխարհի կնիքները
Յին Արեւելքի կնքագործության
համակարգում.-Եր.: Արամե, 1998.-248 էջ:

Աշխաղուանքը գրագրվում է Գամիշլի (Մծրին) քաղաքի (Սիրիայի Արևական Հանրապետություն) Հայ Կարողիկե եկեղեցու առաջնորդ Ծայրագոյն Վարդապետ Գերաշնորհ Հայր ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻ օժանդակությամբ եւ օրհնությամբ:

Работа издана благодаря участию и помощи настоятеля Армянской
Католической церкви города Камышлы Сирийской Арабской Республики
Преподобного Архимандрита АНДРАНИКА АЙВАЗЯНА.

*This volume is published with the help and blessing of Very Reverend
Archimandrite ANTRANIG AYVAZIAN Prelate of the Armenian Catholic
Church of Kamishlye (Nisibin) in the Republic of Syria.*

Փ 0503020913
842(01) - 98

ԳՄԴ 63.23

© Փիլիպոսյան, Ա. 1998 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դայկական լեռնաշխարհը Փոքր Կովկասի, Պոնտական լեռնաշղթայի, Անտիտավրոսի, Դայկական Տավրոսի եւ Զագրոսի լեռներով սահմանազատված, շուրջ 400 հազար քառ.կմ. մակերես զբաղեցնող աշխարհագորական այն տարածքն է /Անտ. Ռ. 1899; Անտ. Ռ. 1902; Դակոբյան Թ. 1968, էջ 7-34; Բալյան Ս. 1969; Յօրգաբյան Լ. 1979, էջ 12-17; Ասլանյան Ա., Բաղդասարյան Ա., Զոհրաբյան Լ., Ուկանյան Ա. 1980, էջ 177-182/, ուր ծեւափորվել եւ իր բազմադարյան մշակույթն է ստեղծել հայ ժողովուրդը:

Ընկած լինելով Առաջավոր Ասիայի արեւմուտքից-արեւելք տարածվող երկու մեծ բարձրավանդակների՝ Փոքրասիականի /Անտառլիական/ ու Իրանականի միջնամասում եւ նրանց հետ միասին հյուսիսից ու արեւելքից բնական սահման հանդիսանալով Սիրիական ու Միջագետքյան հարթավայրերի համար, Դայկական լեռնաշխարհը հնուց հաղորդակից է եղել տարածաշրջանի էրեմիկական տեղաշարժերին եւ մշակութային փոխազդեցություններին:

Այդ փոխառնչությունները մանտանշող հնագիտական նյութերի մի կոնկրետ եւ խիստ ուշագրավ խնճի՝ հինարեւելյան կնիքների ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն ուսումնասիրությունը: Իրենց կիրառական եղանակներով, կառուցվածքով, ոճական եւ հորինվածքային առանձնահատկություններով, արձանագիր տեքստերի արժանահավատությամբ, նյութի, գույնի, չափի, կրելածելի բազմազանությամբ եւ այլ տեղեկատվական հնարավորություններով, կնիքներն՝ այսօր, Դին Արեւելքի պատմության, մշակույթի, արվեստի, առասպելաբանության եւ այլ բնագավառների ուսումնասիրությանն անհրաժեշտ սկզբնադրյուրներից են:

Մասնագիտական գրականության մեջ այս գիտաճյուղը հայտնի է «գլիպտիկա» /հունարեն «գլիֆո»-՝ «փորագրում եմ» արմատից/ կամ «սփրագիտիկա» /հունարեն «սփրագիս»՝ «կնիք» բառից/ անվանք: Իր շուրջ երկդարյա պատմության ընթացքում կնքագիտությունն անցել է անհաջողությունների, որոնումների, ինքնահաստատման ու նվաճումների ոչ դյուրին ճանապարհ: Եթե 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ուսումնասիրողների գիտական ջանքերը հիմնականում ուղղված էին Արեւմուտքի խոշոր թանգարաններում /Փարիզ, Լոնդոն, Բրյուսել, Զիկագո/ եւ նաև առաջական գուցակների կազմնան ու հրատարակման գործին /Menant J. 1886; De Clercq

L., Menant J. 1910; Ward W. 1910; Spelleers L. 1917; Delaporte L. 1920; Ward W. 1920; Weber O. 1920/, ապա 20-րդ դարի 30-40-ական թվականներից մասնագետների ուշադրության կենտրոնում ժառացան նրանց ժամանակագրական եւ տարածական սահմանների ճշգրտման, ոճական առանձնահատկությունների վերհանման, իինարեւելյան կնքագործական կենտրոնների առանձնացման խնդիրները: Արդյունքում, քննարկվող նյութը, աստիճանաբար անջատվելով ընդիհանուր եւ վերացական «իինարեւելյանց», կոնկրետ տարածքային, մշակութային եւ նույնիսկ էրիուլական պատկանելություն ձեռք բերեց, ավելի որոշակի դարձնելով տարրեր ցեղախրների, պետական կազմավորումների եւ ժողովուրդների դերը կնքագործության այս կամ այն ոճի եւ հորինվածքի ստեղծման, նյութի ընտրության, ինչպես նաև կնիքների կառուցվածքի, կրելածելի, կիրառման եւ այլ արտահայտչանակների մշակման գործում: Այս ամենն իր արտահայտությունը գտավ իինարեւելյան արվեստի ու մշակույթի երկու խոշորագույն գիտակներ՝ Շենրի Ֆրանկֆորտի եւ Անտոն Մորթգատի հիմնարար մենագրություններում /Frankfort H. 1939; Moortgat A. 1940/: Աշխատանքներ, որոնք փաստացի նյութի ընդգրկման ծավալով, պարբերացման ու ժամանակագրության մշակված հանակարգով, ոճական առանձնահատկությունների վերհանման սկզբունքներով, միֆոպետիկական փորագիր տեսարանների բովանդակության համարձակ վերակազմություններով իրենց գիտական արժեքն ու արդիականությունը չեն կորցրել մինչեւ օրս: Միջագետքյան գլանածեւ կնիքների պատճա-ժամանակագրական վերլուծության եւ ոճական առանձնահատկությունների վերհանման վերաբերյալ Շ.Ֆրանկֆորտի աշխատանքը խիստ համառոտ կարելի է ներկայացնել հետեւյալ հիմնադրույթներով.

1-ին փուլ -

Մ.թ.ա. 4-րդ հազ. 2-րդ կես (Ուրուկ 4-րդ - Զեմդեք-նասարյան ժամանակահատված):

2-րդ փուլ -

Մ.թ.ա. 3000-2340 թթ (Վաղինաստիական եւ Սարգոնի շրջան)՝ «Ղիպակե» /«Brocade style»/, «Կերպարային երեւակայական եւ երկարաձգված» /«An imaginative and linear style»/, «Ուելեֆ-դեկորատիվ» /«A decorative relief style»/ եւ «Սարգոնյան» ոճերի ձեւավորման ժամանակահատված:

3-րդ փուլ -

Մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագիծ (Ուրի 3-րդ հարստություն եւ Խսին-Լարսա)՝ «հարավային» եւ «Խսին-Լարսայի» ոճերի ձեւավորման ժամանակահատված:

4-րդ փուլ -

Մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կես (Բաբելոնի 1-ին հարստություն)՝ «Երկբեւեռ» ոճի ձեւավորման ժամանակահատված:

5-րդ փուլ -

Մ.թ.ա. 18-17-րդ դարեր՝ Սիրիական 1-ին եւ 2-րդ խմբերի կնիքների տարածման ժամանակաշրջան:

6-րդ փուլ -

Մ.թ.ա. 16-14-րդ դարեր՝ Միտաննիական (մ.թ.ա. 1520-1350 թ.թ.) եւ Կասպիտական (մ.թ.ա. 1500-1300 թթ) կնքագործության ժամանակաշրջան:

7-րդ փուլ -

Մ.թ.ա. 2-րդ հազ. 4-րդ քառորդ - մ.թ.ա. 1-ին հազ. կես՝ Միջին եւ Նոր Ասուլուական թագավորությունների կնքագործության ժամանակաշրջան:

Ա. Մորթգատը եւս իր ուշադրությունը կենտրոնացրեց գլանաձեւ կնիքների ուսումնասիրության հիմնախնդիրներին: Սակայն, ի տարբերություն Շ.Ֆրանկոֆորտի, նա աշխատանքի հիմքում դրեց ոչ այնքան ոճական, որքան հորինվածքային առանձնահատկությունների եւ առաջին հերթին վերջիններս կազմող առանձին դետալների /հագուստ, գլխարկ, սանրվածք, զարդ, դիրք եւ այլն/ մանրակրկիտ ուսումնասիրության հարցերը: Սահմանափակելով միայն վաղ շրջանի /մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներ/ կնիքների հետազոտման խնդիրներով, Ա.Մորթգատը ներկայացրեց վերջիններիս ժամանակագրության /պատմական շրջափուլերի եւ կոնկրետ անհատների հետ կապված/ հետեւյալ սանդղակը:

1-ին փուլ -

Մ.թ.ա. 4-րդ հազ. կեսեր (Ուրուկ 6-րդ - 4-րդ):

1ա փուլ -

Մ.թ.ա. 3100թ. (անցում Ուրուկ 4-րդից Զեմդեթ-Նասրի):

2-րդ փուլ -

Մ.թ.ա. 3000-2800 թթ (Զեմդեթ-Նասրի ժամանակահատված):

2ա փուլ -

Անցում Մեսսիլիմի ժամանակաշրջանին:

3-րդ փուլ -

Մ.թ.ա. 3-րդ հազ. սկիզբ (Մեսսիլիմի ժամանակաշրջան):

3ա փուլ -

Անցում Ուրի 1-ին հարստության ժամանակաշրջանին (այսպէս կիչված իմդուգուդ-Սուլկուրուի/ ներկայումս օգտագործվում է «Անգուդ-Շիրուպպակ» ընթերցումը/ ժամանակահատվածին):

4-րդ փուլ -

Ուրի 1-ին հարստության ժամանակաշրջան:

ա) Մեսկալամդուգի ժամանակահատված,

բ) Մեսաննեպադայի-Լուգալբանդայի ժամանակահատված,

գ) Նինոտուրմինի /ընթերցումը հնացել է, ներկայումս կիրառվում է «Նինբանդա թագուհի» վերծանումը/՝ Մեսսաննեպադայի կնոջ ժամանակահատված:

Ահա գիտական այս հենքի վրա մեր դարի 40-80-ական թվականներին ու-
սումնասիրություններ կատարած նոր մասնագետները /Գ. Օֆներ, Է. Փորա-
դա, Պ. Ամյե, Թ. Բեռան, Յ. Բոննե, Մ. Բրանդես, Բ. Բրենտյես, Բ. Բյուրանան,
Ռ.Բյոներ, Պ.Բեք, Պ. Ալեքսանդեր, Ո. Դայսոն, Դ. Կոլոն եւ այլոք/ ձեռքի տակ
ունենալով լավ թվագրվող հնագիտական համալիրներից հայտնաբերված
նոր նմուշներ, ապելի խորացրին եւ ընդլայնեցին գիտելիքները հի-
նարեւելյան կնիքների ու կնքագործության վերաբերյալ: Ըստ որում, վերո-
հիշյալ աշխատանքներում մոտեցումների միանմանությունն ու առաջադր-
ված լուծումների ինչ-որ տեղ միօրինակությունը, թերեւս, կարելի է բա-
ցատրել այն հանգամանքով, որ մինչեւ մեր դարի 70-80-ական թվականները
կնքագիտությունն, ըստ էության, Արեւմուտքի ուսումնասիրողների մենաշ-
նորին էր եւ, ըստ այդմ էլ, գերազանցապես զարգացել էր տեղի
կենտրոններում նշակված եւ սեփական գիտական «ստանդարտից» շեղում
չենթադրող մեկնաբանությունների պայմաններում: Մեր կարծիքով այդ «մի-
օրինակության» պատճառներից մեկն այն է, որ վերոհիշյալ ուսումնասի-
րողների հիմնական մասը, փաստորեն ճիշտ ընկալելով կնիքներն իրարից
զատող ամենակարեւոր հատկանիշը՝ դրոշնումն իրականացնող եղա-
նակների տարբերությունն, այնուամենայնիվ չկարողացավ ձերբազատվել
հնից եկող եւ համենատարար լավ նշակված ձեւա-կառուցվածքային բաղ-
դատման սկզբունքից եւ ուշադրությունն առավելապես կենտրոնացրեց
կնիքների արտաքին /կառուցվածքային/ տարբերությունների վերհաննան
ու վերջիններիս դրոշմող մակերեսներին փորագրված տեսարանների
մեկնաբաննան խնդիրներին: Մյուս պատճառը, թերեւս, կապված էր հի-
նարեւելյան կնիքների ողջ ընտրանու երկենթախումը /1. դրոշմ-կնիքներ, 2.
գլանաձեւ կնիքներ/ ոչ արդյունավետ ստորաբաժանման եւ ենթախներից
յուրաքանչյուրը մյուսից անջատ ուսումնասիրման գործելակերպի հետ:
Վերջինիս հետեւանքը եղավ այն, որ մասնագետների մեծագույն մասն իրեն
նվիրեց առավել իրապուրիչ, մեծաքանակ եւ շահեկան գլանաձեւ կնիքների
դասակարգման եւ ժամանակագրության հարցերի հետազոտմանը, «մոռա-
նալով» կիրառման այլ եղանակներ ունեցող օրինակների գոյությունը եւ
խուսափելով ողջ տեսականուն նվիրված ընդհանրացող ուսումնասիրութ-
յուններից: Ինչ վերաբերվում է այն ոչ մեծաթիվ «համարձակներին» /Բ.Բյու-
քանամ, Բ.Բրենտյես, Ո.Դայսոն/, որոնք այնուամենայնիվ փորձ արեցին հա-
մատեղել երկու ենթախմբերին վերաբերող ուսումնասիրություններն, ապա
վերջիններս էլ չհանդնեցին վեր բարձրանալ կնիքների մակերեսներին փո-
րագրված ոճա-հորինվածքային տեսարանների բովանդակության բացա-
հայտման եւ առանձին կերպարների մեկնաբանման գործելաձեւից, դրանով
իսկ առաջին հերթին լուծելով առասպելաբանության, ապա նոր միայն
կնքագիտության հետ առնչվող խնդիրներ: Այսինքն, ըստ էության, կնքագի-

սուրբունն առաջ ընթացավ ոչ այնքան բուն կնիքների, որքան վերջիններիս վրա փորագրված տեսարանների վերլուծության, անշուշտ խիստ անհրաժեշտ, բայց միեւնույն ժամանակ կնքագիտության առջեւ ծառացած բազմաթիվ հիմնահարցերի մեկնաբաննան համար մասամբ բավարար, ճանապարհով:

Փաստորեն այսպիսին է իրավիճակը կնքագիտության մեջ նաև այժմ եւ դուք լավագույն վկայությունը ներկայիս խոշոր արեւելագետներ Բ.Բյուքանին եւ Դ.Կոլոնի մեծարժեք եւ ընդգրկուն մենագրություններն են /Buchanan B. 1981; Collon D. 1987; Collon D. 1990/: Դատկապես ուշագրավ է Դ.Կոլոնի 1987 թ. հրատարակած աշխատանքը, որ կրում է «Առաջին արտատպությունները»: Գլանաձեւ կնիքները Դիմ Արեւելքում» վերնագիրը: Այստեղ փաստորեն ի մի են բերվել եւ ընդհանրացվել՝ վերջին հարյուրամյակում տարբեր արեւելագետների կողմից գլանաձեւ կնիքների վերաբերյալ մշակված բոլոր տեսակետները: Վերջիններիս հիմնան վրա Դ.Կոլոնը ներկայացրել է հինարեւելյան կնքագործության /ցավոք, միայն ըստ գլանաձեւ կնիքների/ զարգացման պատմա-ժամանակագրական հետեւյալ պատկերը.

1-ին փուլ -

Մինչեւ մ.թ.ա. 3000 թ.՝ գլանաձեւ կնիքների սկզբնավորման շրջան:

2-րդ փուլ -

Մ.թ.ա. 3000-2334 թթ.՝ Քաղաք-պետությունների ժամանակաշրջան:

3-րդ փուլ -

Մ.թ.ա. 2334-2000 թթ.՝ Սարգոնյան կայսրության եւ Ետսարգոնյան շրջան:

4-րդ փուլ -

Մ.թ.ա. 2000-1500 թթ.՝ Համնուրաբիի ժամանակաշրջան:

5-րդ փուլ -

Մ.թ.ա. 1500-1000 թթ.՝ Միջազգային փոխառնչությունների ժամանակաշրջան (Կասսիտական Բարելոն, Միտաննի, Ասորեստանի միջին թագավորություն, Կիպրոս):

6-րդ փուլ -

Մ.թ.ա. 1000-500 թթ.՝ Նոր Ասորեստանյան եւ Նոր Բարելոնյան կայսրություններ, Ուրարտու:

7-րդ փուլ -

Մ.թ.ա. 500 թ. եւ դրանից հետո՝ Մեղացիներ, պարսիկներ, հույներ (Աքեմենյան կայսրության ժամանակաշրջան):

Ի դեպ, ինչպես իին, այնպես էլ այս աշխատանքներում Հայկական լեռաշխարհ փաստորեն բացակայում է «Դիմ Արեւելք» պատմա-աշխահագրական եւ էթնո-մշակութային հասկացությունների համակարգից, իսկ տեղից հայտնաբերված եւ արեւմտյան թանգարաններում պահվող նյութը

անջատ-անջատ ներկայացված է «Արեւելյան Անատոլիա» եւ «Ուրարտու» տերմինների տակ: Ուստի մեր աշխատանքի նպատակն է ձեռքի տակ առկա մեծաքանակ հնագիտական եւ արձանագիր նյութի համակողմանի ուսում-նասիրության հիման վրա նորովի համակարգել Յին Արեւելքի եւ հարակից շրջանների մ.թ.ա. 7-1-ին հազարամյակների կնիքների հարուստ հավաքածուն, վերհանել յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ կնքագործության առանձնահատկությունների համայնապատկերը, հնարավորության սահմաններում տալ դրանց ձեւավորման ու զարգացման սոցիալ-տնտեսական, էթնո-մշակութային եւ ռազմաքաղաքական նախադրյալներն ու դրդապատճառները եւ, վերջապես, առաջին անգամ փորձ անել ներկայացնել Յայկական լեռնաշխարհի կնքագործության տեղն ու դերն այդ գործընթացների համակարգում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՏՄԱԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կ նիքները Յին Աշխարհի նյութական մշակույթի ամենաաչքի ընկնող դրսեւորումներից են: Սկզբնապես հանդես գալով որպես առանձին մարդու կամ նարդկանց ոչ մեծ խմբի, ապա համայնքի, հետագայում՝ տոհմի, իսկ ավելի ուշ նաեւ պետության ինստիտուտ ունեցող հասարակության սոցիալական սանդղակի տարբեր աստիճաններին կանգնած խավերի /ռազմական ավագանի, քրնական դաս, վաճառականություն, արհեստավորների դաս եւ այլն/ եւ ամենալայն իրավունքներով օժտված անհատների /առաջնորդ, ցեղապետ, քրնապետ, քագավոր, քաղուիի, քագաժառանգ, զորահրամանատար եւ այլն/ անձնական սեփականությունը, սոցիալական կարգավիճակն, իշխանությունը եւ անգամ էքնիկական պատկանելությունը մատնանշող ատրիբուտներ, կնիքները լայն կիրառություն գտան կյանքի, կենցաղի եւ հասարակական-քաղաքական գործունեության ամենատարբեր ոլորտներում: Ուստի միանգամայն հասկանալի է, որ կնիքների մակերեսներին արված փորագրություններն, ինչպես նաեւ նրանց կիրառման եղանակն ու կառուցվածքը պատհական կամ կամայական բնույթ չեն կարող կրել: Աշխարհագրական, մշակութային եւ անգամ էքնիկական գործուները թողել են իրենց որոշակի ազդեցությունը թվարկված հատկանիշների ծեւավորման վրա /Collon D. 1987, էջ 113-119; Beyer D. 1982, էջ 62-63; Collon D. 1975, էջ 155-156; Gibson Mc.G., Biggs R. 1977, էջ 41-53; Դյակոն Ի. 1968, էջ 135-140/:

Այս ամենն անշուշտ, հրամայաբար պահանջում է խնդրո առարկա բնագավառի ուսումնասիրությանն անհրաժեշտ գիտական մեթոդների ու տիպաբանական ստորաբաժանումների նոր ու ճկուն համակարգի մշակում ու կիրառություն, ինչն իր հերթին հնարավորություն կընձերի առկա մեծաքանակ փաստացի նյութն ավելի օբյեկտիվ ու հավաստի «խոսեցնելու» եւ վերջինիս տեղեկատվության հիմքի վրա, Յին Արեւելքի մ.թ.ա. 7-1-ին հազարամյակների կնքագործության զարգացման արժանահավատ եւ առավել հավանական համայնապատկերը վերստուալու համար:

Ինչպես նշեցինք վերեւում, հինարեւելյան կնքագործությամբ զբաղվող մասնագետների հիմնական մասը չփորձեց ձերբագատվել վաղուց մշակված, բայց, ըստ էության, կնիքների բազմաբնույթ տեղեկատվական հնարավորությունները սահմանափակող ու համահարթեցնող գիտական «ստանդարտից» եւ ուսումնասիրվող նյութի տիպաբանական ստորաբաժանման

հիմքում թողեց քիչ աշխատող՝ ծեւա-կառուցվածքային բաղդատման սկզբունքը, կիրառելով հինարեւելյան կնիքների երկենթախումբ /1.Դրոշ-կնիքներ, 2.Գլանաձեւ կնիքներ/ ստորաբաժանման եւ ենթախմբերից յուրաքանչյուրը նյոււսից անջատ հետազոտման աշխատաձեւ, ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կնիքների արտաքին /կառուցվածքային/ տարրերակների վերհանման ու վերջիններիս դրոշմող մակերեսներին փորագրված տեսարանների մեկնաբանման խնդիրներին:

Գիտակցելով ուսումնասիրության վերը ներկայացված սկզբունքի քիչ արդյունավետությունը եւ յուրաքանչյուր կնիքն ընդունելով որպես մեկ, ամբողջական ու կիրառման եղանակի առումով ինքնուրույն ու անբաժանելի միավոր, մենք նպատակահարման գտանք հինարեւելյան կնիքների ստորաբաժանման առաջին աստիճանի՝ ենթախմբի, հիմքում դնել դրոշմումն իրականացնող եղանակների տարրերության հատկանիշը եւ քննարկվող արտեֆակտների ողջ տիրությ նորովի բաժանել չորս /եւ ոչ թե երկու՝ ինչպես արվում էր ավանդաբար/ ենթախմբների:

1-ին ենթախումբ-

Դրոշ-կնիքներ: Օգտագործվել են մեկ սեղմումով մեկ ամբողջական դաշվածք ստանալու համար:

2-րդ ենթախումբ-

Գլանաձեւ կնիքներ (պատակներ): Գործածվել են գլորման եղանակով դաշված պատկերների գոտի ստանալու համար (տերմինների ավելորդ խառնաշփորից խուսափելու նպատակով, այս ենթախմբի համար պահպանել ենք վաղուց արդեն ընդունված /թեեւ առաջին հերթին արտաքին հատկանիշներ ցուցանող/, «գլանաձեւ կնիքներ» տերմինը, դրա տակ ընկալելով գլորման կամ գլանան եղանակով կիրառվող կնիքների ողջ բազմությունը):

3-րդ ենթախումբ-

Կոնաձեւ կնիքներ (գալարադրոշ կնիքներ): Օգտագործվել են ինչպես իրանի փորագրությունները գլորման եղանակով արտատպելու, այնպես եւ հիմքին արված պատկերները մեկ սեղմումով դաշելու համար: Ըստ որում, դրոշման երկու եղանակներն էլ արվել են կողդ-կողդի եւ միաժամանակ (նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս կնիքները մասնագետների կողմից միշտ ներգարավվել են «գլանաձեւ կնիքներ» ենթախմբի մեջ եւ չունեն ինքնուրույն անվանում, մենք նպատակահարման գտանք պայմանականորեն վերջիններիս կոչել «կոնաձեւ կնիքներ» անվանք, դրա տակ ընկալելով գլանան եւ դաշնան կոմբինացված եղանակով կիրառվող կնիքների ողջ տեսականին):

4-րդ ենթախումբ-

Պրիզմայաձեւ կնիքներ (բազմադրոշ կնիքներ): Կիրառվել են իրանի

Եխտերին եւ հիմքին արված փորագրությունների ինքնուրունաբար սեղմումներով, առանձին պատկերներ ներկայացնող դաշվածքների շարք ստանալու համար (քանի որ սրանք եւս մասնագիտական գրականության մեջ խմբավորվել են «գլանածեւ կնիքների» ենթախմբում եւ չունեն ինքնուրույն անվանում, ապա մենք նպատակահարմար գտանք պայմանականորեն կիրառել «պրիզմայածեւ կնիքներ» անվանումը, վերջինիս տակ հասկանալով մեկից ավելի ինքնուրույն դաջունների կոնքինացված եղանակով օգտագործվող կնիքների ողջ տեսականից):

Վերը նշված ենթախմբերում առանձնացված կնիքները միօրինակ չեն եւ դրսեւրովում են ներենթախմբային տարբերակներով: Տեսականորեն քննարկվող կնիքները տարբերակի մակարդակում կարելի է զանազանել ըստ նյութի, ձեւի, փորագրման հնարքների, ոճի, գույնի, չափերի եւ այլն: Նման փորձեր արվել են արդեն: Սակայն ստացված եզրահանգումները ոչ միշտ է, որ եղել են հավաստի, վերջնական եւ ընդհանրացնող: Առավել ուշագրավ արդյունքներ են տվել կնիքների հորինվածքային առանձնահատկություններով արվող տարբերակումները: Ըստ որում, մինչեւ այժմ մասնագիտական գրականության մեջ հիմնականում կիրառվել է հորինվածքային առանձնահատկությունների դասդասման երկտարբերակ համակարգ.

1-ին տարբերակ -

Երկրաչափական բնույթի պատկերներով կնիքներ,

2-րդ տարբերակ -

Տեսարանային պատկերներով կնիքներ:

Նման նոտեցումն, ըստ մեզ, արհեստականորեն նեղացրել է կնիքների վրա ներկայացված պատկերների տեղեկատվական հնարավորությունների ուսումնասիրնան տիրույթը, փոքրացրել հորինվածքային առանձնահատկությունների համադրման եւ զանազանման արդյունավետ եղանակների քանակը եւ, ըստ այդմ էլ, տվել ոչ ամբողջական պատկեր: Պատճառը, թերեւս, «հորինվածք /կոմպոզիցիա/» հասկացության ոչ լրիվ ընկալման եւ իմաստավորման մեջ է: Մեր կարծիքով «հորինվածք /կոմպոզիցիա/» հասկացության տակ տվյալ դեպքում պետք է հասկանալ կնիքների դրոշմող նաևկերեսներին առկա նշանա-պատկերային փորագրությունների եւ վերջիններիս ժանրա-սյուժետային /իմաստային/ ժանրաբեռնվածությունների միասնությունը: Այլ խոսքով, հորինվածքն, ըստ Էւրյան, կնիքների դրոշմող նաևկերեսներին փորագրման եղանակով ներկայացված տեղեկատվությունների ընկալման համակարգն է, իր տարամակարդակ դրսեւրումներով: Այդ դեպքում, որն է ուրեմն կնիքների հորինվածքային առանձնահատկությունների տարբերակման միավոր-հատկանիշը: Տեսականորեն

որպես այդավիսին կարող է ընդունվել հորինվածքի ուղղությունը /աջից ձախ կամ ձախից աջ/, նրանում առկա կերպարների կամ այուժետային խմբերի քանակը, ռեգիստր-բաժանարարների եւ լոկուսների գոյության կամ բացակայության փաստը, երկրաչափական, կենդանական, բուսական, մարդկային եւ այլ պատկերների առկայության, բացակայության կամ համադրության հանգամանքը եւ այլն: Մեր կարծիքով, փորագրությունների նման կանայական մասնատումներից յուրաքանչյուրը հորինվածքային առանձնահատկությունների տարբերակման միավոր-հատկանիշ դարձնելը /եւ դա այն դեպքում, եթե մենք միայն ենթադրում ենք տեսարանի ինաստային ծանրաբեռնվածությունը եւ, ըստ այդմ էլ, իրավասու չենք այն ինքնական տարածատելով/, անտարակուս հանգեցնում է իրականությանը քիչ հաճապատասխանող, կիսատ եւ աղճատված արդյունքների: Այդ իսկ պատճառով էլ կնիքներից յուրաքանչյուրի դրոշնող մակերեսին /կամ մակերեսներին/ առկա հորինվածքն ընդունելով առանձին, ամփոփ եւ անբաժանելի ամբողջություն, մենք նպատակահարմար գտանք, որպես վերջիններիս տարբերակման միավոր-հատկանիշ ընդունել հորինվածքներից քաղվող օբյեկտիվ եւ սուբյեկտիվ տեղեկատվությունների մակարդակային տարբերությունները: Վերջիններս, մեր կարծիքով, ենթադրում են չորս մակարդակ /1. նշանային, 2. պատկերային, 3. տեսարանային, 4. տեքստային/ եւ, ըստ այդմ էլ պայմանավորում կնիքների հորինվածքային առանձնահատկությունների աստիճանական զարգացման քառափուլ հաջորդականությունը:

Նշանային մակարդակն իր մեջ ներառում է միայն երկրաչափական /կետ, գիծ, կոր, շեղագիծ, գիգազագ, խաչ, շրջան, ուղղանկյուն, շեղանկյուն, ցանց եւ այլն/ բնույթի պատկերներ ներկայացնող փորագրությունների ողջ տիրույթը: Սրանց տեղեկատվական հնարավորությունները բացառապես սուբյեկտիվ-ենթադրական են եւ չեն պայմանավորում որեւէ գործողություն կամ սյուժե:

Պատկերային մակարդակն ամփոփում է՝ առանց որեւէ ուղեկցող մանրանասների, միայն մեկ ստատիկ պատկեր ներկայացնող փորագրությունների տիրույթը /միջատ, սողուն, թռչուն, կենդանի, բույս, մարդ, երեւակայական է-ակ եւ այլն/: Ի տարբերություն նախորդ մակարդակի, սրանց տեղեկատվությունը օբյեկտիվ է, թեև այստեղ եւս բացակայում է գործողության կամ սյուժեի պարագան:

Տեսարանային մակարդակն իր մեջ ընդգրկում է միմյանց հետ փոխեկապակացված նշանային եւ պատկերային փորագրությունների անենաբազմազան համադրությունների ողջ տիրույթը: Սրանց տեղեկատվական հնարավորությունները ներառում են փոխլրացնող օբյեկտիվ եւ սուբյեկտիվ անենատարբեր ենթադրությունների դաշտը: Տեսարաններում հստակ ընդգծված է գործողության /կամ գործողությունների/ եւ սյուժեի պարագան:

Տեքստային մակարդակն իր մեջ ներառում է արձանագիր տեքստերի /հիերոգլիֆ, սեպագիր/ եւ նշանային, պատկերային ու տեսարանային փորագրությունների համադրության ողջ տիրուվը: Սրանց տեղեկատվությունն արդեն ոչ միայն օբյեկտիվ է, այլ նաև ստույգ: Այն ինքն իր մեջ տեքստի ձեռվագ ամփոփում է կոնկրետ գործողություն, անձ, երեւույթ կամ սյուժե, ապա վերջինս համալրում նույն հորինվածքի նշանա-պատկերային հատվածում ներկայացված փորագրությունների ենթադրվող /օբյեկտիվ եւ սուբյեկտիվ/ բովանդակությամբ:

Ահա տեղեկատվական հնարավիրությունների վերոհիշյալ չորս մակարդակների հիման վրա էլ, մեր ուսումնասիրության մեջ առանձնացվել են կնիքների հորինվածքային առանձնահատկությունների աստիճանական զարգացումը մատնանշող չորս տարրերակներ, հետեւյալ հաջորդականությամբ:

1-ին տարրերակ -

Երկրաչափական /նշանային/ հորինվածքներով կնիքներ:

2-րդ տարրերակ -

Պատկերային հորինվածքներով կնիքներ:

3-րդ տարրերակ -

Տեսարանային հորինվածքներով կնիքներ:

4-րդ տարրերակ-

Արձանագիր տեքստ ունեցող հորինվածքներով կնիքներ:

Վերոհիշյալ չորս ենթախմբերի եւ չորս տարրերակների տեղեկատվությունների հիման վրա էլ այս ուսումնասիրության մեջ ըննարկվել են Յին Արեւելքի /Եգիպտոս, Եգեյան աշխարհ, Փոքր Ասիա, Միջիա-Պաղեստինյան աշխարհ, Միջագետք, Արաբական թերակղզի, Հայկական լեռնաշխարհ, Իրանական սարահարթ, Միջին Ասիա, Ինդոսի հովիտ/ մ.թ.ա. 7-1-ին հազարամյակների կնիքների հանդես գալու, տարածման, փոխազդեցության եւ այլ հարցերը:

ԴՐՈՇՄ - ԿՆԻՔՆԵՐ (աղ. 1-21)

Սրանք շրջանի, օվալի կամ ուղղանկյան գծագրություն ունեցող հարթ կամ քիչ ուռուցիկ երեսով, ձվաձեւ, կիսագնդաձեւ, հազվադեպ նաև խորանարդաձեւ իրանով եւ հաճախ բռնակ-կախիկով դրոշն-կնիքներ են, որ օգտագործվել են մեկ սեղմունով մեկ ամբողջական դաշվածք ստանալու համար: Ըստ հորինվածքային առանձնահատկությունների այս ենթախմբում հնարավոր է զանազանել չորս տարբերակներ:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 1-8):

Այս տարբերակին բնորոշ են երկրաչափական հորինվածքներով դրոշն-կնիքները: Ինչպես նշեցին վերեւում «Երկրաչափական» անվան տակ հասկացվում են բոլոր այն դաշվածքները, որ ներկայացված են ուղղանկյան, շեղանկյան, ցանցի, խաչի, զիգզագի, սկաստիկայի, կետի, պարույրի, շրջագծի եւ երկրաչափական այլ պատկերների ու նրանց զուգորդումների ձեւով:

Ժամանակագրական առունով սրանք ամենահին դրոշն-կնիքներն են: Նրանց վաղագույն օրինակները հանդիպում են Սիրիա-Պաղեստինյան աշխարհում արդեն «նախաբրուտագործական» շրջանում եւ թվագրվում են մ.թ.ա. 7-րդ հազարամյակով /Buchanan B. 1981, էջ 4-5/: Այստեղ նրանք ավելի հաճախակի են դառնում մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներում (Ամուկի հովիտ, Երիքով, Թել Արփայա, Թել-Շալաֆ, Թել Բրակ) եւ լայն տարածում ստանում մ.թ.ա. 4-րդ հազարամյակում /Mallowan M., Rose G. 1935, էջ 2-17, 170-178; Braidwood R., Braidwood L., 1960, էջ 63, աղ. 37, 68; Բրենտես Բ. 1976, էջ 53; CCO 1964, աղ. 1, նկ. 1; Maccioni B. 1989, էջ 99/ (աղ. 1, նկ. 1-23): «Պատրաստվել են օճառաքարից /ստեատիտ/, օճաքարից /սերպենտին/, կրաքարից, մարմարից, կավից եւ այլն: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակից նշված տարածքում այս տարբերակի կնիքներն իրենց տեղը գիշում են ավելի բարդ հորինվածքային դաշվածքով օրինակներին:

Փոքր Ասիայում եւս նույն տարբերակին վերաբերող դրոշն-կնիքները երեւան են գալիս մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակներում /Զաքար Հույուկ, Յաջիլար/ եւ առավել գործածական դառնում մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների ընթացքում /Կարաբաշ-Սեմայուկ/ (Mellaart J. 1964, էջ 96-98, նկ. 40, 41; Բրենտես Բ. 1976, էջ 308, նկ. 31; CCO 1962, աղ. 5, նկ. 80; Mellink M. 1965, էջ 250, աղ. 64, նկ. 33, աղ. 65, նկ. 37; CCO 1969, լուսանկար 116; Goldman H. 1956, էջ 236, նկ. 395; Yakar J. 1985, էջ 350-351, աղ. 24, նկ. 3, 9, 11, 17, 18) (աղ. 2, նկ. 1-15): Սոլի-Պոնպեոպոլիսում /Կիլիկիա/ եւ Սաքչեզյողուից ոչ հեռու գտնվող Սամալ բնակավայրում հայտնաբերված եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով թվագրվող քրոնգե դրոշն-կնիքների օրինակները վկայում են, որ վաղ շրջանում տարածված այս կնիքների եզակի նմուշները պահպանում են իրենց գոյությունը Փոքր Ասիայում նաև Ուշ Բրոնզի շրջափուլում

/Klengel H. 1967, աղ.24, 25; Schaeffer C. 1948, էջ 277, աղ.174, նկ.20/:

Միջազգետքում Երկրաշափական պատկերներով դրոշմ-կմիջներն ի հայտ են գալիս մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներում /Ուրեյդ, Զարմո/ եւ գործածության մեջ մնում մ.թ.ա. 4-րդ հազարամյակում /Buchanan B. 1981, էջ 6-9, նկ.6-10, 12, 14-16; ICCC 1962, նկ.204/: Այստեղ են նրանք հիմնականում դուրս են գալիս կիրառությունից մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ընթացքում (աղ. 2, նկ. 16-24):

Եգեյան աշխարհում քննարկվող դրոշմ-կմիջների օրինակները հայտնի են մ.թ.ա. 6-րդ հազարամյակից Լեռ-Նիկոմեդիա/, իսկ մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակներից տարածում են ստանում Արեւելյան Եվրոպայի (աղ. 3, նկ. 1-6) տրիպոլե-կուլուտենյան մշակույթի հուշարձաններում (Ֆրումուշիկա, Խեբեշչստի) /Բրենտես Բ. 1976, էջ 98; Maccioni B., Мерперт Н., Мунчайев Р., Черныш Е., 1982, էջ 178, 272, աղ.58, նկ.31, 35, 42-45; Пасек Т., 1949, էջ 44, նկ.12, 13; Piggot S. 1965, էջ 48, նկ.17/:

Քիչ ավելի ուշ /մ.թ.ա. 4-րդ հազարամյակում/ նման դրոշմ-կմիջները երեան են գալիս նաև Միջին Ասիայում /Կառւչի-դեպէ/ եւ Ինդոսի հովիտում (Սոհենգո-դարո) /Григорьев Г. 1940, էջ 10; Маккей Թ. 1951, էջ 75-77, աղ.17, 18/ (աղ. 3, նկ. 7-26):

Իրանական սարահարթում քննարկվող կմիջները (աղ. 4, նկ. 1-26) հանդիպում են մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակների հնագիտական հուշարձաններում Հնչ, Սիալկ 3-րդ, Զաֆարարադ, Թեփե Գյիան, Ջալալան/, իսկ ամենաուշ օրինակները շարունակում են օգտագործվել նաև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին /Մարլիկ Թեփե/ (Langsdorf A., McCown D. 1942, աղ.81, նկ.20; Buchanan B. 1981, էջ 10-13, 17, նկ.17-29, 39-41; Vanden Berghe L. 1973, էջ 57; Vanden Berghe L. 1975, էջ 59; Vanden Berghe L. 1988, էջ 35; Brentjes B. 1983, էջ 191; Al-Gailani Werr L. 1988, էջ 11, նկ.27; Аントонова Е. 1984, էջ 27):

Այս առումով Իրանական սարահարթի եւ Փոքր Ասիայի հետ նկատվող ընդհանրություններ ունի Ջայկական լեռնաշխարհը (աղ.5 - աղ.8): Այստեղ քննարկվող տարրերակին պատկանող դրոշմ-կմիջների վաղերկրագործական բնակատեղիներում /Թոյրեթեփե, Քյուլթեփե I/, շարունակվում օգտագործվել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ընթացքում /Թեփենչիկ, Թալին/, անհետանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին եւ Վերստին հայտնվում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին /Անիցուլլաև Օ. 1959, էջ 96, աղ.40; Խարիման Ի. 1957, էջ 141; Esin U. 1972, աղ.109, նկ.3, 4, աղ.110, նկ.3; Սարգսյան Գ. 1989, էջ 10/: Ջատկապես ուշագրավ է Արտաշավանի թիվ 3 դամբարանից հայտնաբերված եւ մ.թ.ա. 15-14-րդ դարերով թվագրվող բրոնզե դրոշմ-կմիջները /Սարգսյան Գ., 1987, էջ 19-20/ (աղ. 6, նկ. 12): Այն ամիջազգան գուգահեռներ ունի Սոլիի (աղ. 6, նկ. 11), Սաքչայոզուի եւ Մարլիկ Թեփեի (աղ. 6, նկ. 13), բրոնզե կմիջների հետ: Առավել լայն տարածում Ջայկական լեռնաշխարհում այս կմիջները ստանում են մ.թ.ա. 2-1-ին հազա-

րամյակների սահմանագծի հնագիտական հուշարձաններում /Մոլխաննաք քափա, Սարի-թեփե, Մեծանոր, Դվին, Օշական/ (Крупнов Е. 1941, № 170; Халилов Д. 1960, № 74-75, арт. 7, № 1-3; Нариманов И., Халилов Д. 1962, № 57, арт. 10, № 6, № 59, арт. 12, № 65, арт. 18 № 6, № 67, арт. 20, № 3; Нариманов И. 1973, № 114-130; Алиев В. 1976, № 119, арт. 4, № 3; Халилов Д. 1985, № 47-131, арт. 17, № 14, 15; Խանզադյան Է., Ակրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, № 131-135, № 134-136; Կյանքաբարե Կ. 1977, № 14, № 17/1; Եսայն Ս., Կալանտարյան Ա. 1988, арт. 54, № 13):

Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների սահմանագծում կավից պատրաստված դրոշն-կնիքները տարածում են ստանում նաև Անդրկովկասում եւ Ջուսիսային Կովկասում /Մինգեչառ, Նարեկվավի, Ալիաստիմյան բնակատեղի, Սերժեն-յուրտ, Ալիանկալա/ (Крупнов Е. 1941, № 170; Асланов Г., Վանդով Բ., Իոնե Գ. 1959, № 89, арт. 37-րդ; Крупнов Е. 1948, № 18, № 10; Վինոգրադով Վ. 1963, № 212-213; Առաքիզ Ա., Նիկոլայշվիլ Վ. 1986, арт. 62-րդ, № 6):

Միակ աշխարհագրական տարածքն, ուր ընդհանրապես չեն հանդիպում այս տարրերակին վերաբերող դրոշն-կնիքները՝ Աֆրիկայի հյուսիսարեւելյան հատվածն է /Եգիպտոսը/:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ /ար. 9/:

Այս տարրերակը կազմում են պատկերային հորինվածքներով դրոշն-կնիքները:

Ժամանակագրական առումով սրանք հաջորդում են առաջին տարրերակի դրոշն-կնիքներին, սակայն ի տարրերություն վերջինների, ավելի սահմանափակ աշխարհագրական ընդգրկում ունեն: Այս տարրերակի ամենավաղ օրինակները վերաբերում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 1-ին կեսին եւ հայտնի են Միջագետքից, ուր նրանք շարունակում են կիրառվել նաև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ընթացքում /Buchanan B. 1981, № 20-21, № 52, 53, № 26-27, № 80, 82, № 29-30, № 86; Brentjes B. 1983, № 23-24; Legrain L. 1936, № 297; Christian V. 1940, арт. 146, № 2/: Ավելի ուշ վկայված չեն (ար. 9, № 1-9, 11, 12, 21):

Մոտավորապես մ.թ.ա. 4-րդ հազարամյակի կեսերից նույն տարրերակին վերաբերող դրոշն-կնիքներ հայտնվում են նաև Սիրիա-Պաղեստինյան աշխարհում /Թեփե Գավրա/, սակայն լայն տարածում չեն ստանում այստեղ (ար. 9, № 8, 10): Ավելի ուշ շրջանի նյութերում բացակայում են /Buchanan B. 1981, № 26-27, № 81; Brentjes B. 1983, № 22; Tobler A. 1950, № 123/:

Հաջորդ տարածաշրջանը, ուր մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներում հաստատագրված են այս տարրերակին պատկանող դրոշն-կնիքները՝ Իրանական սարահարթն է /Թեփե Յահյա/ /Buchanan B. 1981, № 24-25, № 74; Lamberg-Karlovsky C. 1971, № 87-96, № 2c; Brentjes B. 1983, № 30/(ար. 9, № 13, 16):

Վերջին տարածքն, ուր վկայված են այս տարբերակին վերաբերող դրոշմ-կնիքներ՝ Յայկական լեռնաշխարհն է: Սակայն ի տարբերություն նախորդ շրջանների, այստեղ հանդիպող դրոշմ-կնիքները շատ ուշ դրսեւորում ունեն եւ կիրառության մեջ են մտնում այն ժամանակ, երբ Մերձավոր Արեւելքի մյուս տարածքներում նրանք վաղուց արդեն դուրս են եկել օգտագործումից: Դիմնականում վերաբերում են Կանտոսայի (Ուրարտու) թագավորության ժամանակներին /Պոտրովսկի Բ. 1944, էջ 276, նկ. 88/ (աղ. 9, նկ. 17-20):

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ /աղ. 10-15/:

Այս տարբերակը կազմում են տեսարանային հորինվածքներով կնիք-դրոշները: Այս տարբերակի ամենավաղ օրինակները, որ գլխավորապես պարզ տեսարաններով կնիք-դրոշներ են, հանդես են գալիս մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջերից: Դրանք հիմնականում կենդանու եւ երկրաչափական որեւէ պատկերի համադրումներ են, իրար հաջորդող, երբեմն նաև հակադիր կամ գլխիվայր կանգնած կենդանիների շարքեր: Նման դրոշմ-կնիքները կազմում են մի մեծ խումբ, որ ժամանակին հանալրել են մասնավոր հավաքածուները կամ գնումների եւ աճուրդների միջոցով ձեռք բերվել աշխարհի խոշորագույն թանգարանների կողմից: Նրանց մեջագույն մասի հայտնաբերման ստույգ վայրն անհայտ է /գանձախույզները հաճախ միտումնավոր կեղծել են հայտնաբերման նանրամասները/: Ամեն դեպքում բոլոր այդ դրոշմ-կնիքները եւ տարածքային, եւ ժամանակագրական առումով չեն հեռանում Միջագետքի եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհի սահմաններից (աղ. 10, նկ. 1-21): Այդ մասին վկայում են ինչպես դաշվածքների սյուժեներն, այնպես էլ դրոշմ-կնիքների ձեւն ու նյութը: Բարեբախտաբար նրանց մի փոքր մասն այնուամենայնիվ անձնագիր ունի եւ ոչ միայն հաստատում է իրենց միջագետքան - սիրիապաղետինյան պատկանելությունը, այլև կոնկրետ հուշարձաններ մատնանշում /Խիպպուր, Թելլո, Բարելոն, Թեփե-Գավրա, Թել Բրակ, Գամիշլի-Մժբին/: Քննարկվող ժամանակահատվածում /մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակների սահմանագիր/ Դիմ Արեւելքի մյուս շրջաններում եւ Միջերկրական ավագանում նման պարզ հորինվածքներով դրոշմ-կնիքներ մեզ հայտնի չեն:

Մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմանագծում Սիրիա-Պաղեստինյան աշխարհում քննարկվող տարբերակի դրոշմ-կնիքների պարզ հորինվածքներն աստիճանաբար փոխարինվում են ավելի բարդ սյուժեներով: Սրանք կնիքների այլ տեսակների հետ զուգահեռաբար շարունակվում են գործածվել Սիրիա-Պաղեստինյան աշխարհում /Թեփե Գավրա, Թիլ Բարսիր, Թել Բրակ/ նաև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ողջ ընթացքում /Frankfort H. 1935, նկ. 22, 30; Tobler A. 1950, էջ 92; Amiet P. 1961, աղ. 2, նկ. 57/: Այստեղ գերակշռող սյուժեն որսի, հոշուման եւ արարողության տեսարաններն են: Կնիքները պատրաստված են օճառաքարից (ստեատիտ), օճաքարից, կրաքարից, մարմարից, ավելի հազվադեպ կավից: Նույն

պատկերը նկատվում է նաև Միջագետքում (Ուր, Ուրուկ, Զենդեթ-Նասր) /Buchanan B. 1981, էջ 22-23, Ակ. 61, 63, էջ 24-25, Ակ. 70, 72, 73, 75, 77, էջ 32-33, Ակ. 98-100; Legrain L. 1951, Ակ. 633/: Այստեղ եւս կնիքների այլ տեսակների հետ բարդ տեսարաններով կնիք-դրոշմները շարունակում են կիրառվել նաև մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Նրանք կապված գլանաձեւ կնիքների լայն տարածման հետ, բավական սակավաթիվ են դառնում Միջագետքի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի հուշարձաններում եւ կրկին որոշակի կշիռ ծեռք բերում մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին՝ նոր Ասուրական թագավորության ժամանակաշրջանում /Porada E. 1948, Ակ. 789, 790, 805; Parker B. 1955, Ակ. 11, 13; Parker B. 1962, Ակ. 6; Osten H. 1936, Ակ. 140/:

Ընդհանուր առմամբ մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմաններում բարդ տեսարաններ ունեցող հորինվածքներով դրոշ-կնիքները սկսում են երեւան գալ նաև Յին Արեւելքի մյուս շրջաններում եւ Միջերկրականի ավագանում: Ըստ որում, նշված աշխարհագրական տարածքներից յուրաքանչյուրում դրոշ-կնիքներն օժտվում են տեղական առանձնահատկություններին բնորոշ մանրանասներով (որոշակի նյութ, ինքնատիպ ծեր, հատուկ սյուժե):

Փոքր Ասիայում այս տարրերակին պատկանող դրոշն-կնիքները (աղ. 11, Ակ. 1-13) հանդես են գալիս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից (Տրոյա, Բեյչեսուլքան, Տարսոն, Բիթ-Մերսին, Սարաջ) /Bossert H. 1942, Ակ. 326; Brentjes B. 1983, էջ 24, 36-39/: Նրանց վաղ օրինակները հիմնականում կրկնում են սիրիապաղեստինյան եւ միջագետքյան սյուժեները: Սակայն, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդից (ըստ ամենայնի ի շնորհիվ խեթական գործողի) այստեղ (Բողազքյո, Կարահույուկ, Ազեմհույուկ) տարածում է ստանում դրոշ-կնիքների տեսարանային հորինվածքներով դաջվածքների նոր տեսակ՝ վազող պարույրների, երկգլխանի արծվի, եղջերվի, ցուլի, ձկնիրան թռչունների, թեւալոր հրեշների, զենքների եւ ճարտարապետական կառույցների մանրանասների բարդ համադրումներով /Bittel K. 1959, աղ. 71; Mellaart J. 1978, էջ 51; Özgür N. 1980, աղ. 3-րդ, Ակ. 36; Մակկան Ջ. 1983, էջ 81, Ակ. 28; Գերհի Օ. 1987, էջ 178-181, Ակ. 10, 11/: Նման ինքնատիպ տեսարաններով դրոշ-կնիքները մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին, Յին Խեթական թագավորության ժամանակաշրջանում, լայն տարածում են ստանում Փոքր Ասիայում, աստիճանաբար դուրս մղելով կնիքների այլ տեսակների (հատկապես գլանաձեւ կնիքների) կիրառությունն այս տարածքից: Իսկ այն բանից հետո, երբ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից պատմական թատերաբեմ է բարձրանում նոր Խեթական թագավորությունը, վերոհիշյալ դրոշ-կնիքները դառնում են խեթական թագավորների եւ ազնվատոհմիկների անձն ու իշխանությունը հաստատող կարեւոր խորհրդանշաններ:

Եգեյան աշխարհում այս տարրերակի դրոշն-կնիքները հանդես են գալիս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից եւ հատկապես տարածում ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակում (աղ. 11, Ակ. 14-20): Նրանք վկայված են կրետեի /Ֆեստոս,

Մալիա, Մոխլոս, Կնոսոս, Գուլբենիա, Ագիա-Մարինա/, Եգեյան կղզիների /Հռոդոս, Զակրոս, Փրեսոս/ եւ Բավկանյան թերակղզու /Վաֆիո, Միջենե, Պիլոս, Լերնա, Սեսկլո, Նեմեա/ հնագիտական հուշարձաններում /Brentjes B. 1983, էջ 41-46; Matz F. 1928, աղ. 12-րդ, նկ. 1; Kehnscherper G. 1973, էջ 14, 43, 91; Bossert H. 1942, նկ. 223/: Այստեղ հանդիպում են Երկրաչափական եւ կենդանական, բուսական եւ կենդանական, որսի, մենամարտի, սպորտային, արարողության եւ այլ ինքնատիպ հորինվածքներով դաշվածքներ: Տեսարանների կառուցման եւ իմաստային ժամրաբեռնվածության առումով այս դաշվածքները չեն կրկնում Մերձավոր Արևելքի որեւէ շրջանի սյուժեները եւ տեղի կնքագրության արդյունք են: Կնիքները պատրաստված են մեղեսիկից (ամերիստ), սարդիոնից, հասպիսից (յաշմա), հազվադեպ օճառաքարից եւ օճաքարից: Ի տարբերություն առաջավորասիական դրոշն-կնիքների, որոնք հիմնականում անց են կացվել թելի վրա ու կրվել վգից կամ թելից կախված վիճակում, վերոհիշյալ օրինակների մի մասն ագուցվել են ոսկուց պատրաստված մատանիների վրա:

Հյուսիս-արեւելյան Աֆրիկայում (Եգիպտոս, Նուբիա) ամենավաղ դրոշն-կնիքներն ի հայտ են գալիս մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսին (Եգիպտոսի 4-րդ եւ 5-րդ հարստությունների ժամանակաշրջանում) եւ վկայված են Քառ, Քաղաքի եւ Մոստագեղդա հնավայրերի պեղումներից /Brentjes B. 1983, էջ 32-33/: Նրանցում Երկրաչափական հորինվածքներով դաշվածքներն ընդհանրապես քացակայում են, իսկ առաջին պարզ տեսարանները (Երկրաչափական եւ բուսական, խնբային կենդանական, որսի) կրում են սիրիապահեստինյան եւ միջագետքային դաշվածքների ազդեցությունը /Engelbach R. 1915, նկ. 97, 117, 129; Frankfort H. 1924, նկ. 14; Jequier G. 1929, նկ. 91; Кинк X. 1976, էջ 52-54/: Մոտավորապես մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծում, Եգիպտոսի 12-րդ հարստության փարավոնների ժամանակներից սկսած, Հյուսիս-արեւելյան Աֆրիկայում աստիճանաբար տարածվում են քննարկվող տարբերակին պատկանող դրոշն-կնիքների ինքնատիպ օրինակներ (աղ. 12, նկ. 1-21): Մասնագիտական գրականության մեջ դրանք հայտի են «կոյարզեզ» (սկարաబեյ) անվամբ /Bonnet H. 1952, էջ 720-922; Brunner-Traut E. 1965, էջ 570-580; Hall H. 1929; Rühlmann G. 1968, էջ 2-10/: Վերջիններս օճառաքարից, լազուրիտից, փղոսկրից, ջնարակած քարից կամ կավից եւ այլ նյութերից պատրաստված, թեւերը հավաքած քեզի տեսք ունեցող դրոշն-կնիքներ են, որ իրանի ստորին հարթ հատվածի վրա կրում են Երկրաչափական եւ կենդանական, կենդանական եւ բուսական, կենդանական եւ մարդկային, որսի, խոշտանգման, ծիսական, արստրակու եւ այլ պատկերների համադրումներով տեսարաններ: Նրանք լայն տարածում են ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին (Նավկրատիս, Էֆու, Թերե, Սաքքարա, Նազա-Էղ-Ղեր, Աբիդոս, Աբուսիր Էլ-Մելեք եւ այլն), իսկ Եգիպտոսի հյուքսոսյան նվաճման ժամանակաշրջանում կիրառություն են գտնում նաեւ վերջիններիս ռազմաքաղաքական ազդեցության ոլորտներում գտնվող շրջաններում Կարթագենում, Նուբիայում, Սիրիա-Պաղեստինյան աշխարհում, Հյուսիսային

Միջագետքում եւ անգամ Հայկական լեռնաշխարհում /Albright W. 1954, էջ 86-87, աղ. 15; Galling K. 1941, նկ. 16, 91; Menant J 1886, նկ. 257, 258, 263, 266; Brentjes B. 1983, էջ 50-53; Vanden Berghe L., Meyer L. 1983, էջ 234, նկ. 224/: Այս ժամանակներից կոյարգեց դրոշն-կնիքները դարնում են փարավոնների, թագաժառանգների, փոխարքաների, ազնվասուհիների, վաճառականների եւ արհեստավորների, անձն ու իշխանությունը հաստատող խորհրդանշաններ իրենց դերն ու նշանակությունը չկորցնելով նաեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի ընթացքում:

Իրանական սարահարքում (աղ. 13., նկ. 1-11) այս տարբերակին պատկանող դրոշն-կնիքներն ի հայտ են գալիս մ.թ.ա. 4-րդ հազարամյակից (Շնչ, Զաֆարաբադ, Սիալկ 3-րդ, Թալի-Բակուն) /АЗԱ 1986, էջ 94, նկ. 19; Brentjes B. 1983, էջ 20; Le Brenton L. 1956, նկ. 2; Amiet P. 1961, աղ. 5, նկ. 104; Dollfus G. 1973, էջ 10-25/: Սյուժենտային ժամրաբեռնվածությամբ սրանը հիմնականում կրկնում են միջագետքյան դրոշն-կնիքների տեսարանները (Երկրաչափական եւ կենդանական, կենդանիների շարքերի, կենդանական եւ բուսական համադրումներ): Քիչ ավելի ուշ, նոտավորապես մ.թ.ա. 4-րդ հազարամյակի կեսերից, երեւան են գալիս նաեւ բարդ տեսարաններով (իրս, Երկրաչափություն, ծիսակատարություն եւ այլն) դրոշն-կնիքներ /Le Brenton L. 1956, նկ. 12; Անտոնովա E. 1991, էջ 4, նկ. 1/: Այստեղ եւս դրոշն-կնիքները պատրաստված են օճառաքարից, օձաքարից, կրաքարից, սարողնից, երբեմն նաեւ կավից: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակից Իրանական սարահարքում տարածում ստացած գլանաձեւ կնիքներն աստիճանաբար կիրառությունից դուրս են նղում դրոշն-կնիքները: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի հուշարձաններում նրանք խիստ հազվադեպ են /Sumner W. 1974, նկ. 12d/:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում քննարկվող դրոշն-կնիքները հայտնվուն են նաեւ Արաբական թերակղզում (հատկապես Պարսից ծոցին հարող տարածքներում) /Mortensen P. 1964, էջ 385-397, նկ. 8; Buchanan B. 1967, էջ 104-107, նկ. 3; Բնիբն Ջ. 1984, էջ 349; Brentjes B. 1983, էջ 24-25, 33; Al-Gailiani Werr L. 1988, էջ 11, նկ. 28/: Վաղ (պարզ տեսարաններով) դրոշն-կնիքների բացակայությունը, բարդ սյուժենով օրինակների միանգամից ու հանկարծակի հանդես գալն, ինչպես նաեւ կնիքների բավական կատարյալ ծեւը բույլ են տալիս ենթադրել, որ վերջիններս, մշակութային կապերի (հավանաբար միջագետքյան) ազդեցության արդյունք են (աղ. 12, նկ. 22-26): Այս ենթադրությունը հաստատվում է ոչ միայն հորինվածքային առանձնահատկությունների ընդհանրությամբ, այլև միջագետքյիների կողմից Մասկատի (Օման) մոտ գտնվող օճառաքարի հարուստ հանքավայրերի շահագործմամբ: Չումք, որը Հին Արեւելքում եւ հատկապես Միջագետքում օգտագործվում էր կնիքների արտադրության ժամանակ /During Caspers E. 1971, էջ 24/: Այստեղ եւս, գլանաձեւ կնիքների տարածումով, դրոշն-կնիքները աստիճանաբար դուրս են գալիս կիրառությունից մ.թ.ա. 2-րդ հազարամյակում:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում քննարկվող տարբերակին պատկանող դրոշն-կնիքները տարածում են ստանում նաեւ Միջին Ասիայում /Carihaniidi

Բ. 1976, էջ 42-68; Անտոնովա Ե. 1983, էջ 13-32, 144, աղ. II; Brentjes B. 1983, էջ 30-31/ (աղ. 13, նկ. 12-14), ինչպես նաև Ինդոսի հովտում (Յարապպա, Մոհենջո Դարո) /A3A 1986, էջ 158-159, նկ. 39/: Իրենց հորինվածքային տեսարաններով նրանց վաղ օրինակները կրում են Միջագետքի եւ Իրանական սարահարթի ազդեցությունը, իսկ ավելի ուշ թվագրում ունեցողները (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանափակը) օժտվում են ինքնատիպ սյուժեով (ուղտերի, փողի, ռնգեղջյուրի պատկերներ), որը տեղական առանձնահատկությունների արդյունքն է: Պատրաստվել են կրաքարից, ագարից, օճառաքարից, լազուրիտից, բրոնզից, փողոսկրից եւ այլ նյութերից:

Տեսարանային հորինվածքներով կնիք-դրոշմները հանդիպում են նաև Յայկական լեռնաշխարհում, սակայն ի տարրերություն վերը հիշատակված տարածաշրջանների, այստեղ նրանք քանակական առումով անհամեմատ քիչ են եւ ժամանակագրական առումով բավական ուշ: Բանն այն է, որ մինչ օրս Յայկական լեռնաշխարհի տարածքից հայտնի չեն տեսարանային հորինվածքներով դրոշմ-կնիքների վաղ (մ.թ.ա. 4-2-րդ հազարամյակներին պատկանող) օրինակներ: Սա կարող է երկու հիմնական բացատրություն ունենալ. ա) Յայկական լեռնաշխարհին բնորոշ չեն այս տարրերակին պատկանող դրոշմ-կնիքները (հանգամանք, որը խիստ վիճելի է, նկատի ունենալով հարակից շրջաններում նրանց լայն տարածվածությունը), բ) դրանք առայժմ չեն հայտնաբերվել տարածքի հնագիտական առումով խիստ անբավարար ուսումնասիրվածության պատճառով:

Չեզրի տակ առկա հնագիտական նյութը վերաբերում է միայն մ.թ.ա. 1-ին հազարամյակին եւ հայտնաբերվել է վանտոսայան հուշարձաններից (Յակկո, Կարմիր բլուր, Երեբունի, Օշական, Երեւան, Սարուխան, Բաստամ): Սրանք առավելապես կշռաբարի տեսքով (Երեբունի կոնաձեւ) դրոշմ-կնիքներ են եւ հիմնականում ներկայացնում են պարզ տեսարաններ (Երկրաչափական եւ կենդանական, կենդանական եւ աստրալ, կենդանական եւ բուսական եւ այլն) /Պոյտրովսկի Բ. 1944, էջ 276, Պոյտրովսկի Բ. 1952, նկ. 16, 22, 23; Մարտիրոսյան Ա. 1961, էջ 134, նկ. 59; Խօճաշ Ս., Տրոխանովա Հ., Օգանեսյան Կ. 1979, էջ 139, աղ. 128; Եսայն Ս., Կալանտարյան Ա. 1988, աղ. 54-րդ, նկ. 7; Եսայն Ս., Բնյաց Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, աղ. 21-րդ; Barnett R. 1959, էջ 17, նկ. 15; Van Loon M. 1966, էջ 161, նկ. 21; Vanden Berghe L., Meyer L. 1983, էջ 234-235, նկ. 225-228; Brentjes B. 1983, էջ 47-48; Ռնգեղիքարյան Ն. 1991, էջ 67-68/ (աղ. 14-աղ. 15):

Իրենց տեսարանային հորինվածքներով նրանք հետաքրքիր գուգահեռներ ունեն ասսուրական եւ ուշ խեթական նյութերում: Պատրաստվել են գագատից (գիշերաքար), օնիքսից, քաղկեդոնիտից, կրաքարից, մարմարից, բրոնզից եւ այլն:

Այս տարբերակը կազմում են արձանագիր (սեպագիր, հիերոգլիֆ) տեսքերով դրոշմ-կնիքները: Նրանք հիմնականում ուղեկցվում են երկրաչափական, կենդանակերպ, բուսական, արստրակտ, ինչպես նաև տեսարանային հորինվածքներով: Այս դրոշմ-կնիքները հայտնվում են նոտավորապես մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծում, կոնկրետ անձ, երեւույթ կամ գործողություն մատնանշող տեքստ են պարունակում եւ, ըստ էռերյան, կապված են պետության ինստիտուտի ձեւավորման հետ: Այս առումով պատահական չէ, որ արձանագիր տեքստերով ամենահին դրոշմ-կնիքները հանդես են գալիս Եգիպտոսում՝ տարածք, ուր առավել վաղ են սկսում ձեւավորվել պետականության սաղմերը: Եթե Միջին թագավորության ժամանակաշրջանում (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջ - մ.թ.ա. 17-րդ դ.) դրոշմ-կնիքները բարձրաստիճան անձանց, քրնական դասի եւ առեւտրականների ինքնությունը հաստատող առարկաներ էին, ապա նոր թագավորության ժամանակներից (մ.թ.ա. 16-12-րդ դ.դ.) դառնում են բացառապես Եգիպտական փարավոնների եւ նրանց կանանց մենաշնորհը /Խօճառ C. 1976, էջ 85-114; Խօճառ C. 1985, էջ 53-59/: Պահպանվել են Յահմես 1-ինի եւ նրա կնոջ՝ թագուհի Նեֆերտիրիի, Ամենհոտեպ 1-ինի, Թութմոս 1-ինի եւ նրա կնոջ Յահմեսի, թագուհի Յարշեպսուրի, Թութմոս 3-րդի, Ամենհոտեպ 2-րդի, Ամենհոտեպ 3-րդի եւ նրա կնոջ՝ Թիայի, Ամենհոտեպ 4-րդի (Եխնաթոն), Եթի, Յորիմհերի, Սերի 1-ինի, Ոամզես 2-րդի եւ նրա կնոջ՝ Նեֆերտիրիի, Սերի 2-րդի, Ոամզես 3-րդի (18, 19 եւ 20-րդ հարստություններ) եւ այլոց անձական կոյաբզեզ դրոշմ-կնիքները /Gauthier H. 1910, էջ 182-252; Petrie F. 1917; Պոտրովսկий Բ. 1958, էջ 21; Խօճառ C. 1976/ (աղ. 16, նկ. 1-24): Դարերի ընթացքում նշակած ավանդույթի համաձայն, այս կոյաբզեզների դրոշմող մակերեսն ուներ հիմնականում ձվածիր (էլիպսաձեւ), հազվադեպ՝ ուղղանկյուն մակերես, որի վրա փորագրված տեսարանների միջնամասում, խորադիր շրջանակի մեջ կրում էր փարավոնի կամ թագուհու անունը: Կոյաբզեզները պատրաստվում էին օճառաքարից, կվարցից, լազուրիտից, հասպիսից, ագաթից, սարդոնից, թերթաքարից, նեֆրիտից, հենատիտից, կրաքարից, պավազքարից, երբեմն նաև կավի շաղախից եւ հաճախ պատվում էին դեղնագույն, կանաչավուն, փիլուզագույն եւ հազվադեպ նաև բաց դարչնագույն ջնարակով:

Հիերոգլիֆ (պիկտոգրաֆիկ) տեքստով դրոշմ-կնիքները մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում հայտնվում են նաև Ինդոսի հովտում (Յարապպա, Մոհենջո-Դարո) /Mackay E. 1938; AZA 1986, էջ 156-159, նկ. 38, 39; Masson B. 1989, էջ 197-198, նկ. 51; Brentjes B. 1983, էջ 25-27/: Սրանք հիմնականում առնչվում են այսպես կոչված հարապյան քաղաքակրթության հետ եւ ունեն ուղղանկյուն դրոշմող մակերես՝ փորագրված տեսարանի վերեւում գետեղված տեքստով (գրեր, որ մինչ այժմ վերծանված չեն, թեև լեզվաբանները նրանցում առանձնացրել են շուրջ 350 պիկտոգրաֆիկ նշաններ եւ պարզել, որ վերջիններս ընթերցվել են աջից ձախ): /Հակո Ս. 1985, էջ 32-

35/: Ուշագրավ է, որ մոտավորապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդին, հարավյան քաղաքակրթության անկման հետ (իրադարձություն, որ ուսումնասիրուների մի մասը բացատրում է հնդարիհական էթնիկական տարրի դեպքի արեւելք կատարած տեղաշարժով), անհետանուն են նաև ըննարկված դոդչ-կնիքները (աղ. 18, Ակ. 13-16):

Հավանաբար տուրք տալով ժամանակի նորանուժությանը եւ ցանկանալով ես չմնալ իրենց հզոր ախոյան եգիպտոսից, դրոշմ-կնիքները սեպագիր տեքստերով սկսեցին զարդարել նաեւ նոր խեթական թագավորության տիրակալները (Խուուժիա, Մուլպաթալի, Թուլփալիա, Խաթթուսիլի 3-րդ, Սուպիլիումիա 2-րդ, Մուրշիլ 2-րդ, Պուղուխեպա, Արնուվանդա) /Մակկուն Ջ. 1983, էջ 80-84, նկ. 28, 29; Գերի Օ. 1987, էջ 178-179, 181-182, նկ. 10, 11; Brentjes B. 1983, էջ 36-39/: Մրանք, ի տարբերություն Եգիպտական կոյաբգեզների, իհմնականում շրջանաձև կամ ուղղանկյուն դրոշմոյ մակերեսին արված փորագիր պատկերներով ու սեպագրով, ինչպես նաեւ վեր բարձրացվող ելուստ-բռնակով օրինակմեր կեն պատրաստված ուկուց, արծարից, բրոնզից, կիսաթանկարժեք քարերից (աղ. 17, նկ. 1-12, աղ. 18, նկ. 1-10): Եթե՛ Եգիպտական դրոշմ-կնիքներում փորագրված տեսարանը գրադեցնում էր դրոշմի ողջ մակերեսը, իսկ թագավորի անունն ու տիտղոսը վերցվում էր ծվածիր շրջանակի մեջ եւ տեղադրվում մոտավորապես նրա կենտրոնում, ապա խեթական կնիքներում դրոշմի ողջ կենտրոնական հատվածը գրադեցնում էր տեսարանը, իսկ թագավորի անունը եւ տիտղոսը կրող տեքստը երկու կամ երեք գոտիներով շրջագծում էր այն: Ինչպես Եգիպտոսում, այստեղ եւս նաև դրոշմ-կնիքներ կրելու իրավունքը պատկանում էր քացառապես խեթական թագավորներին եւ թագուհիներին: Ահա թե ինչու մասնագիտական գրականության մեջ նրանք հաճախ անվանվում են «Քարարնա» եւ «Քավանանա» (խեթերեն թարարնա՝ «թագավոր», թավանանա՝ «թագուհի») տերմիններով /Մակկուն Ջ. 1983, էջ 82-83/:

Ըստօրինակելով խեթական բագավորներին, «քարարնա» տիպի դրոշն կնիքներ սկսեցին գործածել նաեւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհի նրանց վասալները՝ Կարքեմիշի, Ալալախի, Ուգարիթի տիրակալներն ու Վերջիններիս մերձավորները (Ուրիշ-Թեշուր, Նիզմ-Աղոլ 2-րդ, Ամիստամբուր, Շարելի, Թախուվի եւ այլոք) /Մակկուն Ջ. 1983, էջ 81, նկ. 29; Ռիֆման Ի. 1987, էջ 80-81, նկ. 3; Schaeffer C. 1956, նկ. 106; Գերի Օ. 1987, էջ 179, աղ. 11, նկ. 4; Brentjes B. 1983, էջ 40/ (աղ. 18, նկ. 2, 4-6, 11, 12): Խեթական ինքնատիպ կնքագործությունը Փոքր Ասիայում եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհում գոյատեւեց մինչեւ Խեթական պետության անկումը, որից հետո Պաղեստինում եւ Հյուսիսային Սիրիայում ձեւավորված նոր բագավորություններում կիրառության մեջ մնացին հիմնականում գլանաձեւ կնիքները:

Հաջորդ աշխարհագրական տարածքը,ուր տարածում ստացան արձանագիր տեքստերով դրոշմ-կնիքները՝ Միջագետքն է: Նրանք ժամանակագրական առումով անհամեմատ ուշ են եզիպոտական եւ խեթական օրինակներից: Բանն այն է, որ նորեզիպոտական եւ նորիսեթական թագավորութ-

յուների հետ գրեթե միաժամանակ Միջագետքում ձեւավորված Կասսիական Բարելոնը, իսկ մ.թ.ա. 13-րդ դարից նաեւ Ասորեստանը (ինչպես ցույց է տալիս հնագիտական նյութը) կարծես թե ձեռնպահ մնացին սեպագիր տեքստերով դրոշն-կնիքների օգտագործումից, գերադասությունը տալով գլանաձեւ կնիքներին: Միայն մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին, այնուամենայնիվ, Ասսուրական թագավորությունում հայտնվում են (թեեւ երբեք գերիշխող դիրք ձեռք չեն բերում) նաեւ դրոշն-կնիքները (աղ. 18, նկ. 17, 18): Մասնավորապես այդ են վկայում հյուսիսային Սիրիայի գտածոները /Sachs A. 1953, աղ. 18-րդ, նկ.1/: Իրենց հորինվածքային առանձնահատկություններով նրանք ինչ-որ չափով հիշեցնում են երբեմնի նոր հեթական թագավորության դրոշն-կնիքները (տեսարանը՝ դրոշնի կենտրոնում, տեքստը՝ շուրջըլորը): Տարբերվում են սյուժեի պարզությամբ եւ պատկերների առավել ռեալիստական մեկնաբանմամբ: Այս տարբերակի ասսուրական դրոշն-կնիքների շարքում մենք նպատակահարմար ենք գտել քննարկել նաեւ Յայկական լեռաշխարհի արեւելյան հատվածում (Արցախ՝ Խոջալու) հայտնաբերված եւ «Աղաղնիրարի» ասսուրական անձնանունը կրող ազարե սեպագիր «ուլունքահատիկը» (այն ըստ ամենայնի դրոշն-կնիքի դեր է կատարել) (աղ. 18, նկ. 19): Ժամանակին ուսումնասիրողների գաղի մասը նրա պատկանելության եւ պատրաստման ժամանակաշրջանի վերաբերյալ արտահայտել են իրարամերժ կարծիքներ, այն հաջորդաբար վերագրելով ասսուրական զահին մ.թ.ա. 14-8-րդ դարերում իշխված եւ Աղաղնիրարի անունը կրող, չորս թագավորներից յուրաքանչյուրին /Մեշանին Ի. 1926, էջ 6-7; Մեշանին Ի. 1926ա; Պասսեկ Տ., Լատինին Բ. 1926, էջ 15-21; Պասսեկ Տ., Լատինին Բ. 1926ա, էջ 19; Պուտրովսկի Բ. 1949, էջ 68; Նարիմանով Ի. 1958, էջ 103; Խալիլով Դ. 1959, էջ 126; Ջաֆարզադե Ի. 1941, էջ 22-24; Դյակոնով Ի. 1949, էջ 84; Դյակոնով Ի. 1951, էջ 302-303; Մարտirosյան Ա. 1961, էջ 54; Մարտirosյան Ա. 1964, էջ 91; Կյանքարևա Կ. 1970, էջ 121/: Ըստ Վ. Ստրուվեի եւ Վ. Շիլեյկոյի վերծանման, «ուլունքահատիկի» վրա փորագրված է հետեւյալ տեքստը «Աղաղնիրարի տիեզերքի տիրակալի պալատ» /Մեշանին Ի. 1926, էջ 108-109; Կազիև Մ. 1958, էջ 69/: Նկատի ունենալով այն հաճամանքը, որ «ուլունքահատիկը» հավանաբար օգտագործվել է որպես դրոշն-կնիք (ինչը մասնավորապես մատնանշում է նաեւ սեպագիր տեքստը) կարելի է պնդել, որ այն չէր կարող պատկանել Աղաղնիրարի 1-ինին (մ.թ.ա. 1307-1275 թ.թ.), քանի որ (ինչպես նշեցինք վերեւում) վերջինիս ժամանակներում դրանք չէին կիրառվում (եւ ընդհանրապես տարածված չէին) ասսուրական արքունիքում: Ուլունքահատիկը չէր կարող պատկանել նաեւ Շամաշիահաղ 5-րդի որդի Աղաղնիրարի 3-րդին (մ.թ.ա. 810-783 թ.թ.), ինչպես նաեւ Աղաղնիրարի 4-րդին (մ.թ.ա. 763-755 թ.թ.), քանի որ, ինչպես վկայում են սեպագրի մասնագետները, «ուլունքահատիկ» վրայի սեպագիր տեքստի ստորին՝ երրորդ տողի վերջում փորագրված սեպանշանը Աշշուրենասիրապալ 2-րդից հետո (մ.թ.ա. 889-859 թ.թ.) այդ ձեւով այլեւս չի հանդիպում ասսուրական տեքստերում: Ստացվում է, որ

միակ հավանական թեկնածուն Աղաղնիրարի 2-րդն է (մ.թ.ա. 911-891 թ.թ.), Աշշուրդան (Աշշուրդայան) 2-րդի որդին: Նրա օրոք տարածված են Եղել ինչպես սեպագիր տեքստերով ասսուրական դրոշմ-կնիքներն, այնպես էլ քննարկված սեպանշանի գրելաձեւը: Աղաղնիրարի 2-րդի օգտին խոսող երրորդ փաստարկը Խոջալուի 11-րդ դամբարանաբլրից սեպագիր «ուլունքահատիկի» հետ հայտնաբերված սակավաթիվ հնագիտական նյութերն են, որոնք կարող են տեղափորվել մ.թ.ա. 10-9-րդ դարերի ժամանակագրական սահմաններում:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհում տարածում գտած արձանագիր տեքստերով դրոշմ-կնիքներին, ապա դրանք, Մեծամորից հայտնաբերված (ըստ հնագետ է. Խանզադյանի բանավոր հաղորդման) եւ Թութմու 3-րդի (մ.թ.ա. 16-րդ դարի վերջ - մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին քառորդ) հիերոգլիֆ տեքստը կրող կոյաբգեզից զատ, բացառապես կապված են Վանտոսպի թագավորության գոյաշրջանի հետ: Ըստ որում, առ այսօր վանտոսպի հուշարձաններից հայտնաբերվել են միայն նրանց արտատպությունները կամ դաշվածքները (աղ. 19 - աղ. 20): Դրանք մասնավորապես պահպանվել են արծաթի բրոնզե բասերի հատակներին եւ վերաբերում են Վանտոսպի թագավորության տիրակալներ Իշպուհնիին (մ.թ.ա. 830-810 թ.թ.), Սենուային (մ.թ.ա. 810-786 թ.թ.), արքայազն Ինուչպուային, Սարդուրի 2-ին (մ.թ.ա. 764-735 թ.թ.) եւ Ոուսա 2-ին (մ.թ.ա. 685-645 թ.թ.): Իրենց հորինվածքային առանձնահատկություններով նրանք (ինչպես ասսուրական դրոշմ-կնիքները) հիշեցնում են Նոր Խեթական թագավորության օրինակները եւ արվել են Նույն սկզբունքով՝ պատկերը կամ տեսարանը դրոշի կենտրոնում, իսկ մեկ կամ երկու շարք սեպագիր տեքստը՝ շուրջբուլորը /Պիոտրովսկի Բ. 1952, էջ 55-61, աղ. 26, նկ.3, աղ. 30, նկ. 1, աղ. 32, նկ. 1; Piotrovsky B. 1970, էջ 151-152, նկ. 97; Vanden Berghe L., Meyer L. 1983, էջ 190-191, նկ. 146-148; Calmeyer P. 1991, էջ 318-319, նկ. 8/: Հայկական լեռնաշխարհում դրոշմ-կնիքների այս տարրերակը փաստորեն օգտագործվեց միայն Վանտոսպի թագավորության ժամանակաշրջանում եւ նրա անկումից հետո դուրս եկավ կիրառությունից:

Չին Արեւելքի մյուս շրջաններում (Իրանական սարահարթ, Արաբական թերակղզի), ինչպես նաև Միջերկրական ավազանում (Էգեյան աշխարհ, Բալկանյան, Ապենինյան եւ Պիրենեյան թերակղզիներ, Մաորիթ) չնայած մշակութային նկատելի վերելքին, արձանագիր տեքստերով դրոշմ-կնիքները տարածում չստացան:

Այսպիսով, ինի բերելով դրոշմ-կնիքների, վերաբերող շարադրանքը, կարելի է արձանագրել, որ սրանք ամենավաղ տարածում գտած օրինակներն են: Վերջիններիս գործածնան ժամանակաշրջանն ընդգրկում է մ.թ.ա. 7-1-ին հազարամյակները: Հորինվածքային առանձնահատկությունների առումով այս ենթախմբում ներկայացված են բոլոր չորս տարրերակներն էլ: Ըստ որում, եթե առաջին՝ երկրաշափական հորինվածքներով տարրերակը Յին Արեւելքում հիմնականում գոյություն ունի մ.թ.ա. 7-4-րդ հազարամյակների ժամանակագրական սահմաններում եւ մի-

այն էպիգրաֆիկ հանդիպում է մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների հնագիտական համալիրներում (Փոքր Ասիա, Իրանական սարահարթ, Հայկական լեռնաշխարհ), ապա երկրորդ՝ պատկերային եւ երրորդ՝ տեսարանային հորինվածքներով ղորշմ-կնիքները գրեթե միաժամանակ հանդես գալով մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակների սահմանաժին, տարբեր ինտենսիվությամբ (պատկերայինը՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակից էպիգրաֆիկ, տեսարանայինն՝ անընդհատ) շարունակում են իրենց գոյությունը մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը եւ վկայված են Յին Արեւելքի գրեթե բոլոր տարածաշրջաններում: Ինչ վերաբերում է ղորշմ-կնիքների չորրորդ՝ արձանագիր տեքստերով տարբերակին, ապա վերջիններս հանդես են գալիս մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակի սահմանագծից եւ եթե սկզբնապես Եգիպտոսի, Ինդոսի հովտի եւ Փոքր Ասիայի մենաշնորհն էին, ապա մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից կիրառություն են գտնում Միջազգետքում, իսկ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին՝ նաեւ Հայկական լեռնաշխարհի (Վանտոսպի թագավորություն) հնագիտական համալիրներում (աղ. 21):

ԳԼԱԽԱԶԵՎ ԿՆԻՔՆԵՐ (աղ. 22-51)

Այս ենթախումբը կազմում են գլանաձեւ կառուցվածքով կնիքները, որոնք թաց կավի (կամ համանման նյութի) վրա գլորման եղանակով կրկնվող դաշվածքների շարք ստանալուն են ծառայել: Յանդես գալով մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կեսին, փաստորեն աշխարհագրական նույն տարածքում (Միջիա-Պաղեստինյան աշխարհ, Միջագետք), այս կնիքների նախնական օրինակներն անտարակույս կրել են իրենց նախորդած դրոշն-կնիքների անմիջական ազդեցությունը: Այն տարբերությամբ միայն, որ եթե դրոշն-կնիքների մոտ ժամանակագրական առումով նկատվում է հորինվածքային առանձնահատկությունների գարգացում պարզ երկրաչափականից դեպի բարդ տեսարանայինը, ապա վերջիններիս մոտ դրանք հանդիպում են միաժամանակ: Նույն ժամանակաշրջանում, նույն հուշարձանից եւ նույն հնագիտական շերտից հայտնաբերված գլանաձեւ կնիքները կարող են կրել ինչպես պարզ երկրաչափական նշաններ, այնպես էլ բարդ տեսարաններ: Երբեմն հանդիպում են նաև իրար գուգահեռ երկու կամ երեք հորիզոնական գոտիներով (ուժգիստրներով) գլանաձեւ կնիքներ, որոնցում նույն կնիքի վրա գոտիներից մեկը ներկայացնում է պարզ երկրաչափական հորինվածք, իսկ մյուսը (կամ մյուսները) որոշակի սյուժեով օժտված բարդ տեսարան /Buchanan B. 1981, էջ 79, նկ. 211, էջ 91, նկ. 235, էջ 127, նկ. 335, 339, էջ 179, նկ. 460; Collon D. 1987, էջ 22, նկ. 50, 52, 53/: Այլ խորենով, եթե դրոշն-կնիքների դաշվածքներում սյուժեի առկայությունը կամ բացակայությունը որոշակի դեր ունի տվյալ իրի ժամանակագրական պատկանելիությունը պարզելու հարցում, ապա գլանաձեւ կնիքների պարագայում այն դառնում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման (թեեւ ընդհանուր առմամբ, ժամանակին գուգընթաց նկատվում է պարզ երկրաչափական հորինվածքներով գլանաձեւ կնիքների քանակի աստիճանական նվազում):

Ըստ հորինվածքային առանձնահատկությունների այս ենթախումբում հնարավոր է զանազանել երեք տարբերակ:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐՈՎ (աղ. 22-27):

Այս տարբերակին բնորոշ են երկրաչափական նշաններով եւ պատկերներով գլանաձեւ կնիքները:

Կաղագույն օրինակները, որ վերաբերում են նախադիմաստիական ժամանակաշրջանին (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կես) հայտնի են Միջագետքից (Թիֆ, Ուրուկ, Նինվե): Այստեղ նրանք շարունակում են օգտագործվել նաև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ընթացքում (Ուր, Ձեմիեթ-Նասր, Թել-Ալգրաք, Խաֆաջե, Իշալի, Թել Ասմար, Նիպուր, Թելլո, Թել Շարնալ, Թել Մուհամեթ) եւ երբեմն նաև երեւում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբի հուշարձաններում (Արու Սալաբիխ) /Buchanan B. 1966, նկ. 61; Collon D. 1987, էջ 18, նկ. 32; Moortgat A. 1940, նկ. 53; Legrain L. 1951, նկ. 63; Kantor H. 1952, էջ 246, աղ. 27-8η; Buchanan B. 1981, էջ 74, նկ. 203, 204, էջ 88, նկ.

230-231; Lambert W. 1966, էջ 66, աղ. 14-րդ, նկ. 4; Postgate J. 1977, էջ 273, աղ. 31-րդ, նկ. D; CCO 1960, նկ. 3; Frankfort H. 1955, նկ. 702, 762; Parrot A. 1954, նկ. 267; Moorey P. 1979, էջ 111-112, նկ. 3; Al-Gailani Werr L. 1988, նկ. 107-109, 114, 117/: Ավելի ուշ վկայված չեն: Դաշվածքներում հանդիպում են շեղանկյուն ցանց, զիգզագներ, իրար հաջորդող ուղղահայց եւ հորիզոնական գծեր, զուգահեռ կորեր, վարդակներ, շեղագիծ խաչեր, կետեր եւ այլն (աղ. 22-աղ. 23): Պատրաստվել են սպիտակ, կանաչավուն, մոխրագույն եւ դարչնագույն կրաքարից, մարմարից, օձաքարից, ալեբաստրից, օճառքարից, ուկորից, ծովախնցուց եւ հաճախ նաեւ կավից: Որոշ օրինակներ պատվել են ջնարակով:

Սիրիա-Պաղեստինյան աշխարհում եւս քննարկվող տարբերակի գլանածեւ կնիքներն ի հայտ են գալիս մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից եւ լավ հայտնի են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսին (Թել Բրակ, Թել Աչանա-Ալալախ, Թել-Լեյլան, Խարուր) /Collon D. 1982, նկ. 24; Mallowan M. 1947, էջ 134, աղ. 21-րդ, նկ. 7-8; Weiss H. 1981, էջ 24; Collon D. 1987, էջ 20-23, նկ. 41, 51/: Որոշ օրինակներ հանդիպում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով թվագրվող հուշարձաններում (Բեր-Շան 7-8-րդ հորիզոններ) եւ կապված են միտաննիական կնքագրության հետ /Parker B. 1949, նկ. 57/: Դաշվածքները հիմնականում կրկնում են միջագետքյան օրինակների նախշերը: Մրանք եւս պատրաստված են օճառքարից, օձաքարից, կրաքարից, ուկորից, կավից եւ այլ նյութերից: Ավելի ուշ վկայված չեն (աղ. 24, նկ. 1-7):

Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերիս երկրաչափական հորիզոնագծերով գլանածեւ կնիքները սահմանափակ քանակով հայտնվում են նաեւ Եգիպտոսում (աղ. 24, նկ. 8-13): Յիմնականում հանդիպում են Բաղարյան, նախադինաստիական եւ Յին թագավորության ժամանակաշրջանին վերաբերող (մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներ) հուշարձաններում: Ավելի ուշ վկայված չեն: Ուսումնասիրողների զգալի մասը դրանք Եգիպտա-միջագետքյան առեւտրա-տնտեսական եւ մշակութային փոխառնչությունների արդյունք են հանարկում /Kantor H. 1952, էջ 247-248, նկ. 1/: Գերազանցապես պատրաստված են լավ մաղված կավից, երբեմն՝ քարից: Բոլորն էլ պատված են կապտա-կանաչավուն ջնարակով: Միակ արեւելագետը, որ վերոհիշյալ գտածոներին տեղական (Եգիպտական) ծագում է վերագրում, Ա. Շարֆն է /Scharff A. 1927/:

Դաջորդ աշխարհագրական տարածքը, ուր սկսած մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից տարածում են ստանում քննարկվող տարբերակի գլանածեւ կնիքները Իրանական սարահարթն է (աղ. 24, նկ. 14-16, աղ. 25): Դայտնի են նրանք Շիշի, Չոյյա-Զանքիլի (Չոյը Ունքաշ), իսկ մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծում նաեւ Թեփե Գիյանի եւ Զամշիդիի հնագիտական հավաքածուներից /Collon D. 1987, էջ 22, նկ. 43, էջ 68, նկ. 298; Buchanan B. 1981, էջ 89, նկ. 232; Schaeffer C. 1948, աղ. 249, նկ. 23; Al Gailani Werr L. 1988, էջ 11, նկ. 22, 25, 27, 96, 98, 106, 112/: Այստեղ, ի տարբերություն վերը քննարկված տարածքների, երկրաչափական հորիզոնագծերով գլանածեւ կնիքները շարունակում են լայնորեն կիրառվել նաեւ

մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջի (Կաղ Երկարի շրջափուլ) հնագիտական համալիրներում եւ հայտնի են Թեփե Գիյանի, Շահր-ի-Սոխտայի, Մարլիկ թեփեի, Թեփե Միալկ Բ-ի, Մալյանի, Կամբերլանի, Շահ Թեփեի եւ Շասանլու լի պեղումներից /Dyson R., Harris M. 1986, էջ 79-110, Կնիքներ թիվ 26, 34, 38, 38, 41, 44, 49, 51, 54, 66, 74, 76, 96-98, 101, 136-139, 141, 142, 182, 196; Marcus M. 1989, էջ 59, նկ. 13; Contenau G., Ghirshman R. 1935, աղ. 38, նկ. 6; Hakemi A., Rad M. 1950, աղ. 98, նկ. 9; Schmidt E. 1934, էջ 116-179; Sumner W. 1979, աղ. 5; Nicolas I. 1980, էջ 306, աղ. 49, նկ. b, d; Lamberg-Karlovsky C., Tosi M. 1973, էջ 26; Arne T. 1945, նկ. 660/: Պատրաստվել են կրաքարից, լազուրիտից, թերթաքարից, գիպսից, ծովախեցուց, ապակուց, կավից եւ երբեմն պատվել ջնարակով: Ըստ ամենայնի հրանական սարահարի իետ են առնչվում նաեւ հարավային Թուրքմենիայի Կարա-Կալա բնակավայրի պեղումներից հայտաբերված, մոտ 6 սմ երկարությամբ եւ 2 սմ լայնով գլանաձեւ սնամեջ առարկաները, որ խորադիր շեղագիծ նախշազարդ ունեն եւ, Վերի ու վարի մասում, երիզված են հորիզոնական խորադիր գծերով: Թվագրվում են մ.թ.ա. 2-րդ մ.թ.ա. հազարամյակի վերջով: Մի մասը պատված է ջնարակով: Կասկածից վեր է, որ սրանք եւս ժամանակին որպես կնիքներ են օգտագործվել: Զարմանք է հարուցում միայն այն հանգամանքը, որ պեղող հնագետները դրանք ներկայացրել են որպես գորգագործական դանակների բռնակներ /Խլոոփի Ի. 1980, էջ 32-33, նկ. 3/:

Երկրաչափական հորինվածքներով գլանաձեւ կնիքներ (ավելի ստույգ գլանաձեւ կնիքների նախնական, ուլունքատիպ ընդորինակումներ) հանդիպում են նաեւ Յայկական լեռնաշխարհում: Այդ օրինակներից վաղագույնները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կես) պեղվել են Օզնիի (Թռեղը) կուր-արաքսյան մշակույթին պատկանող դամբարաններից /Ժօրջիկաշվիլ Լ., Գոգածը Թ. 1974, էջ 39-40, աղ. 29, նկ. 122-125, 133-136/: Պատրաստված են սպիտակավուն շաղախից եւ պատված բաց կապտականաչափուն ջնարակով (աղ. 27, նկ. 15): Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին քառորդին վերաբերող մի ուշագրավ օրինակ է գտնվել է բեղենյան տիպի խեցեղեն պարունակող խաչենագետի դամբարաններից մեկում (Արցախի տարածքում): Սա ոսկե թիթեղից պատրաստված, երկրաչափական պատկերներով, դրվագազարդ սնամեջ պարկում է, որն, ըստ ամենայնի, առոացվել է օրգանական նյութից (փայտ, ոսկոր) արված գլանաձեւ հիմքի վրա /Դյագարօվ Գ. 1984, աղ. 4-րդ, նկ. 12/ (աղ. 26, նկ. 1):

Այս տարբերակին պատկանող գլանաձեւ կնիքները հայտի են նաեւ Յայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով թվագրվող հնավայրերից (Արթիկ, Նորատուս դամբարան 26) (աղ. 26, նկ. 2, 14): Այս առունով առավել ուշագրավ են Յայաստանի մի շարք հնավայրերից (Լճաշեն, Ն. Գետաշեն, Սեւան, Յառիճ, Վերին Նավեր, Յազդան, Քարաշամբ, Մեծամոր եւ այլն) հայտնաբերված Միջին եւ Ուշ բրոնզի շրջափուլերի խեցեղենի առանձին նմուշները, որոնց վրա հստակ պահպանվել են երկրաչափական հոդինվածքներով գլանաձեւ կնիքների բռղած դաշվածքները: Այս տարբերակին պատկանող կնիքները հատկապես լայն տարածում են ստանում մ.թ.ա.

2-1-ին հազարամյակների սամանագծի եւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին քառորդի (Արքիկ, Լորի Բերդ, Սարուխան, Արգիշտիխինիլի, Եղեգնաձոր, Արցախ եւ այլն) հուշարձաններում /Խաչատրյան Տ. 1979, էջ 157, 275, 395; Դեւեճյան Ը. 1981, էջ 37, աղ. 9-րդ, նկ. 3; Պոլիսօսյան Ա. 1981, էջ 427; Կօբանց Լ. 1984, էջ 130, աղ. 46, նկ. 8; Մեղանինօս Ի. 1926, էջ 222-223/: Յիմնականուն զարդարված են խորադիր շեղագիծ զիզագագծեւ նախշերով: Երբեմն հանդիպում են նաև խորադիր ուղղահայաց ալիքներ եւ կետանախշեր (աղ. 26-աղ. 27): Պատրաստված են գերազանցապես կավից, երբեմն նաև քարից եւ ապակու մասուկից (սնալտա): Որոշ օրինակներ ծածկված են կապտա-կանաչավուն ջնարակով:

Յին Արեւելքի մյուս շրջաններից (Միջերկրական ծովի ավազան, Արաբական թերակղզի, Ինդոսի հովիտ) երկրաչափական հորինվածքներով գլանածեւ կնիքներ մեզ հայտնի չեն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ:

Ըստ ներկա աշխատանքի սկզբնամասուն առաջադրված դասակարգման, այս տարբերակը կարող են կազմել պատկերային հորինվածքներով գլանածեւ կնիքները: «Պատկերային» անվան տակ հասկացվուն է քննարկվող ենթախմբի կնիքների դաշտող մակերեսներին փորագրված որեւէ էակի (նարդ, անասուն, գիշատիչ, թռչուն, սողուն, առասպելական արարած, միջատ) միայն մեկ պատկեր, առանց ուղեկցող մանրամասների (երկրաչափական, կենդանական, բուսական, տեսարանային, տեքստային): Տեսականորեն նման գլանածեւ կնիքների գոյությունը չի բացարկվում: Սակայն մինչ օրս Յին Արեւելքի հնագիտական հուշարձաններում վերջիններիս բացակայությունն առայժմ անհնարին է դարձնում ենթադրվող տարբերակի քննարկումը:

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 28-42):

Այս տարբերակը կազմուն են տեսարանային հորինվածքներով գլանածեւ կնիքները:

Ուշագրավ է, որ այս տարբերակի գլանածեւ կնիքների վաղագույն օրինակները կամ նրանց դաշվածքները դարձյալ վկայված են Միջագետքում (Ուրուկ 4-րդ, Ուրուկ 3-րդ, Ձեմեք-Նասր, Բարեկոն, Թել Բիլլա, Խաֆաջէ) եւ թվագրվուն են մ.թ.ա. 4-րդ հազարամյակի կեսերով ու վերջով *Wiseman D. 1962, աղ. 2, նկ. a-c; Brandes M. 1980, էջ 77-87; Collon D. 1987, էջ 148-149, նկ. 639, էջ 162-163, նկ. 742, 746, էջ 172-173, նկ. 800, էջ 174-175, նկ. 807, էջ 185-186, նկ. 885, 887; Frankfort H. 1939, աղ. 3-րդ, նկ. d; Moortgat A. 1940, նկ. 30; Amiet P. 1980, նկ. 654/:* Այս տարածաշրջանի կնիքներին բնորոշ են երկրաչափական եւ թռչնակերպ, տարբեր կենդանիների եւ առասպելական էակների, մարդու եւ կենդանիների (սողունների եւ միջատների) պայքարի, աշխատանքային առօրյայի, գերեւարության, տաճարի մոտ կատարվող ա-

րարողության, ծիսական երթի տեսարաններով դաշվածքները (աղ. 28-աղ. 29): Կնիքները հիմնականում կրաքարից են, մարմարից, օձաքարից, քաղցրեղոնիտից, լազուրիտից, կալցիտից, լեռնային բյուրեղից: Դագվաղեպ են կավից եւ ծովախեցուց պատրաստվածները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կեսի միջագետքյան կնիքների գերակշիռ մասը հայտնաբերվել է Ուրուկից եւ Զեմդեք-Նասրից, մասնագետները նրանց տվել են «ուրուկ-ջեմդեքնասրյան ժամանակաշրջանի գլանաձեւ կնիքներ» անունը:

Տեսարանային հորինվածքներով գլանաձեւ կնիքները Միջագետքում լայն տարածում են ստանում հատկապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակում՝ այնպես կոչված վաղինաստիական, ակլադական, ուշ ակլադական եւ Ուրի 3-րդ հարստության ժամանակաշրջաններում: Այս փուլում Ուրուկը կորցնում է կնքագործության աչքի ընկնող կենտրոնի իր դերը, առաջնությունը զիշելով Կենտրոնական եւ Յարավային Միջագետքում ձեւավորված քաղաք-պետություններին: Այս ժամանակաշրջանի կնիքները կամ նրանց դաշվածքները հայտնի են Թել Ֆարայի, Ուրի, Արու-Սալաբիխի, Ալ-Ջիբայի (Լագաշ), Թել-Ասմարի (Էշնուննա), Թել Սուլեյմեի, Խաֆաջեի եւ այլ հնագիտական հուշարձանների պեղումներից /Offner G. 1945-46, էջ 157-204, աղ. 21-26-րդ; Heinrich E., Andrae W. 1931, աղ. 46, նկ. f, աղ. 54, նկ. c; Postgate J., Moon J. 1982, էջ 103-136, աղ. 5-րդ, նկ. a; Wooley C. 1934, աղ. 197, նկ. 57; Hansen D. 1973, էջ 62-70, նկ. 25; Collon D. 1987, էջ 20-31, նկ. 77-83, 87, 89, 90/: Կնիքների վրա արված փորագրություններում եւ նրանց արտատպություններում հատկապես հաճախակի են դառնում հետապնդման, որսի, հոշոտման, խնջույքի, շումերական էպոսից («Գիլգամեշ») առանձին դրվագների, ծիսակատարության պատկերումները (աղ. 30): Ուշագրավ առանձնահատկությունը՝ մարդկանց գլուխների ստատիկ եւ իրանի դինամիկ պատկերումներն են, որ արտահայտվում են գլուխը պարտադիր հանդիպակաց, իսկ իրանն իր առանցքի շուրջը տարբեր անկյան տակ թեքված դրվագումներով: Նախորդ ժամանակաշրջանին բնորոշ երկրաչափական ու կենդանական համադրումներով տեսարանները, տաճարի կամ սրբարանի առջեւ արվող արարողության եւ երթի պատկերումները խիստ հազվադեպ են դառնում: Կնիքները շարունակում են պատրաստել կրաքարից, օճառաքարից, օձաքարից, լեռնային բյուրեղից, մարմարից, լազուրիտից: Ավելանում է թթած կավից եւ ծովախեցուց պատրաստված օրինակների թիվը: Եվ ամենակարեւորը, ի տարբերություն նախորդ փուլի, գլանաձեւ կնիքները Միջագետքում սկսում են օգտագործվել որպես կավե սալիկների սեպագիր տեքստերը վավարացնելու միջոց: Երեւույթ, որն ավելի լայն կիրառություն է ստանում մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում եւ հատկապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակում: Այս ժամանակաշրջանի (հատկապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսի) միջագետքյան կնիքների արտադրության վրա թելադրող ազդեցություն են սկսում ձեռք բերել, մեկը մյուսին հաջորդող, ամորեական եւ հարավմիջագետքյան պետական կազմավորումներն ու քաղաք-պետությունները: Մասնավորապես մ.թ.ա. 19-րդ դարի կեսերից մի-

Զագետքյան կնքագործության մեջ որոշակի դեր ու դիրք են սկսում ձեռք բերել Խսին-Լարսան ու Սիպպարը, մ.թ.ա. 18-րդ դարից՝ Մարին ու Բաբելոնը: Այս ժամանակաշրջանին վերաբերող զլանածեւ կնիքներ հայտի են Ուռուկից, Խարուրից, Ուսիեկից, Բեռլինի, Բրյուսելի եւ Բրյուսանական թանգարանների հավաքածուներից /Moortgat A. 1940, նկ. 256, 467; Collon D. 1986, նկ. 122, 133, 637, 641; Collon D. 1987, էջ 51, նկ. 196; Fujii H., Okada Y., Matosumoto K., Oguchi H., Yagi K., Numoto H. 1984-85, էջ 134, աղ. 9, նկ. 1; Speleers L. 1943, էջ 138/: Նախորդ ժամանակաշրջանի սյուժեների կողքին հատկապես տարածում են ստանում գահի վրա թագմած աստծու առջեւ Երկրպագություն կատարող եւ իշխանության խորհրդանշներ ստացող թագավորի կամ քրմի, ինչպես նաև իրար դիմաց զլխիվայր կանգնած դիցերի պատկերումները: Կնիքները դարձյալ օճառաքարից են, օճաքարից, լազուրից, կավից: Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, առաջին անգամ հանդիպում են հասպիսից, գետիտից եւ հատկապես հենատիտից պատրաստված օրինակները: Ողջ նշված ժամանակահատվածը Կենտրոնական եւ Հարավային Միջազգետքի կնքագործության համար պայմանականորեն կոչվում է «Համմուրարիի դարաշրջան» անվանք /Collon D. 1987, էջ 41-50/:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդից Կենտրոնական եւ Հարավային Միջազգետքը պարբերաբար սկսում է ենթարկվել կասսիտական ցեղախմբերի հարձակմանը: Մ.թ.ա. 16-րդ դարից պատմական թատերաբեն եկած Բաբելոնի կասսիտական թագավորությունը մի շարք նորանուժությունների թվում պարտադրում է նաև կնքագործության իր եղանակները (աղ. 30, նկ. 7): Շարունակելով նստած աստծու առջեւ Երկրպագություն կատարող թագավորի թեման, նոր կնիքները սկսում են ներկայացնել նաև ճախրող թռչունների, կենաց ծառի աջ ու ձախ կողմերում տեղափորված այժերի կամ թեւալոր եւակների, կենաց ծառի առջեւ այժերի հետ պայքարող հերոսի, թեւալոր գիշատիչների դեմ մաքառող երկեն աստվածության, ինչպես նաև մարտակառքով որսին հետապնդող կամ հակառակորդին տապալող ռազմիկների պատկերներ /Brentjes B. 1983, էջ 122; Wiseman D. 1959, աղ. 57; Porada E. 1952, աղ. 29-րդ, նկ. 5; Collon D. 1987, նկ. 842, 918; Frankfort H. 1939, էջ 180-182, աղ. 30-րդ, նկ. i աղ. 31-րդ, նկ. f, աղ. 32-րդ, նկ. c; Amiet P. 1988, էջ 1-6, աղ. 1; Dolce R. 1986, էջ 71-78; Beran T. 1958, էջ 255-278/: Կնիքները քաղբեղոնիտից են, կրաքարից, լազուրիտից, հասպիսից, կվարցից, լեռնային բյուրենից: Ուշագրավ է, որ սկսում են հանդես գալ ազարից պատրաստված օրինակներ, որոնք բնորոշ չեն նախորդ փուլերի համար:

Մ.թ.ա. 13-րդ դարից, Կասսիտական պետության թուլացումից, ապա եւ անկումից հետո, Միջազգետքում հանդես եկած քաղաքական նոր կազմավորումները՝ Ասորեստանի եւ Բաբելոնի միջին թագավորությունները, ինչ-որ չափով պահպանելով նախկին կնքագործության ավանդութները, առաջ քաշեցին տեսարանային իրենց տարբերակները՝ ձկնիրան այժերի քանդակներով զարդարված տաճարի առջեւ կատարվող արարողության, թեւա-

վոր սփինքսների, թեւավոր հրեշների կողմից խոշտանգվող եղջերավոր կենդանու, մարտակառով որսի, արեւի թեւավոր սկավառակի, լուսնի, Սիրիոսի եւ լուսատուների, աստծո եւ թագավորի կողմից կատարվող դատավարության, կենաց ժառի մոտ արվող արարողության եւ այլ պատկերների ձեւով (աղ. 30, նկ. 4-6): Նման հորինվածքներով գլանաձեւ կնիքները հայտնի են Ուրուկի եւ հատկապես Աշշուրի պեղումներից /Brentjes B. 1983, էջ 131-137; Beran T. 1957-58, էջ 255-278, նկ. 23; Moortgat A. 1942, էջ 50-88, նկ. 11, 22, 45a, 46/: Փաստորեն սկսած այս ժամանակներից վերջնականապես ձեւավորվում եւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին (հատկապես Նոր Ասսուրական թագավորության շրջանում) լայն տարածում են ստանում ասսուրա-բաբելական տեսարանային հորինվածքներով գլանաձեւ բազմապիսի կնիքները /Parker B. 1962, էջ 26-28, աղ. 9-18-րդ; Porada E. 1948, նկ. 660; Brentjes B. 1983, էջ 149-153; Wiseman D. 1959, աղ. 59, 82, 89, 91; Parker B. 1955, աղ. 21-րդ, նկ. 1; Hrouda B. 1962, աղ. 25, նկ. 27; Legrain L. 1951, նկ. 609; Collon D. 1987, էջ 75-83, նկ. 335-340, 346-347, 349-350, 352-358, 360-366, 368-378, 380, 381/: Ավանդաբար օգտագործվող քարերի (օձաքար, կրաքար, կվարց, լազուրիտ) կողքին այս ժամանակաշրջանում ավելի հաճախ սկսում են գործածվել քաղցրեղոնիտից, ագարից, սարդինից, հասախից եւ գիշերից պատրաստված օրինակները: Կնիքները ստանում են երկրավոր գլանի տեսք, իսկ նրանց բարձրությունը երկու եւ ավելի անգամ սկսում է գերազանցել սեփական տրամագիծը: Ասսուրա-բաբելական կնիքների այս տեսակը կիրառվեց մինչեւ մ.թ.ա. 7-րդ դարի վերջը (աղ. 30, նկ. 8, 9), մինչեւ Նոր Ասսուրական պետության անկումը, որից հետո ողջ Հին Արևելքում համընդիանուր տարածում գտան արեմենյան գլանաձեւ կնիքները:

Սիրիա-Պաղեստինյան աշխարհում այս տարբերակին վերաբերող կնիքների վաղագում օրինակները հանդիսանում են գալիս մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջում եւ հայտնի են Արադի, Մեգիդոյի, Դամամ Էթ-Թուրքմանի, Թել-Մարդիխի (Երլա), Շանուղի, Դամայի, Թել Բրակի, Դալեպի, Զագար Բազարի, Թել Մոզանի, Թել Շուերայի, Թել Աչանայի (Ալալայի), Կարթեմիշի, Աբու Սալահիխի հնավայրերից /Beck P. 1984, էջ 97-114, նկ. 16; Braun B. 1985, էջ 80-85; Ben-Tor A. 1978, նկ. 11; Moortgat A., Moortgat-Correns U. 1978, էջ 22, նկ. 4; Buccellati G., Kelly-Buccellati M. 1988, աղ. 15-19-րդ, նկ. 28-41/: Նրանց վրա գերակշռում են կենդանիների շարքերի, թռչունների եւ կենդանիների, պայքարող գիշատիչների եւ վերջիններին վրա հարձակվող դաշտակիր մարդու կամ մարդկանց, կենդանիների առջեւ կատարվող շուրջպարի, զոհասեղանի մոտ երաժշտության ուղեկցությամբ իրականացվող արարողության եւ այլ տեսարաններ (աղ. 31): Կնիքները պատրաստված են օձաքարից, օճառաքարից, կավճաքարից, քլորիտից, ծովախնեցուց: Նրանց վրա զգացվում է հարավմիջագետքյան կնքագործության (հատկապես Ուրի, Ուրուկի, Զենդեթ-Նասրի, Բաբելոնի եւ Թել Ֆարայի) ազդեցությունը:

Սիրիա-Պաղեստինյան կնիքների սյուժետային բովանդակության վրա, մ.թ.ա. 3-րդ հազարամյակում եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդում

առավել նկատելի է ակլահական, Ուրի 3-րդ հարստության, ապա եւ Համուրաբիի ժամանակաշրջանի ինքնատիպ կնքագրության ներգործությունը: Իրադրությունն այստեղ կտրուկ փոխվեց մ.թ.ա. 16-րդ դարից, երբ քննարկվող տարածաշրջանում պատմական թատերաբեմ բարձրացավ Միտաննի (Խանիզալբատ) պետությունը /ԱՅԵՏԻՍԿԱՆ Գ. 1984, էջ 38/: Իր գերիշխանության տակ առնելով «Արգավանդ կիսալուսնու» տարածքը եւ տերը դառնալով արեւելքն ու արեւմուտքն իրար կապող առեւտրական հիմնական ուղիներին, Միտաննին սկսեց թելադրել քաղաքական, տնտեսական եւ մշակութային (այդ թվում նաև կնքագրութական) իր նորանությունները: Մ.թ.ա. 15-րդ դարից միտաննիական կնիքները սկսում են հանդիպել Վալախից (Թել Աչանա), Բեր-Շանից, Դագորից, Թել Աբու-Շավամից, Գեգերից, Մեգիդոյից, Ուգարիթից, Նուզիից (Յորդան թեփե), Մուհամադ-Արաբից, Թել-Ոխնախից, Կամիդ-Էլ-Լոզից, Թել-Զաքարիայից, Խաբուրից, Արրապիսայից (Կիրկուկ) եւ նույնիսկ Վելես-Մալազայից (Խսպանիա) հայտնաբերված հնագիտական նյութերում /Collon D. 1975, նկ. 230; Collon D. 1982, նկ. 39, 61, 65, 75; Collon D. 1987, էջ 61-65, նկ. 249-275, 885; Frankfort H. 1939, էջ 182-185, նկ. 44-53, աղ. 31-րդ, 42-րդ, 44-րդ; Brentjes B. 1983, էջ 126-131; Porada E. 1979, էջ 2-15, նկ. 2; Starr R. 1939, աղ. 119, նկ. F; Gavin C. 1981, էջ 145; Янковская Н. 1992, էջ 9-13, նկ. 2, 3, 4; Contenau G. 1922, էջ 163, աղ. 36-րդ, նկ. 270; Nougayrol J. 1939, էջ 30; Amandry P. 1965, աղ. 5, նկ. A, B, C, աղ. 6, նկ. A, B, աղ. 7, նկ. E, F; Collon D. 1988, էջ 62-69, նկ. 1-3; Guardata F. 1986, էջ 15-19; Niemeyer H. 1984, էջ 8, նկ. 3/: Քննարկվող տարբերակին պատկանող միտաննիական կնիքների վրա այս ժամանակաշրջանում գերիշխող են դարնում մեջքմեջքի տված կամ կենաց ծառի աջ եւ ձախ կողմերում հերալդիկ դիրքով տեղափորված կենդանիների, դեմ հանդիման կանգնած քրմերի, պարուազարդով եզրագծված կենդանիների եւ մարդկանց, մերկ դիցուիու առջեւ կատարվող արարողության, դիմակների, հետապնդան, մենանարտի, խոշտանգման եւ այլ տեսարաններ (աղ. 32-աղ. 35): Քրմի, պարուազանխչի, այծի եւ կենաց ծառի պատկերների առկյությունը դարնում է այս ժամանակաշրջանի միտաննիական կնիքների ամենաբնորոշ հորինվածքը: Կնիքների պատրաստման համար հիմնականում օգտագործվել են կվարցն ու հենատիտը, որոնք հաճախ ծածկվել են ջնարակի տարբեր երանգներով: Մ.թ.ա. 14-րդ դարում Միտաննիի անկման ու մ.թ.ա. 13-րդ դարում Միջին Ասսուրական թագավորության հանդես գալուն զուգընթաց՝ կիրառությունից դուրս են գալիս միտաննիական կնիքներն, ու Սիրիա-Պաղեստինյան աշխարհում մ.թ.ա. 2-րդ հազ. վերջին քառորդում են մ.թ.ա. 1-ին հազ. 1-ին կեսին տարածում են ստանում հիմնականում ասսուրական արտադրության կամ նրա անմիջական ազդեցության տակ ստեղծվող օրինակները:

Հաջորդ աշխարհագրական տարածքը, ուր մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կեսից տարածում են ստանում այս տարբերակին վերաբերող գլանածեւ կնիքները՝ իրանական սարահարթն է: Հայտնի են նրանք Շեշի (Սոլգա), Չողա-Միջի, Սիալկ 3-րդի, Գոդին թեփե 4-5-րդի, Թեփե Յահյա 4-րդ Ծ-ի եւ

Սուրխ Դումի հնագիտական համալիրներից /Amiet P. 1972, նկ. 488, 660, 663, 670, 671, 674, 673, 666, 667, 711, 1000; Amiet P. 1973, էջ 3-32; Delaporte L. 1920, նկ. 250, 464; Collon D. 1987, էջ 23-24, նկ. 54-58; Amiet P. 1985, էջ 297, աղ. 13, նկ. 6; Ghirshman R. 1938-39, աղ. 94-րդ; Delougaz P., Kantor H. 1972, էջ 32, աղ. 10-րդ; Dyson R., Harris M. 1988, էջ 79-110; Brentjes B. 1983, էջ 70-77; Nagel W. 1964, աղ. 49-րդ, նկ. 3; Խինչ Բ. 1977, էջ 20-23, նկ. 5-15/: Կնքագործության խոշորագույն կենտրոնը Շեշը էր: Տեղի հնքնատիպ կնիքները ներկայացնում են ցանքսի, բերքահավաքի, ժիսակատարության, խեցեգործական արհեստանոցի, տաճարի առջեւ կատարվող զոհաբերության, երկրպագության և այլ տեսարաններ (աղ. 36, նկ. 1-13): Ըստ անենայնի ձեւավորվելով հարավմիջագետթյան (շումերական) կնքագործության ազդեցության տակ, այս օրինակներն աստիճանաբար ձեռք են բերել տեղական առանձնահատկություններին բնորոշ պատկերային համակարգ եւ տեւական ժամանակաշրջան (մինչեւ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերը) հետեւողականորեն պահպանել այն (աղ. 36, նկ. 14, 15): Այս հանգամանքը հաստատում են նաեւ այն քարատեսակները, որոնցից պատրաստված են կնիքները: Ավանդական կրաքարի, այրված քլորիդի, օճառաքարի կողքին, այստեղ տարածում են ստանում տեղական կանաչավուն քարերից (հատկապես հեռվանդիտից եւ մորդենիտից), ինչպես նաեւ բիտումից (հանքածոյլք) պատրաստված օրինակները: Դանդիպում են նաեւ ծովախեցուց եւ հատկապես կավից արված ուշագրավ նմուշներ /Al-Gailani Werr L. 1988, էջ 8, նկ. 3, 4, էջ 9, նկ. 8, 9, էջ 10, նկ. 13, 15, 17-20, էջ 11, նկ. 25, էջ 18, նկ. 79, 81, 85, էջ 19, նկ. 88, 90, 91/: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 3-րդ քառորդին Սարգոն Ակկադացու արշավանքներից կիսաանկախ դարձած էլամում են ընդհանրապես իրանական սարահարթի մյուս շրջաններում զգալի է դարնում ակկադական, ապա նաեւ Ուրի 3-րդ հարստության ազդեցությունը: Այս ժամանակաշրջանին վերաբերող կնիքները հայտնի են Շեշի, Շահեաղի, Բանի-Սուլըմայի, Կալլե Նիսարի, Թեփե Շիսար 3-րդի, Թեփե Յահյա 4-րդ ե-ի, Սուրխ Դումի, Մալիանի (գրականության մեջ օգտագործվում է նաեւ Թալլ-ի Մալիան ձեւով՝ պատմական Անշանն է) հնագիտական համալիրների /Vanden Berghe L. 1982-83, էջ 49, նկ. 17; Խինչ Բ. 1977, էջ 162-165, նկ. 35-37; Dyson R., Harris M. 1988, էջ 79-110; Buchanan B. 1981, էջ 385-387, նկ. 1092-1099/: Նրանցում, վաղ շրջանից եկող նավակի ու ձկնորսության, առօրյա կյանքի ու որսորդության տեսարանների կողքին հայտվում են առասպելական առյուծ-որսորդների, ցլագլուխ եւ առյուծագլուխ արարածների, քնար նվագող ձիերի, առյուծների ու ձիերի խնջույքի, անգղառյուծների պատկերներ: Որոշ կնիքներ նույնիսկ վերարտադրում են շումերական կնքագործությանը բնորոշ բազմած աստծո առջեւ կատարվող արարողության տեսարաններ: Այս շրջանի կնիքները պատրաստված են հեմատիտից, օձաքարից, կրաքարից, դիորիտից, բիտումից, կավից, խեցուց եւ, իհարկե, տեղական հեռվանդիտից եւ մորդենիտից:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին, այսպես կոչված «Դամմուրաբիի ժամանակաշրջանում», իրանական սարահարթի կնքագործության վրա շա-

րունակում է զգացվել հարավմիջագետքյան կենտրոնների ազդեցությունը /Amiet P. 1973, էջ 3-45/: Քատկապես լայն տարածում է ստանում գահին կամ կենդանուն բազմած աստծո առջեւ կատարվող արարողության սյուժեն, որը երեխն սկսում է ուղեկցվել նաեւ կենաց ծառի, գալարվող օձի, ձկնիրան արարածների, ծնկած երկրպագուների, լուսատուների, լուսնի եւ այլ պատկերներով: Նման կնիքները հայտնի են Շիշի, Թալլ-ի Մալյանի, Դաֆրեթի հնագիտական համալիրներից /Amiet P. 1972, նկ. 1896, 1916, 1988; Samner W. 1974, էջ 172, նկ. 12; Lambert W. 1979, նկ. 42; Buchanan B. 1981, էջ 384-385, նկ. 1094; Collon D. 1987, էջ 55-57, նկ. 225, 226, 228, 231, 536, 795, 862, 959/: Պատրաստված են բիտումից, հենատիտից, քաղքեղոնիտից, կրաքարից, կավից եւ այլն: Մ.թ.ա.2-րդ հազարամյակի կեսերին Կասսիտական պետության եւ Միտաննիի հզորացնանը զուգընթաց Իրանական սարահարության (հիմնականում արեւմտյան եւ հարավարեւմտյան հատվածներում) սկսում է զգացվել կասսիտական եւ միտաննիական, իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քարորդում եւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին՝ աստուրական կնքագործության ազդեցությունը (աղ. 37): Դա հիմնականում արտահայտվում էր կենաց ծառի առջեւ կատարվող արարողության կամ որսի, իրար հետեւից կամ դեմ հանդիման կանգնած մարդկանց, կենդանիների եւ թռչունների շարքերի, հետապնդան, առասպելական էակների (կենտավրոս, մինոտավրոս, շենու, եղջյուրավոր ծի, թեւավոր ծի - Պեգաս) եւ այլ տեսարանների պատկերմանք: Նման կնիքները հայտնի են Շիշի, Թեփե Սիալկի, Թեփե Գիյան 1-ինի, Աղա Էվլարի, Դիմիսա-թեփե 1-ինի, Դաֆրավանի, Դասանլու 4-րդի, Դասան Զամինի, Մարլիկ թեփեի, Մայիլբակի, Սուլրիս Դումի հնագիտական համալիրներից /Amiet P. 1972, նկ. 2133, 2137, 2181; Morgan J. 1927, էջ 275, աղ. 257, նկ. 3; Schaeffer C. 1948, էջ 407-415, աղ. 30, նկ. 1-3; Muscarella O. 1974, էջ 42-43, նկ. 6; Muscarella O. 1981, նկ. 40; Contenau G., Ghirshman R. 1935, էջ 49, աղ. 38, նկ. 1, 3-6; Barney Ch. 1969, էջ 127-142; Hakemi A., Rad M. 1950, էջ 96, աղ. 50, նկ. 3-5; Negahban E. 1977, էջ 82-87, նկ. 1-4; Stein A. 1969, էջ 296-298, աղ. 18, նկ. 22, 24, 28-30; Ghirshman R. 1938-39, աղ. 30, նկ. 1-8, աղ. 31, նկ. 1-5; Schmidt E. 1957, էջ 43; Collon D. 1987, էջ 86-89, նկ. 406-411, 414, 416, 417/:

Այս ժամանակաշրջանի կնիքները պատրաստված են կվարցից, հասպիսից, կապույտ ջնարակից, կրաքարից, օձաքարից, ալեբաստրից, կավից: Դետաքրքիր է, որ վաղ շրջանների համար բնորոշ տեղական հեռվանդիտից եւ մորդենիտից պատրաստված կնիքները այս ժամանակաշրջանում խիստ նվազում են:

Մ.թ.ա. 8-7-րդ դարերում Իրանական սարահարթի հյուսիս-արեւմտյան շրջաններում հայտնվում են (սահմանափակ քանակով) նաեւ վանտոսպյան կնիքներ, իսկ մ.թ.ա. 6-րդ դարի վերջերից Աքեմենյան հզոր կայսրության հաստատումից հետո ողջ Իրանական սարահարթում լայն տարածում են ստանում արեմենյան ինքնատիպ կնքագործության նմուշները /Schmidt E. 1957, էջ 44-45, աղ. 15, 16; Collon D. 1987, էջ 90-93, նկ. 418-423, 425-427; Brentjes B. 1983, էջ 160-164; Calmeyer P. 1977, էջ 191-195, նկ. 1/:

Եգիպտոսում այս տարբերակին վերաբերող գլանաձեւ կնիքների ամենավաղ նմուշները, որ եզակի օրինակներ են միայն, երեւան են գալիս մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմաններում եւ հայտնի են Նարմերի, Առաջին հարստության փարավոններ Ախայի (Մենես) եւ Ղենի (Ուդիմու) դամբարաններից, ինչպես նաև Սաքքարայի, Նագա-Էր-Ղերի եւ Էլ-Զարի պեղումներից /Frankfort H. 1939, էջ 292-300, նկ. 93-98; Müller-Karpe H. 1968, աղ. 28, նկ. 30, աղ. 39, նկ. 13; Scharff A. 1926, էջ 58; Flittner H. 1924, էջ 245; Brunton G. 1937, էջ 97-98; Кинк X. 1976, էջ 52-54, նկ. 12, 13; Collon D. 1987, էջ 140-141, նկ. 213, 568/: Նրանցում գերիշխողը կենդանիների եւ թռչունների, թիակավոր նավակների, դիմակների, սփինքսի եւ փարավոնի աբստրակտ ոճով արված, տեսարաններն են (աղ. 38, նկ. 1-10): Բնորոշ չինելով Եգիպտական կնքագործությանը, գլանաձեւ կնիքների այս տարբերակը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին որոշ փարավոնների եւ նրանց մերձավորների անձնական օգտագործման հազվագյուտ իրերը դառնալուց զատ, այլ կիրառություն եւ լայն տարածում չստացավ: Բացառված չէ, որ նրանց կիմնական մասը պատրաստվել է Եգիպտոսի տիրակալների պատվերով, նրա սահմաններից դուրս: Դա լավագույն վկայությունը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդից Լեւանտում եւ Միջերկրականի ավագանում հայտնված գլանաձեւ կնիքներն են՝ սիրիապաղեստինյան եւ Եգիպտական սյուժեների համադրումներով արված հորինվածքներով: Ըստ որում, կնիքների հորինվածքային առանձնահատկությունները (կողք-կողքի կամ մեկը մյուսի վրա տեղադրված կենդանիների եւ թռչունների շարքեր, վազող պարույրների զարդանախշ, կենաց ծառի մոտ կատարվող արարողություն, լուսնի մահիկի վրա հանգրվանած աստղ) ընդգծված սիրիապաղեստինյան են, մինչդեռ մարդկային կերպարները, իսկ որոշ դեպքերում մարդկանցից մեկը միայն Եգիպտական հանդերձանք կամ խույր է կրում (աղ. 33): Նման կնիքներ հայտնաբերվել են Ուգարիթի, Բեյրութի, Թել Բեյր Մերսիմի, Թել-Էլ-Աջուլի, Ալալախի, Բիբլոսի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի հնագիտական հուշարձաններից /Kühne H. 1980, նկ. 55, 56; Frankfort H. 1939, էջ 259; Collon D. 1988, նկ. 1-24; Parker B. 1949, նկ. 20; Ward W. 1965, աղ. 5; Petrie F. 1933, աղ. 3, նկ. 37/: Նման մի քանի կնիքներ հայտի են նաև Միջերկրականի ավագանում Բալկանյան թերակղու (Պերատի), Կրետեի (Փորոս), Կիպրոսի (Կիթիոն, Կլավիխ) եւ Սաղրիթի (Կարթագեն) մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեներով թվագրվող դամբարանային համալիրներից /Müller E. 1980, էջ 95-96, նկ. 5; Sakellarakis J. 1982, նկ. 57; Kenna V., Karageorghis V. 1967, էջ 93-96, նկ. 1-4; Kenna V. 1971, նկ. 37; Walters H. 1926, նկ. 112; Amiet P. 1955, էջ 11, աղ. 1, նկ. 1; Bleibtreu E. 1981, նկ. 83/: Կնիքների մի մեծ խումբ էլ պահպում է մասնավոր հավաքածուներում եւ Երուսաղեմի, Յալեպի, Լուլոնի, Փարիզի, Վեննայի, Ֆրայբրուգի, Չիկագոյի, Նյու Յորքի թանգարաններում: Ուշագրավ է, որ վերոհիշյալ բոլոր կնիքները կիմնականում պատրաստված են նույն քարից՝ կանաչավուն հասպիսից /Collon D. 1988, էջ 57-70/: Յանգամանք, որ հիմք է տալիս ենթադրել, թե դրանք բոլորն ել, հավանաբար, ար-

տաղրության մեկ կենտրոն են ունեցել, իսկ պատվիրատուն հանդիսացել է Եգիպտոսը: Ավելի ճիշտ նրա հյուքսոս տիրակալները, որոնք ծագումով, ըստ ամենայնի, Սիրիա-Պաղեստինյան աշխարհից լինելով, փորձել են տեղի կնքագործության առանձնահատկությունները գուգորդել Եգիպտականի հետ եւ ավանդաբար շարունակել իրենց կնիքները պատվիրել վաղագույն ժամանակներից հայտնի հինարեւելյան արհեստանոցներում: Բացառված չէ, որ կանաչ հասպիսի հումքը ձեռք էր բերվում ակկադական սեպագիր տեքստերից հայտնի կիսաառասպելական Զինուր սարից («հասպիսի լեռ»), որի տեղադրությունը առ այսօր ստուգ հայտի չէ: Ինչ վերաբերում է քննարկվող կնիքների արտադրության կենտրոնին, ապա ըստ Դ.Կոլոնի այն գտնվել է Քիրլուսում /Collon D. 1988, էջ 63/: Մեր կարծիքով նման կնիքների արտադրության առավել հավանական կենտրոնը պետք է, որ եղած լինի Թել-Աչանա-Ալալախը: Բուն Եգիպտոսից հայտնաբերված կնիքները պատուատված են հեմատիտից, օճառաքարից, բազալտից, հասպիսից, ջնարակված կավից, փայտից, փղոսկրից: Այս առումով անչափ հեռաքրքիր է Եգիպտական սյումե հիշեցնող կնիքը, որ հայտնաբերվել է Պերատիից (Յունաստան): Այն պատրաստված է մետեորիտից (Երկնաքար):

Եգիպտոսի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով եւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսով թվագրված հուշարձաններում այս տարբերակին վերաբերող գլանաձեւ կնիքները խիստ հազվադեպ են: Դանդիպողներն եւ հիմնականում Միջին եւ Նոր Ասսուրական թագավորությունների կնքագործությանը բնորոշ օրինակներ են: Մ.թ.ա. 6-րդ դարի վերջից Եգիպտոսում տարածում են ստանում Արեմենյան Իրանի կնիքները:

Փոքր Ասիայում հայտնաբերված գլանաձեւ կնիքների այս տարբերակի ամենավաղ օրինակները, եւ ավելի հաճախ նրանց դաշվածքները, վերաբերում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներին եւ 1-ին կեսին, քանակով շատ քիչ են (աղ. 39, նկ. 1-3), իրենց վրա կրում են Ուրուկի, Ձեմեթը Նասրի եւ Թել Ֆարայի կնքագործության ընդգծված ազդեցությունը եւ հայտնի են Չարալ-հույուկի, Արսլան-թեփեհ (Մալաթիա), Ջասեկ-հույուկի, Տրոյայի եւ Զինջիրլիի վաղբրոնգեղարյան հուշարձաններից /Collon D. 1987, էջ 14-15, նկ. 10, 11; Schmidt H. 1902, նկ. 868; Moortgat A. 1940, նկ. 446; Frankfort H. 1939, աղ. 38-րդ, նկ. f, j, աղ. 40-րդ, նկ. b/: Նրանց քանակն ինչ-որ չափով ավելանում է ուշակվաղական եւ Ուրի 3-րդ հարստության ժամանակաշրջաններում եւ ավելի հաճախակի դառնում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից, երբ միջագետքից վաճառականների կողմից Փոքր Ասիայում հիմնվում են առեւտրական կենտրոններ («կարում») եւ հատկապես նրանցից ամենախոշոր՝ Կամիշը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման կենտրոններում ել (Քյուլբեփեհ-Կամիշ, Աշեմհույուկ, Կեսարիա, Կարահույուկ, Իզմիր, Արսլան-թեփե, Տարսոս) կենտրոնացված են ջնարկվող տարբերակի կնիքները, եւ առեւտրական, տնտեսական ու այլ բնույթի պայմանագրեր ներկայացնող սեպագիր սալիկների տեքստերը վավերացրած նրանց արտատպությունները (աղ. 39, նկ. 4-11):

Կնիքների ու պահպանված դաշվածքների մի մասը թույլ են տալիս

պնոել, որ նրանք, միջագետքյան օրինակների համեմատությամբ, արված են ավելի անփույր ու սխեմատիկ: Կատարման տեխնիկան պրիմիտիվ է, հորինվածքն անհամաչափ: Այսինքն ներմուծված կնիքների կողքին տեղում եւս փորձել են արտադրել եւ օգտագործել համանան օրինակներ: Գերիշխում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջի եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդի միջագետքյան եւ սիրիապաղեստինյան կնքագործությանը բնորոշ մարդկանց եւ կենդանիների համադրման, քառածի սայլերի, բազմած աստծո առջեւ կատարվող արարողության, հերոսի ու առյուծի մենամարտի, հոշոտման, ցովի գոհաբերնան, նորալուսնի գրկում հանգչող աստղի, նվիրատվության եւ այլ տեսարանները /Frankfort H. 1939, էջ 242-251, աղ. 39-ող, նկ. ա, աղ. 40-ող, նկ. ց, հ, ի; Brentjes B. 1983, էջ 106-108; Buchanan B. 1981, էջ 389-408, նկ. 1100-1165; Porada E. 1948, նկ. 893; Osten H. 1934, նկ. 149, 183, 227, 236, 280, 283, 285; Özgür N. 1965, էջ 45, նկ. 6, էջ 67, նկ. 4; Özgür N. 1968, էջ 48, աղ. 15-ող; Hrozny B. 1962, էջ 39, կա 462, էջ 40, կա 464; Collon D. 1987, նկ. 4, 148, 210, 496, 671, 686, 787, 821, 834, 899/:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին քյուլքեփե-կանիշի կործանումից հետո Փոքր Ասիայում գլանածեւ կնիքների այս տարրերակին վերաբերող օրինակները կամ դաշվածքներն անհամեմատ քչացան: Նրանց քանակը կրկին ավելացավ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից, երբ ողջ Դին Արեւելքը փաստորեն ողողվեց միտաննիական եւ կասսիտական կնքագործության նաև լշելով: Փոքր Ասիայում նման կնիքները հայտնի են Չաքալ հույուկի, Աղանայի, Ալաջա հույուկի, Սարունիեի, Գելիդոնիայի ծովածոցի, Ուլու Բուրումի, Տարսունի հնավայրերից /Tuncer O. 1979, նկ. 60; Buchholz H. 1967; Alp S. 1968, էջ 122; Frankfort H. 1939, աղ. 43-ող, նկ. ե, ց, աղ. 45-ող, նկ. ս, լ; Collon D. 1987, նկ. 296, 305, 312, 569-571/: Կնիքների վրա եւ պահպանված դաշվածքներում դարձայլ կենաց ծառի առջեւ կանգնած քրմերն են, մեջք մեջքի տվյալ այժերը, պարույրների զարդանախշը (աղ. 40, նկ. 1-6): Պատրաստված են օճառաքարից, լեռնային բյուրեղից, օճաքարից, կրաքարից, նեֆրիտից, հասպիսից եւ հատկապես հեմատիտից: Բնորոշ չլինելով փոքրասիական կնքագործությանը, գլանածեւ կնիքների այս տարրերակը փաստորեն մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 3-րդ քառորդից հետո գործնականում դուրս մնաց կիրառությունից:

Դաջորդ տարածաշրջանն, ուր վկայված են այս տարրերակին վերաբերող գլանածեւ կնիքները կամ նրանց դաշվածքները (խեցանորների վրա), Միջերկրականի ավազանն է (աղ. 40, նկ. 7-9): Այստեղ նրանց առավել վաղ օրինակները վերաբերում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին եւ հայտնի են Բալկանյան թերակղզու (Թորուս, Դիլիլի-թաշ), Կրետեի (Կնուսու) եւ Ապենինյան թերակղզու (Պալերմո) հնագիտական համալիրներից /Hood S. 1973-74, աղ. 3, նկ. 11, 18; Evans A. 1935, էջ 423, նկ. 349, 350; Rocco B. 1980-81, էջ 265-274/: Այս կնիքներն ու դաշվածքները քանակով շատ չեն, իրենց հորինվածքային առանձնահատկություններով մոտ են Միջագետքին եւ, ամենայն հավանականությամբ, այստեղ են թափանցել փոխանակության հետեւանքով: Աստիճանաբար յուրացնելով գլանածեւ

Կնիքների պատրաստման եւ դրվագման առանձնահատկությունները, տեղի վարպետները մ.թ.ա. 2-րդ հազարամյակից արդեն սկսում են բողարկել քննարկվող տարբերակին վերաբերող սեփական օրինակներ: Անշուշտ հարկ է նշել, որ Միջերկրականի ավազանի կնքագործության հիմնական կենտրոնները տեղափորկած են եղել նրա արեւելյան կեսում (Կրետե, Կիպրոս, Եգեյան աշխարհ, Բալկանյան թերակղզի): Պեղված հնագիտական նյութը գալիս է հաստատելու, որ տեղական գլանաձեւ կնիքների կողքին մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ընթացքում այստեղ անընդհատ օգտագործվել են նաև Յին Արեւելքի տարբեր շրջաններից բերված օրինակներ: Այս տարբերակին վերաբերող մ.թ.ա. 2-րդ հազարամյակի գլանաձեւ կնիքները Միջերկրականի ավազանում հայտնի են Կիպրոսի (Կլավիիա, Էնկոմի, Ջալա-Սուլթանթեկի, Սալամիս, Սինդա), Եգեյան աշխարհի Յոռոդոս եւ Թոս կղզիների (Լալիսոս, Կամերիոս), Կրետեի (Կնոսոս), Բալկանյան (Թերե, Պերատի, Լերնա, Զիգուրիթես), Ապենինյան (Յոռոմ, Վիչենցա, Նեապոլ) եւ Պիրենեյան (Վելես-Մալագա) թերակղզիների հնագիտական հանալիրներից /Porada E. 1948, էջ 178-198; Kenna V. 1971, Ակ. 107, 112; Schaeffer C. 1983, էջ 164; Amiet P. 1973, Ակ. 442; Walters H. 1926, Ակ. 132, 133, 142, 144, 150; Porada E. 1981, ռկ. 23; Sakellarakis J. 1982, Ակ. 54; Buchanan B. 1966, Ակ. 906; Frankfort H. 1939, էջ 300-304, Ակ. 105-107; Collon D. 1987, էջ 136, Ակ. 573; Pecorella P. 1966, էջ 16, 18, Ակ. 10; Mazzoni S. 1972, Ակ. 12; Mazzoni S. 1988, էջ 171-182, աղ. 33-35/: Կնիքների վրա եւ պահպանված դաշվածքներում գերիշխում են պապիրոսի շամբուտներում թերավոր գիշատիչներ որսացող մարդկանց, հետապնդման, եղջերվի գլխով մարդակերպ արարածների, մարտակառքով ընթացող հերոսի, ծիսական անուսնության, երկվորյակների այաշտանունքի հետ կապված արարողության եւ այլ տեսարաններ: Ինչ վերաբերում է Յին Արեւելքից բերված կնիքներին, ապա նրանցում հիմնականը դարձյալ միտանիական եւ կասախտական օրինակներն են: Վերջիններիս վրա կրկին գերիշխում են կենաց ծառի առջեւ զոհաբերություն կատարող քրմերի, մեջք-մեջքի տված այծերի կամ վազող պարույրների պատկերները: Այս ժամանակաշրջանի Միջերկրականի ավազանի կնիքները պատրաստված են կվարցից, հեմատիտից, օձաքարից, երկնաքարից, հասպիսից, արագոնիտից, սարոդիոնից, լեռնային բյուրեղից, քլորիտից, կավից եւ երեմն ծածկված կապտա-կանաչավոն ջնարակնով: Ուշագրավ է, որ միտանիական եւ կասախտական օրինակները հիմնականում լազուրիտից են եւ ոսկե գլխատիրներ են կրում կնիքի վերին ու ստորին եղբերում:

Մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբում գլանաձեւ կնիքների տեղական օրինակները խիստ հազվադեպ են դառնում, միայն երբեմն սկսում են համոլիպել նորաստուրական (քացառված չեն նաև վանտոսայան) կնքագործությանը բնորոշ ոչ մեծ թվով օրինակներ: Դրանք հայտաբերվել են Եգեյան աշխարհի (Սամոս) եւ Ապենինյան թերակղզու (Էտրուսկյան դամբարաններ) մ.թ.ա. 8-6-րդ դարերով թվագրվող հուշարձաններից: Հատկապես ուշագրավ են էտրուսկյան դամբարաններից հայտնաբերված կավե երկու կարասների վրա գլանաձեւ դրոշմիչով արված դաշվածքները, որոնցից առաջինը՝ նստած

աստծու կամ թագավորի առջեւ կատարվող արարողության, իսկ Երկրորդը՝ իրար հաջորդաբար հետապնդող Եղջերվի, առյուծի, թեւավոր հերոսի եւ սփինքսի (շեղու) պատկերներ է կրում: Սամոսից հայտնաբերված օրինակը պատրաստված է կապույտ քաղքեղոնիտից:

Ավելի ուշ տեսարանային հորինվածքներով գլանաձեւ կնիքներ Միջերկրականի ավազանում վկայված չեն:

Այս տարբերակին վերաբերող գլանաձեւ կնիքները խիստ հազվադեպ հանդիպում են նաև Արաբական թերակղզում եւ Պարսից ծոցի կղզիներում: Դրանք հիմնականում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով թվագրվող հուշարձաններից են (ավելի վաղ հայտի չեն): Առավել հաճախ հանդիպում են Ֆայլակա կղզու հնագիտական համալիրներից /Collon D. 1987, նկ. 255, 258, 604; Бибби Ջ. 1984, էջ 349; Potts D. 1981, էջ 29-52/: Միտաննիական կնքագործությանը պատկանող այս նմուշները պատրաստված են կվարցից եւ օճառաքարից: Կնիքների վրա կենաց ծառի առջեւ գրիարերություն կատարող քրմերի, այժերի ու վազող պարույրների պատկերներ կան: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի հնագիտական համալիրներում գլանաձեւ կնիքներ այստեղ այլևս չեն հանդիպում:

Բննարկվող տարբերակին վերաբերող գլանաձեւ կնիքների հետաքրքիր օրինակներ հանդիպում են նաև Ինդոսի հովտում (աղ. 38, նկ. 13, 14), որը Շին Արեւելքի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսի սեպագիր տեքստերում հիշատակվում էր «Մելուխիս Երկիր» անվանք եւ առեւտրական սերտ կապերի մեջ եր հարավմիջագետքյան կենտրոնների հետ: Ըստ ամենայնի, այս կապերի ազդեցության շնորհիվ էլ Ինդոսի հովտում հայտնվում են գլանաձեւ կնիքների առաջին օրինակները, որոնք մինչ այդ անժանոր էին այս տարածաշրջանում: Սակայն Միջագետքից փոխառնված գլանաձեւ կնիքների պատրաստման գործն այստեղ արժանի ընդունելություն չգտավ եւ լայն տարածում չստացավ: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին վերաբերող օրինակներ հայտաբերվել են Կալիբանգանի, Մոհենջո Շարոյի, Շարապպայի եւ Չանհու Շարոյի պեղումներից /Frankfort H. 1939, էջ 304-307, նկ. 108; Thapar B. 1975, էջ 28, նկ. 4; Brentjes B. 1983, էջ 96-98; Mackay E. 1938, էջ 344-345, աղ. 89, նկ. 376, աղ. 96, նկ. 488; Marshall J. 1931; Porada E. 1971, էջ 331-337; Lamberg-Karlovsky C. 1985, էջ 63; Lamberg-Karlovsky C. 1972, էջ 222-229; Buchanan B. 1981, էջ 382-383; Collon D. 1987, էջ 142-144, նկ. 605-607/: Ինդոսի հովտում արտադրված գլանաձեւ կնիքների ոչ մեծաքի խումբ հայտնաբերվել է նաև հարավմիջագետքյան քաղաքներում (Թել Սուլեյմե, Թել Ասմար, Ուր) եւ Իրանական սարահարթում (Շիշ) /Al-Gailani Werr L. 1983, էջ 49, նկ. 7; Frankfort H. 1955, նկ. 642; Legrain L. 1951, նկ. 632; Collon D. 1987, նկ. 608-613/: Այս տարածաշրջանի կնիքները պատրաստված են օճառաքարից, կրաքարից, էնստատիտից, գիպսից, խեցուց, կավից, խկի որոշ օրինակներ պատված են ջնարակով: Կնիքների վրա ինքնատիպ տեսարաններ են Ինդոսի հովտին բնորոշ կենդանիների (ռնգեղջուր, փիդ, կոկորդիլոս), հետապնդման, մենամարտի եւ կենաց ծառի պատկերներով: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին եւ

ավելի ուշ, գլանածեւ կնիքներ հնդոսի հովտում կարծես թե այլեւս չեն հանդիպում:

Քննարկվող տարբերակին վերաբերող գլանածեւ կնիքներ հայտի են նաև Հայկական լեռնաշխարհում եւ նրան հարակից տարածքներում (Մինգեչառուր): Ձեռքի տակ առկա հնագիտական նյութը հնարավորություն է տալիս արձանագրել, որ տեսարանային հորինվածքներով գլանածեւ կնիքները լայն տարածում չեն ունեցել Հայկական լեռնաշխարհում, ընդհանրապես բացակայում են Վաղ եւ Միջին Բրոնզի շրջափուլերի հուշարձաններում, իսկ առաջին օրինակները հայտնվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից եւ վկայված են Լճաշենի (Դամբարան 97) (աղ. 41, նկ. 6), Արքիկի (Դամբարան 53, 422) (աղ. 41, նկ. 8,9), Շամիրամի (Դամբարանաբլուր 5) (աղ. 41, նկ. 2), Յրազդանի (պատահական ներկայումս պահպան է Սեւանի ազգային պարկում) (աղ. 41, նկ. 3), Քարաշամբի (Դամբարան 11) (աղ. 41, նկ. 10), Մեծամորի (Դամբարանաբլուր 4) (աղ. 41, նկ. 4), Առաջաձորի (Դամբարանաբլուր 2) (աղ. 41, նկ. 7), Շահրախտիի (աղ. 41, նկ. 1), Չախիրլիի (աղ. 41, նկ. 5) եւ Մինգեչառուրի (աղ. 41, նկ. 11, 12) հնագիտական հուշարձաններից /Պոտրովսկի Բ. 1963, էջ 11; Միացանքն Ա. 1965; Խաչատրյան Տ. 1975, էջ 157-158; Խաչատրյան Տ. 1979, էջ 133, 296; Արեայն Գ. 1983, էջ 425-426; Արեայն Գ., Օգանեսյան Վ., Մուրադյան Փ., Ավետիսյան Պ., Պետրօսյան Լ. 1990, էջ 53-74, աղ. 11, նկ. 2, նկ. 8; Պոտրովսկի Բ. 1949, էջ 68, 88; Կյանքաբան Կ. 1954, էջ 136, 141-142, նկ. 8; Ջաֆարով Գ. 1984, էջ 35-36, աղ. 3-րդ, նկ. 2; Ghirshman R. 1938-39, էջ 75, 81, աղ. 3-րդ; Բաբաև Ի. 1964, էջ 78; Կարախմետովա Ա. 1990, նկ. 40, 41; Օգանեսյան Վ. 1990, էջ 15; ՕԱԿ 1896, էջ 17; Khanzadian E. 1995, աղ. 16, նկ. 1/: Կնիքների վրա կենաց ժամկ առօտեւ երկրպագող քրմերի, մեջք մեջքի տված այժերի, թռչունների, թեւավոր ծիու, մարդկանց երթի, վազող բազմագալար պարույնների, գիշատիչների մենամարտի, հետապնդման, որսի, ծիսակատարության տեսարաններ են: Այս ամենը լավ հայտնի է հյուսիսիրիական եւ հատկապես միտաննիական կնքագործության բազմաթիվ նմուշներից եւ հստակ տեղափորվում է մ.թ.ա. 15-14-րդ դարերի ժամանակագրական սահմաններում: Թեեւ ժամանակին փորձեր են արվել /Բ. Պիուտրովսկի, Կ. Բուշնարեւա, Գ. Զաֆարով եւ այլոր/ քննարկվող կնիքների մի մասը կապել իրանական սարահարթի կամ Ասորեստանի կնքագործական կենտրոնների հետ եւ, այդ ենթադրությունը հիմնավորելու նպատակով, արիեստականորեն ուշացնել պատահաբար հայտնաբերված կնիքների թվագրումը (մ.թ.ա. 9-7-րդ դարեր), մեզ համար միանշանակ է, որ նրանց ճնշող մեծանասնությունը միտաննիական արտադրության կամ վերջիններիս ազդեցության արդյունք են: Ըստ որում անմիջական գուգահեռները մատնանշում են հատկապես Նուգիի (Յորդան թեփե), Ալալախի (Թել Աշանա) եւ թերեւս նաեւ Ուգարիթի (Ուսս Շնամրա) արտադրական կենտրոնները: Դա առավել եւս աչքի է ընկնում Արքիլի, Յրազդանի, Շամիրամի, Շահրախտիի եւ Մինգեչառուրի դամբարանային համալիրներից հայտնաբերված կնիքների տեսարանային արտատպութ-

յունները Նուզիի, Կիրկուկի, Բեր-Շամի, Թել Արու Դավամի, Գեղերի, Թել Մուհամեդ Արաբի, Կամիդ-Էլ-Լոգի, Թել-Էդ-Դուվեյրի (Լաքիշ), Ալալախի եւ Ուզարիի հնավայրերից հայտնի կնիքների դաջվածքներին համադրելիս (աղ. 34-աղ. 35): Նույնական կամ ննան են երկու տարածաշրջաններում հայտնաբերված կնիքների հնչպես հորինվածքային առանձնահատկություններն ու այլուժեները, այնպես էլ չափերը, նյութը եւ անգամ կրելաձեւը: Նկատի ունենալով Դայկական լեռնաշխարիի եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարիի համար միջանկյալ տարածք հանդիսացող Չարալ-հույուկի եւ Կորուչութեփերի հնագիտական համալիրներում ննան արտատպություն ունեցող կնիքների առկայությունը, կարելի է ենթադրել, որ քննարկվող գլանաձեւ կնիքները թերեւս Դայկական լեռնաշխարի են ներքափանցել Դյուսիսային Սիրիա-Աղձնիք-Արարատյան դաշտ հիմնական (եւ ոչ միայն կնիքներով մատնանշվող) ճանապարհով, որն այստեղից արդեն ճյուղավորվել է ենայի Արագածոտն, Շիրակ, Գուգարք, Սեւանի ավազան եւ Արցախ, իսկ այնուհետեւ դեպի Մինաքչառուր եւ նույնիսկ Դյուսիսային Կովկաս (Օսերիա):

Դայկական լեռնաշխարիի միտաննիական «ծեռագիր» ունեցող գլանաձեւ կնիքների մեջ հատկապես ուշագրավ է Լճաշենի թիվ 97 դամբարանից պեղված օրինակը (աղ. 41, նկ. 6): Այն հայտնաբերվել է հնագիտական անխաթար համալրում եւ, այդ առումով առավել մեծ հնարավորություններ է ընձեռում պատմա-մշակութային եւ երնո-սոցիալական հավանական վերակազմավորությունների իրականացման համար: Լավ նադված կավից պատրաստված եւ դեղնա-դարչնավուն ջնարակով պատված այս կնիքի վրա փորագրված տեսարանը՝ սյուժեի խրթինությամբ, կերպարների բազմազանությամբ եւ պատկերի հորիզոնական՝ երկլուկուս (Վերին-ստորին), ինչպես նաև ուղղահայաց՝ երկնաս (ձախ-աջ) կառուցվածքով, հյուսիսփրիհական կամ վաղ միտաննիական օրինակներն է իշխեցնում եւ հորինվածքի առումով մոտ գուգահեռներ ունի Նուզիի, Կիրկուկի, Չարալ-հույուկի, Թեփե Միալի, իսկ սյուժետային ծանրաբեռնվածությամբ՝ թերեւս՝ Չարալ-հույուկի, Աշշուրի, Նուզիի, Դասան-Զամինիի եւ Աղա-Եվլարի միտաննիական կնիքներում: Ուստի թերված տվյալները բույլ են տալիս Լճաշենի թիվ 97 դամբարանից հայտնաբերված այս արտեֆակտին վաղմիտաննիական ծագում վերագրել եւ թվագրել մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին կեսով: Այս եզրահանգումը կարեւոր է նաև սայլերով, մարտակառքերով, «եռագույն» խեցեհենով, անագե, ոսկե եւ արծաթե պերճանքի առարկաներով, ցանցկեն դաստակ ունեցող կարծ սրերով լճաշենյան հարուստ դամբարանների ստորին ժամանակագրական սահմանը պարզելու հարցում: Քննարկված օրինակներից առանձնանում է միայն Քարաշամբի կնիքը, որը կատարման տեխնիկայով իշխեցնում է Լուրիստանի եւ Կասպիտական Բարելոնի որոշ նմուշները, հանդերձանքի պատկերման մանրամասներով կապվում միջինբրոնզեդարյան Քարաշամբի ու Թերեդի արծաթե գավարների դրվագումներից հայտնի գալյապոչ մարդկանց հետ, իսկ պատկերված զույքակազմով նույնանում Լճաշենի, Լորի բերդի, Մեծամորի եւ հենց Քարաշամբի բրոնզեդարյան դամբարաններում ֆիքսված պատվանդանների հետ: Բերված գուգահեռները բույլ են տալիս

այն թվագրել մ.թ.ա. 14-13-րդ դարերով եւ թերեւս Ենթադրում նրա տեղում պատրաստված լինելը: Դայկական լեռնաշխարհից հայտնաբերված գլանաձեւ կնիքների համար հումք են ծառայել կրաքարը, գետիտիտը, ոսկին, կավը:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդից քննարկված կնիքները մի որոշ ժամանակահատված կարծես թե դադարում են կիրառվել Դայկական լեռնաշխարհում (պատճառը հավանաբար պատճական թատերաբենից Միտաննի պետության հեռանալը է): Գլանաձեւ կնիքների այս տարրերակը Դայկական լեռնաշխարհում կրկին երեւան է գալիս արդեն Կանտոսափի թագավորության ժամանակաշրջանում (աղ. 42): Նման օրինակներ հայտնաբերվել են Վանի (Թոփրակ կալե), Երեբունիի (Արին-բերդ), Կարմիր Բլուրի (Թեյշերախնի), Արմավիրի (Արգիշթիխնիլի), Արտաշատի պեղումներից /Lehmann-Haupt C. 1910, էջ 9, նկ. 3, էջ 18, նկ. 54; Piotrovsky B. 1970, էջ 94, 144, նկ. 59; Խօճկաշ C., Տրյահովա H., Օգանեսյան K. 1979, էջ 138, նկ. 121, 122; Piotrovsky B. 1970, լուսանկար 39, 40, 44/: Նրանց ինքնատիպ դաշվածքների մի մասը կարծես թե շարունակում է կրկնել Երեմնի միտաննիական կնքագործության արձագանքները: Դրա լավագույն վկայությունն Արգիշթիխնիլիից հայտնաբերված կարասի իրանին գլանաձեւ կնիքով արված դրոշնազարդն է, ուր դարձյալ կենաց ծառի երկու կողմերում կանգնած այծեր եւ նրանց վրա հարձակվող առյուծ է պատկերված: Մի այլ խումբ մոտենում է նորասառնական կնքագործության օրինակներին եւ պատկերում օծի կամ վիշապի դեմ պայքարող նետաձգի, սիմուրգատիպ արարածների եւ մարտակառով արվող որսորդություն: Գլանաձեւ կնիքների եւ կնքագործմների այս տարրերակի երրորդ խումբն, ըստ ամենայնի, բուն վկանության կնքագործությանը բնորոշ օրինակներն են՝ տաճարի առջեւ կանգնած դիցերի, սայլի վրա ամրացված կենաց ծառի, կորող-բւլսու-ների դեմ կատարվող արարողության, առյուծի ու հերոսի մենամարտի եւ այլ տեսարաններով (աղ. 42, նկ. 11, 12): Կնիքները պատրաստված են գետաքարից, գագատից (գիշեր), քաղքեղոնիտից: Գլանաձեւ կնիքների այս տեսակը երբեք գերիշխող չեղավ վանտոսայան կնքագործության մեջ, իսկ նրա անկումից հետո ընդհանրաես դադարեց օգտագործվել Դայկական լեռնաշխարհում:

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՐԱՎԿ (աղ. 43-50):

Այս տարրերակը կազմում են արձանագիր (սեպագիր, հիերոգլիֆ) տեքստերով օժտված գլանաձեւ կնիքները: Նրանք մեծավ մասամբ ուղեկցվում են երկրաչափական, բուսական, կենդանակերպ, արստրակտ եւ տեսարանային հորինվածքներով: Դնագիտական նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այս կնիքները սկսում են գործածության մեջ մտնել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսից: Անենավաղ օրինակները հանդիպում են Դարավային Միջագետքում եւ կապված են միջագետքայն քաղաք-պետությունների կազմակորման գործընթացի հետ: Նրանք հայտ-

Ապերվել են Ուրի, Թելլոյի (Գիրսու), Լազաշի (Ալ-Ջիբա) եւ Թել-Ֆարայի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերով թվագրվող հնագիտական համալիրներից: Նույն ժամանակաշրջանին վերաբերող հարավմիջազգետքյան արձանագիր գլանաձեւ կնիքների (կոնկրետ տեղադրություն չունեցող) մի-քանի տասնյակ պատահական օրինակներ համալրել են Մերձավոր Արևելքի, Եվրոպայի եւ Հյուսիսային Աներիկայի պետական ու մասնավոր քազմաքիվ հավաքածուները /Frankfort H. 1939, էջ 53, նկ. 20, 21, էջ 88, նկ. 29, էջ 99, նկ. 31, էջ 116, նկ. 32, էջ 143, նկ. 37, 38, էջ 144, նկ. 39; Buchanan B. 1981, նկ. 303, 398, 417, 419, 423, 430, 457, 466, 491, 512, 524, 580, 603, 612, 626, 640, 660, 675, 779, 1093, 1283; Brentjes B. 1983, էջ 83, 87-90, 94; Collon D. 1987, նկ. 81, 83-85, 95, 100, 101, 107, 110, 114, 116-122, 515, 516, 520, 525-533, 540, 637, 638, 672, 759, 761 եւ այլն/: Տեքստերի վերժանությունից միանգամայն պարզ է, որ քննարկվող կնիքներն իրավա-քաղաքական որոշակի ծեռավորում ստացած ինստիտուտի՝ պետական կազմավորման, արդյունք են եւ հարավմիջազգետքյան հիմ հասարակության քազմատիճան սոցիալական սանդղակի վերին եւ միջին շերտերը կազմող անձանց ինքնությունն ու իրավունքը հաստատող արտեֆակտներ են հանդիսացել (աղ. 43): Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսով ու հատկապես ակկադական եւ Ուրի 3-րդ հարստության ժամանակաշրջաններով թվագրվող օրինակները կրուն են Քիշի թագավոր Մեշ-Անե-Փաղայի եւ նրա կոնց Բարնամթարայի, Ակկադի տիրակալներ Սարգոն Ակկադացու եւ նրա դուստր Արդայի, Նարամ-Միջի եւ նրա զավակներ Ուկին-Ուլմաշի (որդին) ու Թուրանափշումի (որդիստրը), Շալկարիշարիի, Ուրի 3-րդ հարստության թագավորներ Ուր-Նամուի, Շելգիի, Շել-Սինի եւ Իբրի-Սինի, Կիսիլի առաջնորդ Իշնա-Իլումի, Իշկուն-Սինի տիրակալ Շաշ-Շամերի եւ այլոց անունները: Սոցիալական սանդղակի վերին աստիճանին կանգնած այս մարդկանցից զատ, կնիքների վրա արձանագրված են նաև նրանցից ցած գտնվող (բայց հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող) այլ անձանց անունները: Դրանց թվում են գրագիր /DUB.SAR/ Ուրանին, Վաճառական /DAM.GAR/ Արու-Թաքը Լու Ինամնայի որդին, թաղիքագործ /GEŠTÚ.KAR.RÁ/ Իլի-Իլլաքը, քրնապետ /LÚ.DINGIR.RA/ Լու-Ղինգիրան, տաճարի կառավարիչ /ŠABRA.É/ Իղին-Աբումը, համհարզ /EN.KAS₄/ Ղուղուն, մունետիկ /NIMGIR/ Իշար-Բելին, մետաղագործների ավագ /UGULA TIBIRA/ Ուրգուն, պարարտ /մատաղացու/ ոչխարների հովիվ /SIPA. UDU. NIGA/ Ախունման՝ Ղինգիր - Անուի որդին, այգեգործ /NU.GIŠ. GIRI₁₁/ Ուր-Աշաքը Լուգալ-Իթիդայի որդին, մատրվակ /SÍLA.ŠU.DU₈/ Աղդան Լուգալ-Էրիդուշեի որդին, ավագ գարեջրագործ /LÚ.BAPPIR.MAH/ Լուգալ-Փայեն, թիկնազորային /UR₅ ŠA₆ GA/ Ուր-Կաթարը Լուգալ-Ուշագայի որդին, մատաղացու ցուլերի տավարած /NU.BĀNDĀ/ Ուր-Շագան, կաշեգործ /AŠGAB/ Ուր-Նամուշդան՝ Լուշամուի որդին, վարպետ-շինարար /ŠITIM GAL/ Ուրգան, երգիչ-երաժշտ /NAR/ Ուր-Մեշը Նազայի որդին, դիվանապահ /ŠAGÀ.DUB.BA.KA/ Ուր-Նունգալը Ուր-Շարայի որդին, հոգաբարձու /ŠA.TAM/ Ուտու-Գիրգալը, արքունական հողաչափ

/LUGAL.KA/ Շնորակամը Ինիմ-Շարայի որդին, թագուհու սպասուիի /GEMÉ.NIN/ Շալիմ-Ցիազը եւ այլոց: Արձանագիր տեքստերի տեղադրությունը գուրկ է կանոնիկությունից: Նրանք կարող են գրադեցնել տեսարանի ողջ աջ կամ ձախ հատվածը, գետեղված լինել վերին աջ կամ վերին ձախ, ստորին աջ կամ ստորին ձախ անկյուններուն, կենտրոնում: Նկատվող օրինաչափությունն այն է, որ արձանագրությունները պարտադիր առանձնացված են վիրագիր տեսարաններից, վերցված են սահմանազատիչ ուղղանկյուն շրջանակի մեջ եւ գետեղված են ուղղահայաց դիրքով /Buchanan B. 1981; Collon D. 1987; Brentjes B. 1983/: Կնիքները պատրաստված են օճառաբարից, օճաքարից, լեռնային բյուրեղից, կրաքարից, հասպիսից, հենատիտից, դիորիտից, նեֆրիտից, լազուրիտից, խեցուց:

Արձանագիր գլանաձեւ կնիքների կիրառությունը Միջագետքում շարունակվեց նաեւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակուն: Ուշագրավ է, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին, դատելով պահպանված օրինակներից, տիրակալների, նրանց զարմիկների, ինչպես նաեւ բարձրաստիճան աշխարհիկ անձանց ու գործարարների անունները կրող գլանաձեւ կնիքները քանակապես ինչ-որ չափով նվազեցին: Մեզ են հասել Լարսայի թագավոր Ոհն-Սինի, Բարելոնի 1-ին հարստության տիրակալ Յանուրաբիի, Աշշուրի տիրակալ Շամշի-Աղադ 1-ինի, Էշուննայի տիրակալ Ուրնինգիզգիդայի եւ նրա որդի Խրտաբանիի ու նրանց սպասավորների անունները կրող օրինակներ: Դրա փոխարեն անհամենատ ավելացան միջագետքյան աստվածներին (Շամաշ, Ներգալ, Խշտար, Ենլիլ, Աղադ, Անուրրու, Ինանա, Շալա, եւ եւ այլն) նվիրաբերված, ինչպես նաեւ նրանց սպասավորներին (քրմեր, քրմուհիներ) պատկանող արձանագիր գլանաձեւ կնիքները: Դրանց վրա պահպանվել են Ենլիլ եւ Ինանա աստվածների տաճարի գերագույն քուրմ Լուգալ-Էնգարդուի, Դեր քաղաքուն գտնվող Ինաննա աստվածուի տաճարի մաքրագործող-քուրմ Խլում-Մուրաբբիի, Ներգալ աստծո քրմեր Խլշու-Իբ-Ախշուի, Դաննիի եւ Բելանումի, Անուրրու աստծո քրմեր Լիթեր-Փիշուի ու Սին-Երիբամի, Մունավիր բնակավայրի Ներգալ եւ Մամմիտում աստվածությունների քուրմ Եա-Իրիշայի եւ այլոց անունները: Այս աննը վկայում է քրմական դասի դերի եւ իշխանության մեջացման մասին: Իզուր չէ, որ նկատի ունենալով այդ հանգամանքն, արդեն մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջից միջագետքյան տիրակալներն իրենց ուստրերից եւ դրուստրերից ունանց նվիրաբերում էին տաճարներին՝ դարձնելով գերագույն քուրմ կամ քրմուի, ապահովելու համար իրենց գերիշխանությունն այդ բնագավառում: Տեքստերի տեղադրությունը կիմնականում պահպանում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից բնորոշ առանձնահատկությունները, այն տարբերությամբ միայն, որ սկսվում են գերիշխել տեսարանից աջ կամ ձախ գետեղված եւ ուղղանկյուն շրջանակի մեջ առնված օրինակները: Կնիքները պատրաստված են հիմնականում հասպիսից, հենատիտից, գոետիտից, ագարից, ամագոնիտից, նազնետիտից:

Սեպագիր տեքստերով միջագետքյան կնիքների մի նոր եւ փայլուն ժամանակաշրջան սկսվեց մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից, երբ Միջագետք

Եերթափանցած կասսիտները ստեղծեցին Բաբելոնի կասսիտական հզոր պետությունը: Այս հարստության տիրակալների (Կարախնդաշ, Բուրնաբուրիաշ, Կուրիգալզու), նրանց մերձավորների (Կարախնդաշի որդի Իշկուր-Մարդուկ, Բուրնաբուրիաշի հպատակներ Կիղին-Մարդուկ, Շա-հլիմնա-Դանքա, Աղադ-Ռւշարշի, Կուրիգալզուի ծառա Դուրի-Ռւլմաշ՝ Բել-Շեւնուի որդի, Կուրիգալզուի ոսկերիչ Ուբալիսու-Մարդուկ՝ Վարադ-Էայի որդի եւ այլոք), բարձրաստիճան պաշտոնյաների (Դիմկիրա-Բանդա, Լուզալ-Մանսի, Միլի-Շիպակ) եւ քրնության ներկայացուցիչների (Թաշմերում աստվածուի սպասավոր Նաբիում, Նաննա աստվածուի քրնուի Զակիրում, Ինաննա աստվածուի ներքինի Թերիմաննի Իշկուր-Շիդադի որդի եւ այլն) անունները կրող արձանագիր գլանաձեւ կնիքների բազմաթիվ օրինակներ հայտնաբերվել են ինչպես Միջագետքի, այնպես էլ նրա սահմաններից շատ հեռու ընկած տարածաշրջանների հանաժամանակյա հնագիտական հանալիրներում (աղ. 44): Ի տարբերություն Հարավային Միջագետքի նախորդ ժամանակաշրջանների արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքների, կասսիտական օրինակների մոտ նկատվում է տեքստի եւ տեսարանի համադրնան նոր եղանակ: Պահպաննելով տեսարանի աջ ու ձախ կողմում ուղղանկյուն շրջանակի մեջ ուղղահայաց գետեղված տեքստի հնից եկող սկզբունքը, կասսիտները տեսարանի վերեւում եւ նրան գուգահեռ, ավելացրին սեպագիր տող (աղ. 44, նկ. 7): Կավի կամ հանաննան այլ նյութի վրա նման կնիքով արվող մեկ ամբողջական գալարադրումը ստացվում էր կնիքն իր առանցքի շուրջը 1,3 անգամ պտտելիս, որի հետեւանքով կնիքի վրա փորագրված տեսարանի աջ եւ ձախ կողմերում վերարտադրվում էր ուղղանկյուն շրջանակի մեջ առնված եւ ուղղահայաց ընթերցվող միեւնույն տեքստը եւ նրանք իրար միացնող վերի հորիզոնական սեպագիր տողը: Ստացվում էր «կամարաձեւ» դասավորված եւ կրկնվող բովանդակությամբ արձանագրություն, որի կենտրոնում փորագիր տեսարանն էր: Ըստ որում ինքը՝ տեսարանը, մեծավ մասամբ կենտրոնական առանցքի (կենաց ծառ, լեռ, դից, արքա) նկատմամբ աջ եւ ձախ կողմերում՝ դեմ դիմաց սիմետրիկ դասավորված պատկերներ (օձեր, ցուլեր, թեւավլոր ծիեր, անգուայուծներ, վարդակներ եւ այլն) եր պարունակում, դրանով իսկ հորինվածքային առումով կարծես թե պարտադիր դարձնելով դաջվածքի մի կողմում արված ուղղահայաց արձանագրության հակառակ կողմում վերարտադրելը: Կնիքները պատրաստված են ագարից, քաղքեղոնիտից, հասպիսից: Հատկապես շատ են լազուրիտից արված օրինակները: Նրանցից մի-քանիսը ոսկե գլխադիրներ ունեն, իսկ մեկը պատված է ջնարակով:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդին, Բաբելոնի կասսիտական պետության բուլացմանը գուգընթաց հզորացող Ասորեստանն աստիճանաբար Միջագետքն, ապա նաեւ ողջ Շին Արեւելքը ողողեց սեպագիր տեքստեր պարունակող գլանաձեւ կնիքների իր արտադրանքով: Դրանք հատկապես լայն տարածում ստացան մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին, Նոր Ասորական թագավորության ժամանակաշրջանում: Նիմրութից, Շերիֆ Խա-նից, Անայից հայտնաբերված, ինչպես նաեւ պատահաբար գտնված բազմա-

թիվ արձանագիր զլանածեւ կնիքները կրում են իրենց տերերի՝ Միջին Աստուրական թագավորության պաշտոնյաներ Շիւմ-Եթիր-Աշշուրի որդի՝ Աշշուր-Ոհմանիի, Աշշուր-Կիմուայի, Իլի-Շիմանիի, Կուրբանիի որդի՝ Աղջու-Ավիլա-Ռևուրի, նոր Աստուրական թագավորության տիրակալներ Աղայ-Նիւրարի 3-րդի եւ նրա զորավար («տուրան») Ներգալայայի, Սարգոն 2-րդի, Մինահերիի որդի Ասսարիադոնի, Կալխուի կառավարիչ Բել-Թարշի-Լուսայի պաշտոնյա Ռիմիննի-Իլիի, Շաղդիկանիի կառավարիչ Շամանուհա-Շար-Իլանիի որդի Նինուրտա-Եթեշի եւ Վերջինիս որդի՝ քրմապետ Մուշեգիր-Նինուրտայի, Բիթ-Յակինի տիրակալ Մարդուկ-Զաքիր-Շիւմիի, թունիքցի Վարադ-Աղայի եւ այլոց անունները (աղ. 45): Աստուրացի կնքագործներն արձանագրությունը տեղադրեցին տեսարանի ամենատարբեր հատվածներում: Այն կարող էր կարդացվել ուղղահայաց դիրքով եւ զետեղված լինել տեսարանից աջ կամ ձախ, կարող էր միախառնված լինել տեսարանի պատկերներին եւ մեկնաբանելով յուրաքանչյուր կերպարի եռւյունը, ընթերցվել ինչպես վերից վար կամ վարից վեր, այնպես էլ ձախից աջ: Դետեւելով կասսիտական կնքագործության սկզբունքներին, տեքստը երբեմն տեղադրվում էր նաև տեսարանի վերեւում՝ հորիզոնական դիրքով, սակայն այդ դեպքում ոչ միշտ է, որ պահպանվում էին փորագիր տեսարանից աջ ու ձախ, ուղղանկյուն շրջանակի մեջ զետեղված եւ ուղղահայաց ընթերցվող նույնիմաստ սեպագիր արձանագրությունները: Կնիքները պատրաստված էին ագարից, քաղքեղոնիտից, դիորիտից, գիշերից (գագատ): Մ.թ.ա. 7-րդ դարի վերջում, Աստուրական թագավորության անկումից հետո, այս կնիքները դադարեցին օգտագործվել Միջագետքում: Նրանց տեղը գբաղեցրին արեննենյան արտադրության օրինակները:

Արձանագրված տեքստերով զլանածեւ կնիքները հանդիպում են նաև Միրիա-Պաղեստինյան աշխարհում: Նման կնիքների վաղագույն օրինակներն այստեղ վերաբերում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծին եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդին, իսկ քանակավես ավելանում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին: Հայտնաբերվել են Մարիի, Ալալայի (Թել-Աչանա), Թել Լեյլանի, Թել-Ռիմահի, Մինեթ-Էլ-Բեյրայի, Թել-Բեյթ-Մերսիմի եւ քազմաթիվ այլ հնավայրերի հնագիտական համալիրներից (աղ. 43, նկ. 3, 7): Սրանց վրա արձանագրված են Մարիի տիրակալ Զիմրի-Լիմի պաշտոնյաներ Անա-Մին-Թակալուի, Կարի-Աղջուի, Իլուկանումի, Յասիմ-Սումուի, փոխարքաներ Իղդին-Էլի եւ Խս-Դագանի, Զիմրի-Լիմի կողմից Հալեպ ուղարկված դեսպան Նուր-Մինի, Զիմրի-Լիմի հպատակ՝ Կարանայի տիրակալ Քարրաղումի՝ Իղդին-Դերիտումի որդու, Մարիի եւ Մինալիթների տիրակալ Յահուն-Լիմի դստեր (անունը չի պահպանվել), Բուզուրանիի տիրակալ Յաուշ-Աղջուի, Ափում Երկիրի թագավոր Յակում-Աշարի՝ Դարի-Եփուիի որդու, Մարիի մի այլ տիրակալ Լազիդ-Լիմի սպասավոր Քիշրիի որդի՝ գրագիր Իշմե-Իլումի, մարիցի գործարար Մուկանիշումի, Թուրայի թագավոր Յարիմ-Լիմի եւ վերջինիս որդի ու փոխանորդ Սումիրափայի, Յամհաղի (Հալեպ) թագավոր Համնուրաբիի եւ նրա որդի Աբբանի, Եբլայի թագավոր Ինգիլմգուրի որդու (անունը չի պահպանվել), Կարբեմիշի թա-

գավոր Ավլահանոյայի, վերջինիս դուստր Մաթրունայի՝ Կուբարա աստվածուիու գերազույն քրմուիու, Ներզալ աստծո սպասավոր-քուրմ Իշլու-Իբնիշուի՝ Աթանահ-Իլուի որդու, Նանայա աստվածուիու քրմուի Շանանայայի՝ Զարիքումի դստեր եւ այլոց անունները /Parrot A. 1956, նկ. 372; Amiet P. 1960, նկ. 2, 12; Wooley C. 1955, նկ. 12, 64; Nougayrol J., Amiet P. 1962, նկ. 1; Parrot A. 1959, էջ 146-147; Collon D. 1987, էջ 35-39, նկ. 119-120; Frankfort H. 1939, էջ 252-258; Brendjes B. 1983, էջ 103, 104, 108-115, 139/(աղ. 46): Իրենց հորինվածքային առանձնահատկություններով եւ սեպագիր տեքստերի տեղադրմամբ (տեսարանի աջ կամ ձախ կողմում ուղղահայաց դիրքով), նրանք (հատկապես վաղ օրինակները) հիմնականում կրկնում են Միջագետքյան կնքագործության նմուշները եւ հավանաբար հենց վերջինիս արտադրության արդյունք են հանդիսանում: Սիրիա-Պաղեստինյան աշխարհից հայտաբերված արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքները քանակական առումով անհամեմատ զիջում են Միջագետքի համաժամանակյա օրինակներին: Նկատվում է, որ այստեղ նրանք հիմնականում իշխող վերնախավի եւ քրմության մեջաշնորհն են հանդիսացել: Ինչ վերաբերում է միջին խավերին (առեւտրականներ, գործարար մարդիկ, արենատավորներ), որոնց ներկայացուցիչները Միջագետքում նույնպես արձանագիր տեքստերով սեփական գլանաձեւ կնիքներ կրելու իրավունք ունեին, ապա այստեղ վերջիններս (մի-քանի անհատներից բացի, որոնց հավանաբար թագավորն ինքն անձամբ թույլատրում էր դրանք կիրառել) հիմնականում գրկված էին այդ իրավունքից: Կնիքները պատրաստված են կրաքարից, օձաքարից, հենամատիտից, հասպիսից, օճառաքարից, ագարից, օքսիդիանից, ամազոնիտից:

Սիրիա-Պաղեստինյան արձանագիր տեքստերով կնիքների արտադրության համար մի ուշագրավ ժամանակաշրջան սկսվեց մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից, երբ պատմական թատերադեմ իջավ Միտաննի (Խանիգալքաղ) պետությունը: Մեզ են հասել այս պետության տիրակալների մի մասի եւ նրանց վասալների արձանագիր գլանաձեւ կնիքները կամ դրանց դաշվածքները (աղ. 44, նկ.1-6): Նրանց վրա հանդիպում են Միտաննիի հզոր թագավորներ Շենտարնայի՝ Կիրտայի որդու եւ Սաուսդատարի՝ Պարսադատարի որդու, Սիղոնի թագավոր Աննիփիի՝ Աղումնուի որդու, Ալալախի թագավոր Իդրիմիի եւ նրա որդի ու փոխանորդ Նիքմեպայի, Ոհնութ-Իլաննի վասալ՝ կառավարիչ Ջաղադ-Իղրիի որդի Ափիլ-Աղոնուի, Արրապիսայի թագավոր Իրիթեշուրի՝ Կիփ-Թեշուրի որդու, Ջամբան քաղաքի տիկնոց (տիրուիու)՝ արքայադուստր Շաամբիի եւ այլոց անունները /Collon D. 1975, նկ. 189; Collon D. 1987, էջ 64, նկ. 269, էջ 127, 128, նկ. 542, 543, 546, 548, 549, 552; Porada E. 1979, նկ. 2; Schaeffer C. 1956, նկ. 30-31; Frankfort H. 1939, էջ 273-283, աղ. 42-րդ, 43-րդ; Brendjes B. 1983, էջ 110-112, 126-131; Buchanan B. 1981, էջ 438-439, նկ. 1283, էջ 462/: Ուշագրավ է, որ այս ժամանակաշրջանում Սիրիա-Պաղեստինյան աշխարհում սեպագիր արձանագրություններ կրող գլանաձեւ կնիքների կողքին հայտվում են նաև հիերոգլիֆ խեթերեն կամ եգիպտերեն, ինպես նաև երկեզու (սեպագիր լուսիերեն եւ հիերոգլիֆ

խեթերեն) տեքստեր պարունակող օրինակներ: Դրանց թվում են Կարքեմիշի թագավոր Ինի-Թեշութիր (սեպագիր լուվիերեն եւ հիեռոգլիֆ խեթերեն) եւ բախտագուշակ Կարի-Դազանի (հիեռոգլիֆ խեթերեն) Կնիքները, ինպես նաև Ալալախից հայտնաբերված (Վիենայի թանգարանում պահպող) եւ կեղծ Եգիպտական հիեռոգլիֆներ պարունակող երկու նմուշները: Ըստ ամենայնի սրանց առկայությունը պայմանավորված էր Մերձավոր Արևելքում տիրող քաղաքական իրավիճակով Նոր Խեթական եւ Նոր Եգիպտական թագավորությունների հզորացնամբ եւ ազդեցության ոլորտների ընդլայնմամբ: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսի Սիրիա-Պաղեստինյան քննարկվող Կնիքների մոտ եւս շարունակվում է ուղղահայաց արձանագրված տեքստի՝ տեսարանից աջ կամ ձախ տեղադրումը: Ինչ վերաբերում է տեքստը տեսարանի վերեւում հորիզոնական դիրքով տեղադրելուն, ապա ըստ հրապարակի վրա առկա նյութերի, հորիզոնական ձեւավորման այդ եղանակը չօգտագործվեց միտաննիական կնքագործության մեջ: Այս շրջանի Կնիքները պատրաստված են քաղքեդնիտից, կվարցից, հեմատիտից, ագարից, կապույտ ապակուց, ջնարակված լազուրիտից: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսից Սիրիա-Պաղեստինյան աշխարհում տարածում ստացան Նոր Ասսուրական թագավորության տիրակալների եւ նրանց մերձավորների արձանագիր կնիքները: Պահպանվել ու մեզ է հասել դրանցից մեկի՝ Աղադ-Շիրարի 3-րդի պաշտոնյա Նաբու-Շար-Ուսուրի ազգաբեկները, որ հայտնաբերվել է Սուլեյմանիեի պեղումներից: Մ.թ.ա. 6-րդ դարի վերջերից Սիրիա-Պաղեստինյան աշխարհն ընկապ Աքեմենյան իրանի գերիշխանության տակ եւ այստեղ տարածում ստացան աքեմենյան կնքագործության օրինակները:

Արձանագիր տեքստերով գլանածեւ կնիքների ոչ մեծ խումբ հայտնի է նաև Աֆրիկայի հյուսիս-արևելյան հատվածից՝ մասնավորապես Եգիպտոսից: Դիմնականում զարգանալով միջագետքյան կնքագործության ազդեցության տակ եւ ընդհանուր առնամբ բնորոշ չլինելով Եգիպտական կնքագործական ավանդույթներին, գլանածեւ կնիքները եւ մասնավորապես արձանագիր տեքստերով օրինակներն այստեղ լայն տարածում չստացան եւ հայտնի են ոչ մեծ քանակով: Դրանց հիմնական մասը Եգիպտոսում կատարված պատրական գնումների արդյունք են եւ միայն հատ ու կենտ օրինակներ կամ դրանց դաշվածքները սերում են Էլ-Բարի, Նազա-Էղ-Ղերի, Թերեի եւ Թել-Ամարնայի հնագիտական համալիրներից /Frankfort H. 1939, էջ 297, նկ. 99, 101, աղ. 46-րդ; Breytjes B. 1983, էջ 99; Collon D. 1987, նկ. 583-586; Porada E. 1974, էջ 132-142; Կինք X. 1976, էջ 52-54; Փլիտթեր H. 1924, էջ 245; Scharff A. 1926, էջ 58; Brunton G. 1937, էջ 97-98/: Նրանցում հիշատակվում են 4-րդ հարստության փարավոններ Դենեֆրեի (Ձեղեփուա) եւ Մենկառլայի (Մինկերին), 6-րդ հարստության փարավոն Պեափի 1-ինի (Մերիրե), 12-րդ հարստության փարավոններ Ամենեմհեր 3-րդի (աղ. 48, նկ. 3) եւ Սեբեկնեֆերուի (աղ. 48, նկ. 7), 25-րդ հարստության փարավոն Շաբակայի (Սեֆերլարե), մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսի պաշտոններ Հեսի եւ Ուղավառնենի, գրագիրներ Նեֆեր-իրը-Նեբելսի, Նեֆեր-

գեղ-Մաաթի եւ այլոց անունները: Տեղի կնքագործության ավանդույթներին համապատասխան, այս կնիքների վրա տիրոջ անունը փորագրվում էր ձվածիր շրջանակի մեջ եւ տեղադրվում տեսարանի կենտրոնում (աղ. 49, նկ. 1, 3, 4): Կնիքները պատրաստվում էին փայտից, կավից, փղոսկրից, հասպից, ուկուց եւ երբեմն ծածկվում կապույտ ջնարակով: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին քառորդը, ոչ մեծաքանակ այս կնիքները հիմնականում պահպանելով արձանագիր գլանաձեւ կնիքի տեղի ավանդույթներին հարմարեցված կանոնիկ ձեւը, մ.թ.ա. 7-րդ դարի վերջերից փաստորեն դուրս եկան կիրառությունից, տեղը զիջելով հատուկենու աքեմենյան օրինակներին:

Արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքների արտատպություններ կան նաեւ Փոքր Ասիայում: Դրանք հիմնականում վերաբերվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդին եւ հայտնաբերվել են Փոքր Ասիայի առեւտրական երկու խոշոր կենտրոնների՝ Բյուլ-թեփի-Կանիշի եւ Աչեմհույուկի պեղումներից: Դիմնականում առեւտրա-տնտեսական բնույթի պայմանագրերը վավերացնող այդ կնիքների դաշվածքները պահպանվել են կավեսեպագիր սալիկների վրա եւ կրում են Իկունումի որդի ԱՅ-Լուգալի, Իլակարկաբուի որդի Շամշի-Աղադի, Փուլսունա-Աղադի ծառա Դադի-Երալի, Կարքեմիշի կառավարիչ Ափլահանդայի եւ Մարիի տիրակալ Յահուն-Լիմի անունները: Մի-քանի դաշվածքներում էլ միայն սեպագիր (գաղափարագիր) դիցանուններ են արձանագրված՝ Նիմսիաննա, Կաբբա, Երկնի (Ան աստծո) բարի հրեշտակ Նին-Շիլուուր, Երկնի (Ան աստծո) որդի Իշկուր (Աղոու, Ադայ) /Balkan K. 1955, նկ. 1-5; Charpin D. 1984, էջ 51; Collon D. 1987, նկ. 136, 173, 186, 188, 539; Brentjes B. 1983, էջ 106-108; Buchanan B. 1981, նկ. 1136, 1139, 1141, 1143, էջ 462; Porada E. 1980, աղ. 3-րդ, նկ. 1, 11, 17; Özgür N. 1966, էջ 167-178/: Այս օրինակներում եւ՝ սեպագիր լեզուն (ակ-կադերեն), եւ՝ նրանցում հիշատակվող անձնանունները, դիցանուններն ու տիտղոսները վկայում են, որ ինչպես սալիկներն, այնպես էլ նրանց վրա արված արձանագրություններն ու դաշվածքները Հյուսիսային Սիրիայի եւ Միջագետքի առեւտրականներին եւ գործարարներին պատկանող վավերագրեր են, որ Փոքր Ասիա են բերվել առեւտրական որոշակի գործարքների իրականացնան նպատակով: Ինչ վերաբերում է բուն Փոքր Ասիայում հայտնաբերված արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքներին (ոչ դաշվածքներին), ապա ննան օրինակներ մեզ առայժմ հայտի չեն: Ոշագրավ է, որ առեւտրական «կարուս» Կանիշի եւ Աչեմհույուկի կործանումից հետո, արձանագիր տեքստերով դաշվածքներն ընդհանրապես դադարում են երեւալ Փոքր Ասիայի մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների հնագիտական հուշարձաններում:

Արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքներ հայտնի են նաեւ Իրանական սարահարթում հատկապես նրա արեւմտյան շրջաններում: Վաղագույն օրինակները վերաբերում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծին (աղ. 46, նկ.1), Միջագետքի նորշումերական կնքագործության (Ուրի 3-րդ հարստություն) ընդգծված ազդեցությունն են կրում, հիմնականում պա-

տահական գտածոներ են եւ պահվում են Յեյլի ու Բրիտանական թանգարաններում /De Clercq L., Menant J. 1888, նկ. 121; Collon D. 1986, նկ. 472; Collon D. 1987, նկ. 122, 540; Buchanan B. 1981, էջ 384-387, նկ. 1092-1093, 1095-1097: Տեքստերը տեղափորված են տեսարանի աջ կամ ձախ կողմում, ուղղանկյուն շրջանակի մեջ, ուղղահայաց դիրքով եւ հիշատակում են Յարհար երկրի (գտնվել է Զագրոսի լեռներում) առաջնորդներ Զարդամուի եւ Թիշաթալի, Վերջինիս հպատակ Մասիամ-Եշրարի, Ներգալ աստծո քուրմ Յարլուի՝ Ափիլի որդու, Շիլ-Իլիի որդի Շիլ-Իլաբրատի, Ուրաշ քրմուի սպասուի Շար-Ամուրուի եւ սպա Շելիբի սափրիչ Աղափաշուրի անունները: Այս ժամանակաշրջանի կնիքները պատրաստված են հասպիսից, լազուրիտից, հենատիտից, օձաքարից, կրաքարից, թերթաքարից, ծովախնեցուց:

Մ.թ.ա.2-րդ հազարամյակում եւս արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքները լայն տարածում չստացան Իրանական սարահարթում: Շիշի, Չողա-Զանքիլի (Դուր-Ունթաշ), Սուրիս-Դումի, Յաֆք թեփեի, Յամադանի եւ Մարլիկ թեփեի հնագիտական համալիրներից հայտնաբերված այդ կնիքների քանակը չի անցնում երկու տասնյակից: Նրանցում եւս արձանագիր տեքստերն ուղղահայաց դիրք ունեն, առանձնացված են ուղղանկյուն շրջանակով եւ տեղափորված տեսարանի աջ կամ ձախ հատվածներում: Պահպանվել են Իշմե-կարաբ-Իլուի, Ներգալ աստծո սպասավոր Կուկ-Սինի՝ Ապիկուի որդու, Ասորեստանի Շամշի-Աղադ թագավորի եղբայր Ամինումի սպասավոր Մուլքադիմումի, ոմն էբարատի, Կիրվաշիր եւ Ինչուշինակ աստվածների քուրմ՝ Շիշի եւ Անշանի տիրակալ Թեփրի Անարի, Ութառլուի ծառա էլմեշումի՝ Էնգուրի որդու, եա (Ենկի) աստծո քուրմ Եա-Իբրիշայի՝ Շիւնում-Ելի որդու եւ Էլամի թագավոր Շիւտրուկ Նախունտե 2-րդի որդի Ջուփան-Կիրինի անունները /Amiet P. 1973, էջ 37, նկ. 48; Amiet P. 1972, նկ. 1769; Lambert W. 1979, նկ. 42; Collon D. 1986, նկ. 38; Dyson R., Harris M. 1986, թիվ 129, 130, 220; Porada E. 1970, նկ. 24, 54, 55; Collon D. 1987, նկ. 172, 289-291, 294, 536, 547, 557, 763, 795; Brentjes B. 1983, էջ 123-126; Buchanan B. 1981, էջ 386, 387, նկ. 1098, 1099/: Քննարկված նյութը ցույց է տալիս, որ Իրանական սարահարթն արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքների արտադրության առումով ավելի էր կապված Միջազգետքին (հատկապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակում), քան Փոքր Ասիան: Դա տարածքային, քաղաքական եւ տնտեսական բնույթի ընդհանուր շահերից զատ, ըստ ամենայնի, պայմանավորված էր նաև Բաբելոնի Կասսիտական հարստության էթնիկ պատկանելությամբ: Նրանց զագրոսյան ծագում էր Վերագրվում: Այս ժամանակաշրջանի Իրանական կնիքները պատրաստված են հենատիտից, լազուրիտից, կվարցից, կրաքարից, դիորիտից: Այս տարբերակին պատկանող գլանաձեւ կնիքները, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում եւ հատկապես 1-ին հազարամյակի 1-ին կեսին Իրանական սարահարթում խիստ նվազեցին: Դա, ըստ Երեւույթին, ինչ-որ չափով կապված էր Յին Արեւելքում այս ժամանակաշրջանում կատարվող էթնիկական տեղաշարժերի եւ վարչա-քաղաքական նոր կազմավորումների հանդես գալու հետ: Արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքները Իրանական սարահար-

թում կրկին հայտնվեցին արդեն մ.թ.ա. 1-ին հազարամյակի 2-րդ կեսին, հզոր Աքեմենյան կայսրության օրոր:

Արձանագիր տեքստերով չորս գլանաձեւ կնիքներ կան նաեւ Միջերկրականի ավազանում: Դրանք հայտնաբերվել են Բալկանյան թերակղզու կենտրոնում գտնվող հին հունական թերեւ պաշտամունքային կենտրոնի պեղումների ժամանակ, պատրաստված են լազուրիտից եւ վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին /Porada E. 1981, Ակ. 20, 26, 31, 32; Collon D. 1987, Ակ. 240, 242, 243, 874; Անդրեև Ю. 1986, էջ 61; Գորան Բ. 1990, էջ 55/: Արձանագրությունները փորագրված են տեսարանի ինչպես վերին, այնպես էլ կողային հատվածներում (կամարաձեւ) եւ հիշատակում են Բաբելոնի կասխտական հարստության տիրակալ Բուրնաբուրիաշի պաշտոնյաներ Շա-Իլումա-Դամքային եւ նրա որդի Կիոյին Մարդուկին, Նին-մահի սպասավոր Սիլի-Շիպակին եւ կասխտական հարստության վասալ, Յարագատոտում Երկրի կառավարիչ, Պարաբ աստծու գերագույն քուրմ՝ Համմի-Դարաքին: Չորրորդ կնիքի տեքստը նվիրատվական ուղերձ է, ուղղված Մարդուկ աստծուն: Չորս կնիքներն էլ կասխտական կնքագրությանը բնորոշ արտադրանք են, արված են մեծ վարպետությամբ եւ վկայում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին կասխտական Բաբելոնի եւ Միջերկրականի ավազանի (նաևնավորապես Բալկանյան թերակղզու) միջեւ գոյություն ունեցած քաղաքական եւ մշակութային կապերի մասին: Ուշագրավ է, որ կասխտական կնիքներից զատ (ոչ նրանցից առաջ եւ ոչ էլ հետո) Միջերկրականի ավազանի հնագիտական հուշարձաններում այլեւս երբեք չեն հանդիպում արձանագիր տեքստով գլանաձեւ կնիքներ:

Այս տարբերակին պատկանող գլանաձեւ կնիքների եզակի օրինակներ, ըստ ամենայնի, օգտագործվել են նաեւ Արաբական թերակղզում եւ Պարսից ծոցի կղզիների շրջանում: Այդ են վկայում պատահաբար հայտնաբերված ու ներկայում Լուվուրում ու Բրիտանական թանգարանում պահպող Երեք գլանաձեւ կնիքները, որոնց վրա արձանագրված տեքստերն արնչվում են քննարկվող տարածաշրջանի հետ: Դրանցից Երկուսը, որ կատարման տեխնիկայով եւ ձեւակորմանը շատ նման են իրար, հիշատակում են Կասխտական Բաբելոնի տիրակալ Կուրիգալզուի պաշտոնյա Ուբալիշու-Մարդուկին՝ Վարադ-Էայի որդուն: Նրա հետ միասին, տեքստերից մեկում խոսք է գնում Դիլմունի (Բահրեյն ու Ֆայլակա կղզիներ) փոխարքայի (անունը չի լներեցվում): Կուրիգալզուի հպատակի մասին: Երկու կնիքներն էլ կասխտական կնքագրության արդյունք են, վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին եւ պատրաստված են ազարից ու քաղքեղոնիտից /Reade J. 1986, էջ 332; Collon D. 1987, էջ 58-59, Ակ. 237, 929; Limet H. 1971, աղ. 6, Ակ. 10/: Երրորդ կնիքն, ըստ Բրիտանական թանգարանում պահպող փաստաթղթի, գտնվել է Յարավային Միջագետքի Անա բնակավայրում եւ շատ ուշագրավ, ու խիստ հազվադեպ հանդիպող, հարավարաբական (Արաբական թերակղզու հարավում օգտագործվող) սեպագիր տեքստ է կրում, որում հիշատակվում է ոմն Շուր-Աղա՝ Նաբու-Կիրիբեդի որդին: Այն նորասսուրական կամ նորբարելունյան կնքագրության սկզբունքներով՝ ագարից պատ-

րաստված նմուշ է, եւ վերաբերում է մ.թ.ա. 1-ին հազարամյակի 2-րդ քառորդին /Rawlinson H. 1865, էջ 234, աղ. 6-րդ; Collon D. 1987, էջ 82, նկ. 379/:

Արձանագիր տեքստով գլանաձեւ այլ կնիքներ այս տարաշրջանում առաջման հայտնի չեն:

Նույն տարբերակին վերաբերող մեկ կնիք էլ առնչվում է Ինդոսի հովտի հետ: Այն եւս պատահական գտածոն է եւ պահպում է Լուվուրը (Լ. Դե Բլերկի հավաքածու): Կանաչ քարից պատրաստված այս օրինակը կատարման տեխնիկայով, պատկերագրությամբ եւ տեքստի տեղադրման եղանակով կրկնում է ակկադական կնքագրության (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 3-րդ քառորդ) առանձնահատկությունները եւ միջագետքյան արտադրության արդյունք է /De Clercq L., Menant J. 1888, նկ. 83; Collon D. 1987, էջ 147, նկ. 637/: Կնիքի վրա փորագրված տեքստը հայտնում է Մելուխիսա երկրի (Ինդոսի հովտ) թարգմանիչ Շիւ-Խիշուի անունը: Բացառիկ նշանակություն ունեցող այս կնիքը հնարավորություն է տալիս ենթադրել Յարավային Միջագետքի եւ Ինդոսի հովտի միջեւ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում գոյություն ունեցած որոշակի առնչությունների մասին: Արձանագիր տեքստերով գլանաձեւ այլ կնիքներ այս տարածքից առաջման հայտնի չեն:

Արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքներ հանդիպում են նաև Յայկական լեռնաշխարհում: Դրանցից վաղագույնը պատահաբար հայտնաբերվել է Նախիջևանի տարածքում Արաքս գետից ոչ հեռու (աղ. 50, նկ. 1): Դատելով Ա. Եսսենի մոտ պահպանված արտատպությունից, այն վերաբերում է Յամնուրաբիի դարաշրջանին (Բաբելոնի 1-ին հարատություն) եւ պետք է որ թվագրվի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդով /Խանզադյան Թ., Պոտրովսկի Բ. 1984, էջ 64-65, նկ. 5/: Նմանատիպ տեսարաններով ու տեքստերով գլանաձեւ կնիքներ հայտնի են Միջագետքի (Լարսա, Թել-Թայա, Թել Ոյնախ) եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհի (Մարի, Թել-Լեյլան, Տերքա, Թել-Ազանա-Ալալախ) համաժամանակյա հրոշարձաններից, ինչպես նաև Վիենայի, Յելի եւ Բրիտանական թանգարանների հավաքածուներից /Collon D. 1986, նկ. 163, 343, 345; Bleibtreu E. 1981, նկ. 65; Reade J. 1973, էջ 173-175, աղ. 72-րդ, նկ. ե, ձ; Beyer D. 1984, էջ 255-256; Buchanan B. 1981, նկ. 834, 837, 838, 840, 848, 849, 855, 858, 899, 941, 943-947/: Նախիջևանյան օրինակի վրա եւս արձանագրությունն ընթերցվում է վերից վար, առնված է ուղղանկյուն սահմանագծի մեջ եւ տեղադրված տեսարանից աջ: Արտատպության որակը եւ ակկադերեն սեպանշանների վատ պահպանվածությունը թույլ չեն տալիս վերծանել տեքստը: Պարզորոշ ընթերցվում է միայն «DINGIR» «աստված» գաղափարագիրը, որն էլ թույլ է տալիս ենթադրել, որ տվյալ դեպքում, հավանաբար, գործ ունենք բաբելոնյան աստվածներից մեկին (Շամաշ, Էա, Խշտար, Սարդուկ եւ այլն) ուղղված նվիրատվական ուղերձ-մաղթանքի հետ: Այդ հանգամանքն է մատնանշում նաև կնիքի պահպանված մասի վրա փորագրված մատադացու այժիկով քրմի պատկերը:

Արձանագիր տեքստով հաջորդ գլանաձեւ կնիքը հայտնաբերվել է Մեծամորի թիվ 11 դամբարանից /Խանզադյան Թ., Պոտրովսկի Բ. 1984, էջ 59-65,

Ակ. 1/։ Նրա վիա փորագրված հիմնօգիտական հիերոգլիֆ տեքստը հիշատակում է «Մեծ Սանգար Երկրի կառավարիչ Կուրիգալզուխ» (աղ. 50, Ակ. 2)։ Ոչ մի կասկած, որ մեր առջև Բաբելոնի կասմիտական հարստության հղոր տիրակալներից մեկի՝ Կուրիգալզու 1-ինի (Նրա օրոք էր, որ Եգիպտոսի փարավոնները Երբեմն Բաբելոնը կոչում էին նաեւ Սանգար) անունը կրող կնիք է։ Առաջին հայացքից իսկ կնիքի ձեւավորման մեջ նկատվում են մի քանի, ըստ որում իրարից տարբեր, կնքագործական կենտրոններին բնորոշ մանրամասներ։ Նախ ուշադրություն է գրավում արձանագրության անսովոր ձեւը։ Ի տարբերություն Եգիպտական կնքագործության օրենքների, տեքստի անձնանունը ոչ թե վերցված է շրջանակի մեջ եւ գետեղված տեսարանի կենտրոնում, այլ միջագետքյան եւ հյուսիսիրիհական կնքագործությանը համապատասխան՝ տեղափորված է տեսարանից ձախ, առնված է ուղղանկյուն սահմանագծի մեջ եւ ընթերցվում է վերից վար։ Նման կնիք կարող էր պատրաստել Եգիպտական հիերոգլիֆներն իմացող, բայց ոչ Եգիպտացի (թերեւս խուրրի) վարպետը, որը հիերոգլիֆ տեքստով գլանաձեւ կնիք պատրաստելու պատվեր ստանալով, այն ձեւավորել էր իր միջավայրին բնորոշ հորինվածքային նորմներին համապատասխան։ Այդ է պատճառը, հավանաբար, որ կնիքին փորագրված տեսարանուն ի մի են հավաքված Եգիպտական կահույքագործությանը բնորոշ գահավորակն ու եգեյա-ուգարիթյան Երկանք սափորները, ուգարիթյան հագուստով ու կասսիտ մեծատոհմիկին բնորոշ կեցվածքով անձնավորությունն ու պաղեստինյան տարածաշրջանին բնորոշ դարսավոր հանդերձով կինը (քրնուիին)։ Կնքագործական տարբեր դպրոցներին բնորոշ առանձնահատկությունների նման համակցությունը հնարավոր էր հատկապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին, երբ Յին Արեւելքում իրենց գերիշխանությունը հաստատած նորեգիպտական, նորիսեթական, կասմիտական եւ միտաննիական թագավորությունների հարեւանությամբ կամ ենթակայության տակ գոյատեսող մյուս քաղաքական ու երեկական կազմավորումներն աշխատում էին հասարակական կյանքի, կենցաղի, հավատալիքների ընդունակման ճանապարհով սիրաշահել իրենց քաղաքական բոլոր հղոր հակառակորդներին։ Արդյունքում տարբեր վարչա-քաղաքական եւ էրնո-մշակութային միջավայրերից վերցված սոցիալական, տնտեսական եւ մշակութային բնույթի առանձին երեւություններ (այդ թվում նաեւ տարբեր կնքագործական դպրոցներին բնորոշ հորինվածքային առանձնահատկություններ) հայտնվում էին մեկ համակցության մեջ։ Դրա արդյունքն է նաեւ Մեծամորի ագարե գլանաձեւ կնիքը։ Ինչ վերաբերում է Նրա պատրաստման կոնկրետ վայրին, ապա, ամենայն հավանակությամբ, դա Ուգարիթն է՝ Յին Արեւելքի եւ Միջերկրական ավազանի առեւտրա-մշակութային եւ սոցիալ-տնտեսական փոխարժությունների խոշորագույն կենտրոնը։ Մեծամորյան օրինակի սկզբունքով պատրաստված արձանագիր գլանաձեւ կնիքներն այստեղ հաճախակի երեւույթ են։ Յայաստանյան կնիքին առավել մոտ է ներկայում Փարիզի ազգային գրադարանում պահպող հասպիս օրինակը (աղ. 48, Ակ. 10), որի հիերոգլիֆ տեքստում ու տեսարանը ընդհանուր առնամբ արված են մեծամորյանի հորինվածքային սկզբունքով

/Collon D. 1986, էջ 57-70, նկ. 13/: Տեսարանի հորինվածքային կառուցվածքով եւ չափերով մեծամորյան կմիջին կարելի է համարդել նաեւ նախորդ տարբերակին պատկանող, Պերատիի (Հունաստան) թիվ 142 դամբարանից հայտնաբերված երկնաքարեն գլանաձեւ կմիջը, որ թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով /Sakellarakis J. 1982, նկ. 57; Collon D. 1987, էջ 72-73, նկ. 319/: Դայլկական լեռնաշխարհի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առ այսօր հայտնի մյուս հուշարձաններում արձանագիր տեքստերով գլանաձեւ կմիջներ այլեւս չեն հանդիպում: Դրանք այստեղ կրկին երեւան են գալիս (խիստ սահմանափակ քանակությամբ) արդեն մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին եւ կապված են Վանտոսափի թագավորության (Ուրարտու) հետ: Նման կմիջի արտատպություն պահպանվել է Կարմիր-բլուրից հայտաբերված կավե սալիկներից մեկի վրա (աղ. 50, նկ. 4) եւ վերարտադրում է «Ուսա Սարդուրիի/ի որդի» արձանագրությունը /Զարությունյան Ն. 1958, էջ 201; Պոտրովսկի Բ. 1959, աղ. 23-րդ, նկ. 2; Դյակոն Ի. 1963, էջ 32, 121, 135/: Վերջինս գետեղված է տեսարանի վերեւում, փաստորեն կրկնում է կասսիտական ժամանակաշրջանից հայտնի տեսարանի վերեւում հորիզոնական դիրքով արվող արձանագրության սկզբունքը եւ, որն ամենաուշագրավն է, ի տարբերություն կասսիտական կնճագործության, հորիզոնական դիրքով արված այլ արձանագրության մնացորդներ է կրում նաեւ տեսարանի ստորին հատվածում: Դորինվածքի այս ձեւն օտար է այլ տարաշրջանների, այդ թվում նաեւ նորաստրական կնճագործության համար (որն այդ ժամանակաշրջանում լայն տարածում ուներ Մերձավոր Արեւելքում) եւ վանտոսայան նորանուժություն է Հին Արեւելքի կնճագործության մեջ: Արձանագիր տեքստերով գլանաձեւ կմիջների դաշվածքների մնացորդներ հայտնաբերվել են նաեւ Վան-Տուշպայի պեղումների ժամանակ /Lehmann-Haupt C. 1898, նկ. 80; Lehmann-Haupt C. 1910, էջ 9, նկ. 3; Պոտրովսկի Բ. 1944, էջ 278-281, նկ. 90, էջ 318-319, նկ. 103; Պոտրովսկի Բ. 1959, էջ 228-229, նկ. 74, 75; Btentjes B. 1983, էջ 154/ (աղ. 50, նկ. 3): Վանտոսափի թագավորությանը վերաբերող, վարդագույն քաղքեղոնիտից պատրաստված մի ուշագրավ արձանագիր գլանաձեւ կմիջը էլ ներկայունս պահպան է Դագագայում (աղ. 50, նկ. 5): Նորաստրական կնճագործության սկզբունքներով արված այս օրինակի վրա բառացի կարդացվում է Ե/Սա/ կմիջը է Ուրարտական քաղաք Մուլսասիրի թագավոր Ուրգանայի, որը վիշապ օձի նման, թշնամական լեռներում ճանապարհ բացեցէ /Zadoks-Jrsephus Jitta A. 1952, նկ. 148; Collon D. 1987, էջ 86-87, նկ. 405/: Վանտոսափի թագավորության կնճագործությանը հատկապես պատկերագրության առումով (ձիու դիրքը, հեծյալի կեցվածքն ու հանդերձանքը, սալավարտը, արյուծի որսը) մոտ է նաեւ Բրիտանական թանգարանում պահպան, քաղքեղոնիտից պատրաստված կմիջներից մեկը (Բ.Թ. 89009), որը հիշատակում է «Փիրատիշի որդի Այանակայայ» անունը /Wiseman D. 1959, աղ. 107; Collon D. 1987, էջ 88-89, նկ. 412/: Բացառված չէ, որ վերջինս Վանտոսափի թագավորությանը ենթակա երկիրներից մեկի առաջնորդն է հանդիսացել: Սեպանշանով արված գաղափարագիր հանդիպում է նաեւ Կարմիր-բլուրից հայտնաբերված մի գլա-

նաձեւ կնիքի վրա /Պոտրովսկий Բ. 1970, Ակ. 107/: Վանտոսայի թագավորության անկումից հետո արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքներ դադարեցին օգտագործվել Հայկական լեռնաշխարհում:

Իմի բերելով գնալաձեւ կնիքներին վերաբերող շարադրանքը, կարելի է արձանագրել, որ վերջիններս, թեև քանակապես ամենաներկայացուցչականն են, այսուհանդերձ տարբերակի մակարդակում ներկայացված են հոդինվածքային առանձնահատկությունների 4 տարբերակներից 3-ով միայն (թացակայում է երկրորդ՝ պատկերային տարբերակը): Նրանց տարածման աշխարհագրությունն ընդգրկում է Եգիպտոսը, Միջերկրականի ավազանը, մասամբ Փոքր Ասիան, Սիրիա-Պաղեստինյան աշխարհը, Հայկական լեռնաշխարհը, Միջագետքն, Իրանական սարահարթը, Միջին Ասիան եւ Ինդոսի հովիտը (աղ. 51): Գլանաձեւ կնիքների եւ՝ առաջին (երկրաչափական), եւ՝ երրորդ (տեսարանային) տարբերակներն, ըստ եռթյան, հանդես են գալիս Միջագետքի, Սիրիա-Պաղեստինյան աշխարհի եւ Իրանական սարահարթի մ.թ.ա. 4-րդ հազարամյակի կեսերի հնագիտական համալիրներում միաժամանակ եւ, եթե մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներից երկրաչափական տարբերակը դադարում է կիրառվելուց, ապա տեսարանայինը՝ շարունակում է իր գոյությունը մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը: Նույն տարբերակների կնիքները մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծից հանդես են գալիս եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում տարածվում Փոքր Ասիայի, Եգեյան աշխարհի, Ինդոսի հովիտի եւ Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններում: Ինչ վերաբերում է գլանաձեւ կնիքների չորրորդ՝ արձանագիր տեքստերով տարբերակին, ապա վերջիններս հայտնվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ քառորդից: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից Նոր Խեթական թագավորության, Կասսիտական Բաբելոնի, Սիւտանիի եւ Եգիպտոսի Նոր թագավորության կազմավորման հետ արձանագիր տեքստերով գլանաձեւ կնիքների ինքնատիպ օրինակները տարածում են ստանում ողջ Մերձավոր Արեւելքում: Իրենց ամենաուշ կիրառությունն այս կնիքները գտան Իրանի Աքեմենյան կայսրության ժամանակներում: Վերջինիս անկումից հետո քննարկվող տարբերակի գլանաձեւ կնիքների կիրառությունը Զին Արեւելքում, ըստ եռթյան, դադարեց:

ԿՈՆԱՉԵՎ ԿՆԻՔՆԵՐ (աղ. 52-60)

Այս ենթախումբը կազմում են այն կնիքները, որոնք հաճատեղում են քննարկված առաջին եւ երկրորդ ենթախումբերի կիրառման եղանակները եւ օգտագործվել են ինչպես իրանի փորագրությունները գլորման միջոցով՝ արտատպելու, այնպես էլ իհմքին արված հորինվածքը մեկ սեղմումով դրոշմելու հանար: Պահպանված հնագիտական նյութերը (հատկապես Ուրից եւ Կարմիր-բլուրից հայտնաբերված օրինակները) վկայում են, որ նաև կնիքներով հաստատված գրագրություններն ու գործարքներն իրավական ուժ ունեին միայն այն դեպքում, երբ վավերագրի վրա անպայման միասին (հաճախ նաև կից կամ իրար վրա) առկա էին նույն կնիքի եւ գլորման, եւ դրոշման եղանակով արված արտատպությունները /Collon D. 1987, էջ 115-116, նկ. 495; Դյակոն Ի. 1963, էջ 136-140/:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 52-53):

Այս տարբերակը կազմում են այն կոնաձեւ կնիքները, որոնց իրանն ու հիմքը զարդարված են երկրաչափական բնույթի հորինվածքներով: Նաև երեք պատահաբար հայտնաբերված կնիքներ ներկայում պահպիւմ են Յելի, Նիսի եւ Մարկոպոլիի հավաքածուներում /Buchanan B. 1981, նկ. 225, 226; Teissier B. 1984, նկ. 313; Collon D. 1987, էջ 111, նկ. 488/ (աղ. 52, նկ. 1-3): Նախշաձեւերի ու հորինվածքի նմանությունը հուչում են մեկ ընդհանուր տարածաշրջանին նրանց պատկանելը (թեեւ դժվար է որոշել կոնկրետ որին): Ուսումնասիրողները (Բ. Բյուքանան, Բ. Տիսայեր, Ղ. Կոլոն) ենթադրում են, որ նրանք կարող են վերաբերել ջեմդերնասրյան ժամանակաշրջանին եւ թվագրվել մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմանագծով: Պատրաստված են օձաքարից ու կրաքարից: Չորրորդ կնիքը հայտնաբերվել է Սիցերկրականի ավազանի Ամորգոս կղզուց (Կիկլադյան արշեպիլագ) (աղ. 52, նկ. 4) եւ ըստ ուղեկցող հնագիտական նյութերի թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերով /Frankfort H. 1939, էջ 301, աղ 46-րդ, նկ V; Buchanan B. 1966, նկ. 741; Collon D. 1987, նկ. 588/:

Այս տարբերակում նենք նպատակահարմար գտանք ընդգրկել նաև Յայկական լեռնաշխարհի հյուսիսային ծայրամասից՝ Թռեղբից (Դամբարանաբլուրներ թիվ 6 եւ 16) եւ Կախեթիայից (Սաղուգայի հովիտ՝ դամբարանաբլուր թիվ 2) հայտնաբերված, թռեղբ-վաճածորյան մշակույթին պատկանող եւ մ.թ.ա. 21-19-րդ դարերով թվագրվող առարկաները, որոնք, առանց որեւէ լուրջ հիմնավորնան, պեղող հնագետների եւ նրանց հետեւողների կողմից որակվել են որպես զինանշան «քմբկաձեւ» հարնարաններ եւ հենց այդ անվան տակ էլ մտցվել գիտական շրջանառության մեջ /Կյուֆտին Բ. 1941, էջ 433, աղ. 99-րդ; Ճօրջիկաշվիլ Լ., Գոգած Է. 1974, էջ 75-76, աղ. 62-րդ, նկ. 542, էջ 90, աղ. 108, նկ. 682; Դեդաբրիաշվիլ Շ., Ռուսիաշվիլ Բ. 1984, էջ 59, 62, աղ. 31-րդ, նկ. 1-3/: Վերջիններս ունեն հատած կոնի տեսք, պատրաստված են ոսկու նրբարիթեղի երեք ինքնուրույն կտորներից (մեկը

հատած կոնի ծեւ ունեցող սնամեջ իրանը ստանալու , իսկ մյուս երկուսը՝ ծալվող վերջույթներով, շրջանաձեւ, մեծ ու փոքր գլխադիրներն, իրանի վերին ու ստորին բաց եզրերին հագցնելու համար), զարդարված են դրվագնան եղանակով արված երկրաչափական բնույթի (շրջանակներ, գիգագագներ, կետեր, շեղանկյուններ, հորիզոնական եւ ուղղահայաց գծեր, ցանցանախչ եռանկյուններ եւ այլն) ցցուն նախշերով եւ, ամենայն հավանականությամբ, երեսպատել են փայտից, ուկրոից ու թերեւս հանքախեժից (բիտում) պատրաստված, հատած կոնի ծեւ ունեցող միջուկը: Յուրաքանչյուրն, իրանի ողջ երկարությամբ եւ գլխադիրների կենտրոնով անցնող, ուղղահայաց, միջանցիկ անցք ունի կախվելու համար: Այս եզակի առարկաների բարձրությունները տատանվում են 5,5-10 սմ-ի, իսկ վերին ու ստորին հարթությունների տրամագծերը՝ 3,0-8,2 սմ-ի սահմաններում: Չի բացառվում, որ Փոքր Ասիայի հարավ-արեւելյան հատվածի, հյուսիսային Սիրիայի եւ հարավային Միջագետքի (հատկապես շումերական) երկրաչափական հորինվածքներով կոնաձեւ վաղ կնիքներն հիշեցնող այս առարկաները, քրեղ-վաճառորյան նշակույթի կրողների կողմից եւս ընկալվել են որպես իշխանության ինքնատիկ խորհրդանշաններ՝ կնիքներ եւ կիրառվել՝ կավից կամ հանաննան այլ նյութերից պատրաստված տարբեր իրերի վրա անհրաժեշտ դաշվածքներ առաջացնելու համար: Առավել եւս, որ նման հորինվածքով դրոշմազարդ խեցերների բեկորներ հայտնաբերվել են Զուրտաքերի-ի համաժամանակյա թիվ 3 դամբարանաբլորում (Դյառարիդը Օ. 1969, էջ 35, աղ. 13-րդ, լուսանկար 2, էջ 258): Փաստ, որ ավելի հավանական է դարձնում մեր ենթադրյունը:

Նույն տարբերակին պատկանող այլ օրինակներ Յին Արեւելքում մյուս շրջաններում առայժմ հայտնի չեն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ:

Մեր ուսումնասիրության սկզբնամասում առաջադրված դասակարգման համաձայն, այս տարբերակը կարող են կազմել պատկերային հորինվածքներով կոնաձեւ կնիքները: Այսինքն անհրաժեշտ է, որ նրանց իրանի եւ հիմքի դաշող մակերեսներին փորագրված լինեն որեւէ էակի (մարդ, անսուն, գիշատիչ, թռչուն, սողուն, առասպելական արարած, միջատ եւ այլն), բույսի (ծառ, ճյուղ, ծաղիկ եւ այլն), կառույցի (տուն, տաճար, ամրոց, պալատ եւ այլն) կամ առարկայի միայն մեկ պատկեր, առանց ուղեկցող որեւէ մանրանասների (երկրաչափական, կենդանական, բուսական, առարկայական, տեսարանային, տեքստային): Տեսականորեն նման կոնաձեւ կնիքների գոյությունը չի բացառվում: Սակայն Յին Արեւելքի հնագիտական համալիրներից հայտնաբերված նյութերի հրապարակումներում վերջիններիս բացակայությունն առայժմ անհնարին է դարձնում ենթադրվող տարբերակի քննարկումը:

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 54-57):

Այս տարբերակում միավորված են տեսարանային հորինվածքներով կոնաձեւ կնիքները: Նրանց առավել վաղ օրինակները հայտնաբերվել են հարավային Միջագետքում եւ վերաբերում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսին (աղ. 54, նկ. 1): Դաջվածքներում գերիշխում են որսի, առօրյա կյանքի, ծիսական ամուսնության եւ տարբեր արարողությունների հետ առնչվող թեմաները (Legrain L. 1936, նկ. 368: Amiet P. 1961, աղ. 51, նկ. 706, 712, աղ. 52, նկ. 714, 716, աղ. 56, նկ. 770, աղ. 61, նկ. 825, աղ. 63, նկ. 850: Collon D. 1987, էջ 147, նկ. 635):

Եզիպտոսում նույն տարբերակին պատկանող կնիքներից հայտնի է միայն մեկ օրինակ (աղ. 54, նկ. 2): Այն պատահական գտածն է եւ ըստ մասնագետների վերաբերում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին: Իրանին կենդանիների պատկերներ եւ ծիսական տեսարան ունեցող այս կնիքը հիմքին եւ գագարին վարդակաձեւ նախշեր է կրում (Frankfort H. 1939, էջ 298-299, աղ. 46, նկ. I, տ.ո.):

Փոքր Ասիայում այս տարբերակին պատկանող կնիքները հայտնվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծից: Առավել ուշագրավ օրինակը հայտնաբերվել է Կանիշի (Թյուլ թեփե) պեղման ժամանակ, պատրաստված է ոսկորից եւ վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին (աղ. 55, նկ. 3): Իրանին փորագրված է վազող կենդանիների շարք, իսկ հիմքին երկու կիսամարդ-կիսագիշատիչ արարածների հետ մարտնչող հերոս (Özgür N. 1968, աղ. 31, նկ. N: Collon D. 1987, էջ 111, նկ. 489): Մեկ այլ օրինակ հայտնաբերվել է Այդինից: Փոքրասիական ծագում ունեցող մյուս կնիքները պատահական գտածոներ են եւ պահպում են Լուվրի, Յելի, Մյունխենի եւ Աշնույան թանգարաններում (Frankfort H. 1939, էջ 285-286, աղ. 43, նկ. ո.օ: Moortgat-Correns U. 1955, նկ. 26: Alexander R. 1973, էջ 141-215: Buchanan B. 1981, նկ. 1153 ա-դ: Collon D. 1987, նկ. 147, 243, 835, 841): Կնիքների իրաններին, երկու պարուրաշար գոտիների միջնամասում փորագրված են վազող կենդանիների խումբ, բազմած աստծո առջեւ ծառս եղած զույգ ծիեր, իսկ հիմքերին վարդակ կամ զույգ կորագծերից կազմված հյուսած զարդանախշ (աղ. 54, նկ. 3): Պատրաստված են հեմատիտից եւ վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսին: Դատկապես ուշագրավ է աշնույան օրինակը: Այն մասնագիտական գրականության մեջ «Տիշկենիչի կնիք» նաև նույնական է ստացել (աղ. 54, նկ. 4): Իրանին, զույգ պարույններով կազմված գոտիների միջնամասում, զույգ աստվածությունների (մեկը բազմել է գահին, իսկ մյուսը կանգնած է նրա համեմեալ եւ երկդեմ է) առջեւ կատարվող զոհաբերման արարողություն է փորագրված, իսկ հիմքին զույգ պարույնների զարդագոտով սահմանափակված, մարդկանց խումբ: Պատրաստված է հեմատիտից: Փոքր Ասիայում այս տարբերակին պատկանող այլ օրինակներ հայտնի չեն:

Նույն տարբերակին վերաբերող կոնաձեւ կնիքներ հայտնաբերվել են նաև Միջին Ասիայում: Դրանք հիմնականում բակտրիայի եւ Մարգիանայի

տարածքում ավիրված դամբարաններից ի հայտ եկած պատահական գտածներ են (աղ. 55, նկ. 1,2): Անձնագրի եւ ուղեկցող կոնկրետ հնագիտական նյութի բացակայությունը դժվարեցնում են նրանց թվագրումը: Մասնագետները (Պ.Ամյե, Վ.Սարիհանիդի, Ն.Մասիմով, Ե.Անտոնովա) հակված են վերոհիշյալ կնիքները մեկ վերագրել մ.թ.ա. 3-րդ հազարամյակին, մեկ թվագրել 2-րդ հազարամյակով, երբեմն էլ ծեռնպահ մնալ կոնկրետ ժամանակագրական սահմաններ նշելուց /Amiet P. 1977, էջ 158-160; Сарнаниди В. 1986, էջ 36-45, աղ 7, նկ. 1, 4, 5, աղ 8, նկ. 3, 8, 7, 9, 10; Macimov H. 1981, էջ 141-149; Аntonova E. 1984, էջ 26-34; Collon D. 1987, էջ 142-143, նկ. 596, 597, 601/: Այդ կնիքների հրատարակված գծանկարները թույլ են տալիս ենթադրել, որ վերջիններս սերում են տարբեր համալիրներից եւ համաժամանակյա չեն: Ամեն դեպքում նրանցից եւ ոչ մեկում, մեր կարծիքով, հնարավոր չէ նկատել մ.թ.ա. 3-րդ հազարամյակին բնորոշ կնիքների հորինվածքային մանրամասներ: Առավել եւս, որ կոնաձեւ կնիքներն այդ ժամանակաշրջանում խիստ հազվադեպ են եւ հիմնականում երկրաչափական բնույթի նախշազարդեր են կրում: Խնդրո առարկա կոնաձեւ կնիքների իրաններին փորագրված տեսարանները (սուրացող կենդանիների շարք, կճղակավորների եւ օձերի հակադրություն, ուղտերին եւ զեբուներին հետևող հովիվ, թռչունների որս, հետիոտն ու հեծյալ մարդկանց խումբ եւ այլն), ինչպես նաև նրանց հիմքներին արված սողունների, կենդանիների եւ թռչունների փորագիր պատկերները վկայում են, որ, ըստ ամենայնի, մենք գործ ունենք մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդին, իսկ որոշ դեպքերում նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին բնորոշ (հատկապես նկատի ունենալով հետիոտն ու հեծյալ մարդկանց պատկերներով օրինակները) կոնաձեւ կնիքների միջինասիական ինքնատիպ դրսեւումների հետ: Պատրաստված են քլորիտից:

Այս տարբերակին պատկանող մեկ կնիք էլ հայտնաբերվել է Ինդոսի հովիտի Ակրա հնավայրի տարածքում (Պակիստան), պատրաստված է կաոլինային կավից եւ վերաբերում է մ.թ.ա. I հազարամյակի առաջին քառորդին /Amiet P. 1980, նկ. 423; Collon D. 1987, էջ 142-143, նկ. 601/: Իրանին դեմ հանդիման կանգնած կենդանիներ են եւ որսի տեսարան, իհմքին՝ կենդանու պատկեր:

Տեսարանային հորինվածքներ ունեցող կոնաձեւ կնիքներ հայտնի են նաև Հայկական լեռնաշխարհից: Առավել վաղ հանդիսացող նման մի կնիք պեղվել է Թուեղի թիվ 15 դամբարանաբլուում (աղ. 54, նկ. 15), պատրաստված է ոսկե երեք առանձին թիթեղներից (որոնք երեսապատել են օրգանական նյութից արված միջուկը) եւ վերաբերում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծին (Կյոֆտին Բ. 1941, էջ 435, աղ. 100: Ճօրջիկավալու Լ., Գոգածը Թ. 1974, էջ 89, աղ. 79, նկ. 675): Կնիքի իրանին երկու հորիզոնական գոտիներում (ռեզիստրներ) դրվագված են դեմ հանդիման կանգնած երկու գույզ առյուծներ (վերին գոտի) եւ միանդրներ (ստորին գոտի), իսկ իհմքին՝ վարդակ կամ կեռիսաչ զարդանախչ: Այս տարբերակին պատկանող կնիքները Հայկական լեռնաշխարհում հատկապես լայն տարա-

ծում են ստանում մ.թ.ա. և հազարամյակի առաջին կեսին: Վերաբերում են բացառապես Վանտոսափի (Ուրարտու) թագավորության ժամանակաշրջանին եւ հայտնաբերվել են Տուշպա-Կանի, Էրեբունի-Արինբերդի, Թեյշեբախ-Կարմիր բլուրի, Արգիշթիլսինիլի-Արմավիրի, Արտաշատի, Նորատուսի, Բաստամի, Սծրին-Գամիշլիի եւ այլ հնավայրերի հնագիտական համալիրներից /Calmeyer P. 1991, էջ 317; Işık C. 1986, էջ 2-22; Пиотровский Б. 1970, նկ. 102; Piotrovsky B. 1970, նկ. 40; Մարտիրոսյան Յ., Թորոսյան Ռ. 1986, էջ 224-225, աղ. 2, նկ. 8; Ենգիբարյան Ն. 1991, էջ 66; Մանուկյան Յ. 1981, էջ 23-25; Siedl U. 1979, էջ 146, նկ. B2, աղ. 38, նկ. 1-3; Ishida K. 1983, էջ 283, նկ. 1/: Մի խումբ պատահաբար հայտնաբերված օրինակներ էլ պահպում են Լոնդոնի, Լուվրի եւ Մյունխենի թանգարաններում /Vanden Berghe L., Meyer L. 1983, էջ 236-237, նկ. 229-231; Collon D. 1987, էջ 87, նկ. 399; Moorey P., Gurney O. 1978, նկ. 67/: Կնիքների իրաններին փորագրված են աստղի եւ կենաց ծառի երկու կողմներում կանգնած թռչնիրան կանաց (սիմուրգ), անգղառյուծների կամ ծիսական արարողություն կատարող քրների, արեւի թենավոր սկավառակի, ֆալլատիպ պատվանդանի, զոհասեղանի եւ արձանագիր կորողների մոտ երկրպագող մարդկանց, գահին բազմած թագավորի առջեւ կատարվող ճպիրատվության, վազող կենդանիների ու թռչունների շարքերի, որսի, իսկ հիմքերին՝ կենդանիների, թռչունների, երկկենցաղների, առասպելական արարածների, աստղի, կիսալուսնի, ծառի ճյուղի, արեւի սկավառակի եւ այլ պատկերներ ու տեսարաններ (աղ. 55, նկ. 4 - 8, աղ. 56, նկ. 1 - 6, աղ. 57, նկ. 1-5): Կնիքները պատրասված են օճառաքարից, քաղկեդոնիտից, օնիքսից եւ հատկապես գագատից (գիշեր): Մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին, Վանտոսափի թագավորության անկման հետ միասին, դադարեց նաև այս կնիքների կիրառությունը:

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՐԱՎԿ (աղ. 58-59):

Այս տարբերակը կազմում են արձանագիր տեքստերով կոնաձեւ կնիքները: Առ այսօր հայտնի են միայն կավե սեպագիր սալիկների վրա արված նրանց արտատպությունները: Մրանք եւս Հայկական լեռնաշխարհից եւ հարակից շրջաններից են, դարձյալ բացառապես վերաբերում են Վանտոսափի թագավորության ժամանակաշրջանին եւ հայտնաբերվել են Կարմիր բլուրի (Թեյշեբախի) եւ Բաստամի պեղումների ժամանակ /Пиотровский Б. 1950, աղ. 11; Пиотровский Б. 1952, էջ 75; Пиотровский Б. 1959, աղ. 32; նկ. 1; Մելիկիավիլի Գ. 1960, տեքստ 333, լրացուցիչ տեքստ 63, 72-75; Դյակոնով Ի. 1949, էջ 86-87; Դյակոնով Ի. 1963, էջ 32-37, ներդիր 5-րդ, նկ. 1-7; Seidl U. 1979, նկ. A1, A2, B1; Vanden Berghe L., Meyer L. 1983, էջ 35; Collon D. 1987, էջ 86-87, նկ. 401, 402; Calmeyer P. 1991, էջ 317, նկ. 6/: Վանտոսափի թագավորության արձանագիր գլանաձեւ կնիքների նման, սրանց տեքստերը եւս հորիզոնական դիրքով վերից ու վարից երիզում են փորագիր տեսարանը: Նրանցում հիշատակվում են Արգիշթիի որդի Ռուսան, Սարդուրի որդի արքայազն Ռուսան, թագուհու որդի Ռուսան՝ Ռուսայի որ-

ոին, Երիմենան, Սարդուրիի որոյի Սարդուրին եւ այլոք (աղ. 58, Ակ. 1-7, աղ. 59, Ակ. 1-7): Հետաքրքիր է, որ այս դաշվածքներում գերազանցապես հիշատակվում են մ.թ.ա. 7-րդ դարում Կանտոսափի թագավորությունում իշխած տիրակալներ, Ենթաղբել տալով, որ արձանագիր տեքստերով կոնածեւ կնիքները հատկապես լայն կիրառություն են ստացել Կանտոսափի թագավորության գոյության երկրորդ փուլում: Նրա անկումից հետո դադարեց նաև այս կնիքների արտադրությունը:

Դին Արեւելքի մյուս տարածաշրջաններում առ այսօր այս տարբերակին բնորոշ կնիքները կամ նրանց արտատպությունները հայտնի չեն:

Ինի բերելով կոնածեւ կնիքների Վերաբերյալ շարադրանքը, կարելի է արձանագրել, որ Վերջիններս քանակական առումով մեծաթիվ չեն եւ Ենթախմբի մակարդակում որպես ինքնուրույն ստորաբաժանում կնքագիտության մեջ առանձնացվում են առաջին անգամ: Նրանց տարածման աշխարհագրությունն առայժմ առանձին կղզյակների ձեւով ընդգրկում է Եգեյան աշխարհը, Միջիա-Պաղեստինյան աշխարհը, Դայկական լեռնաշխարհը, Միջագետքը, Միջին Ասիան եւ Ինդոսի հովիտը (աղ. 60): Տարբերակի մակարդակում ենթախումբը ներկայացված է հինարեւելյան կնիքների 4 տարբերակներից 3-ով (առայժմ բացակայում է 2-րդ տարբերակը):

ՊՐԻԶՄԱՅՎԵՎ ԿՆԽԸՆԵՐ (աղ. 61-66)

Սրանք բազմանիստ պրիզմայի տեսքով կնիքներ են, որոնց նիստերին (երբեմն նաև հիմքին) արված փորագրություններն օգտագործվել են հաջորդական սեղմումներով առանձին դաշվածքների շարք ստանալու համար: Բացառված չէ, որ այս կնիքների նիստերից յուրաքանչյուրին գետեղված փորագրությունների տարբեր հերթականությամբ օգտագործված արտատպություններն, ինչպես նաև նրանց համադրությունը՝ որոշակի ինաստ ու նպատակ են հետապնդել:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 61-62):

Այս տարբերակին բնորոշ են նիստերին միայն երկրաչափական հորինվածքներ ունեցող կնիքները: Նման բազմանիստ կնիքների վաղագույն եւ եղակի օրինակը պատահական գտածու է Միջագետքից եւ ըստ մասնագետների, նախշի հորինվածքով ու կատարման եղանակով վերաբերում է Ուլուվի կնքագրութական դպրոցին (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին քառորդ): Ներկայումս պահպում է Յելի թանգարանում /Buchanan B. 1981, էջ 48, 49, նկ. 143 ա, բ/: Այս կնիքի եռանիստ կնքնատիպ կառուցվածքն ուշագրավ է նրանով, որ կարծես կողմնակիորեն հուշում է այն հանգանաճը, թե ինչպես կնքագրոծ վարպետները վաղագույն դրոշմները կատարելագործելու ճանապարհով հանգել են մեկից ավելի դրոշմ-կնիքներից կազմված, որակավես նոր եւ կիրառական ավելի լայն հնարավորություններ ունեցող օրինակի ստեղծման գաղափարին: Կնիքի կողային երեք նիստերին, տարբեր համադրությամբ, մեծ ու փոքր շրջանաձև փորվածքներ են արված: Այս տարբերակին վերաբերող կնիքներ հայտնի են նաև Յայլական լեռնաշխարհից (աղ. 61- աղ. 62): Դրանք հայտնաբերվել են Արքիկի (Դամբարաններ 306, 396, 422), Լոռի բերդի (Դամբարաններ 7, 21), Շիրակավանի (Դամբարան 71, պեղող հնագետ՝ Լ.Ա.Պետրոսյան, նյութը հրատարակված չէ), Մոքքի ծորի (Դամբարան 12), Ն.Գետաշենի (Դամբարան 21) եւ Նորատուսի (Դամբարան 1, խուց 2) հնագիտական համալիրներից եւ թվագրվում են մ.թ.ա. 16-13-րդ դարերով /Խաչատրյան Տ. 1975, էջ 185, նկ. 92; Խաչատրյան Տ. 1979, էջ 243, 283, 296; Դեւեդյան Ս. 1981, աղ. 9-րդ, նկ.2/: Ուշագրավ է, որ ինչպես Ն.Գետաշենի, այնպես էլ Նորատուսի դամբարաններից յուրաքանչյուրում հայտնաբերվել է 3-ական կնիք: Ըստ որում դրանք հազցված են եղել ուղղվածարի կենտրոնում եւ կրվել են պարանոցի կամ կրծքավանդակի շրջանում: Կնիքների կողային նիստերին՝ իրար հատվող, խորադիր անկյունագծեր են արված, որոնք վերին ու ստորին հատվածներուն սահմանագատված են մեկ կամ երկու հորիզոնական խորադիր եզրագծերով: Ն.Գետաշենի թիվ 21 դամբարանում հայտնաբերված երեք կնիքներից երկուսը պատված են կաթնավում, իսկ երրորդը (կենտրոնականը)՝ փիրուզագույն ջնարակով (աղ. 61, նկ. 4-6): Պատկերը նույնը է

նաեւ Նորատուսի թիվ 1 դամբարանի թիվ 2 խցում: Այստեղ հայտնաբերված առաջին եւ երրորդ կնիքները պատրաստված են կաթնափուն եւ դեղնադադաշնափուն շաղախից (ջնարակածածկ չեն), իսկ երկրորդը (կենտրոնականը)՝ պատված է կանաչ - փիրուզագույն ջնարակով (աղ. 61, նկ. 1-3): Նույն տարբերակին վերաբերող քառակող երկու կնիք հայտնաբերվել է Կարմիր բլուրի (Թեյշեբախինի) միջնաբերդի պեղումներից (ՀՊՊԹ հավաքացու 2784/121, 162): Սրանք Դայլական լեռնաշխարհում, քննարկվող տարբերակի ոչ դամբարանային համալիրում պեղված, առայժմ միակ օրինակներն են եւ բվագրվում են մ.թ.ա. 7-րդ դարով (աղ. 62, նկ. 8,9): Կնիքները վերնամասում շրջանաձեւ անցրավոր հարմարանք ունեն կախելու համար, իսկ իրանի չորս ճիստերին միանման խորադիր հորիզոնական գծեր են կրում: Նախշամոտիվ, որ թույլ է տալիս ենթադրել, թե Դայլական լեռնաշխարհի մ.թ.ա. 16-13-րդ դարերով թվագրվող դամբարանային համալիրներից հայտնաբերված, ճիստերին միանման խորագիր երկրաչափական նախշեր կրող, վերը նկարագրված պրիզմայաձեւ առարկաներ ել, ըստ ամենայնի, որպես կնիքներ են ընկալվել եւ իրենց նշանակությունն ու կիրառությունը (թեեւ խիստ հազվադեպ) չկրոցրել նաեւ Վանտոսպի թագավորության շրջանում: Ավելի ուշ չեն հանդիպում:

Քննարկվող տարբերակին պատկանող ուրիշ օրինակներ Դին Արեւելքի որեւէ այլ կետից մեզ առայժմ հայտնի չեն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ:

Սույն գրքի ներածության մեջ առաջադրված դասակարգման համաձայն, այս տարբերակը կարող են կազմել պատկերային հորինվածքներով պրիզմայաձեւ կնիքները: Դա նշանակում է, որ նրանց իրանի եւ հիմքի դրոշմող նակերեսներին պետք է փորագրված լինեն որեւէ էակի (մարդ, անասուն, գիշատիչ, թռչուն, սողուն, միջատ, առասպելական արարած եւ այլն), բույսի (ծառ, թռփ, ճյուղ, ծաղիկ եւ այլն), կառույցի (տուն, տաճար, ամրոց, պալատ, աշտարակ եւ այլն) կամ առարկայի նիայն մեկ պատկեր, առանց երկրաչափական, կենդանական, բուսական, առարկայական, տեքստային որեւէ ուղեկցող նանրանասների: Տեսականորեն այս տարբերակին պատկանող պրիզմայաձեւ կնիքների գոյությունը չի բացառվում: Սակայն Դին Արեւելքի հնագիտական հուշարձաններում վերջիններիս բացակայությունն առայժմ անհնարին է դարձնում ենթադրվող տարբերակի քննարկումը:

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 63-65):

Այս տարբերակում ներառված են ճիստերին (նաեւ հիմքին) տեսարանային հորինվածքներ ունեցող պրիզմայաձեւ կնիքները: Դրանց ամենավաղ օրինակները հայտնի են Միջազգետքից եւ վերաբերում են մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմանագծին եւ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսին: Եռանիստ եւ քառանիստ այս կնիքների վյա զգացվում է Ձեմդեք-

Նասրի կնքագործական դպրոցի հզոր ազդեցությունը: Դա հատկապես դրսեւորվում է առօրյա կյանքի դրվագների (հատկապես թել մանող կանանց) եւ ծորակավոր անորների ամենատարբեր տեղադրությամբ աշխարհիկ եւ ժիսական տեսարանների ներկայացման հանգամանքով (Amiet P. 1961, էջ 256-257, աղ. 20, նկ. 322-325, 327): Կնիքները պատրաստված են օճառաքարից եւ օճաքարից:

Նույն տարբերակին պատկանող եւ բավական վաղ թվագրում ունեցող (մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակների սահմանագիծ) մի կնիք էլ հայտնաբերվել է Իրանական սարահարթի արեանուտքում (Զագրոսի լեռների շրջանում) եւ, ըստ F. Բյութանանի, դարձյալ ջենդերնասրյան կնքագործական արհեստանոցի ընդգծված ազդեցությունն է կրում (Buchanan B. 1981, էջ 80-81, նկ. 214 ա, բ): Պատրաստված է դարչնագույն թերթաքարից:

Եգիպտոսում, դատելով պեղված հնագիտական նյութերից, այս տարբերակին պատկանող պիրզմայաձեւ կնիքները տարածում են ստանում 13-րդ հարստության (մ.թ.ա. 18-րդ դար) ժամանակներից: Մասնավորապես այդպիսին է Եռանիստ իրանով մի կնիք, որը իրանի յուրաքանչյուր կողին նարդու, գիշատչի, թշնի եւ միջատի համարված պատկերներ է կրում (Frankfort H. 1924, նկ. 14: Brentjes B. 1983, էջ 33) (աղ. 65, նկ. 1):

Նույն տարբերակին պատկանող հաջորդ օրինակը Փոքր Ասիայից է: Այն հայտնաբերվել է Կիլիկիայի Տարսու (Տարսոն) բնակավայրից, Վերաբերում է խեթական կնքագործությանը եւ թվագրվում մ.թ.ա. 16-րդ դարով (աղ. 65, նկ. 3): Նրա չորս կողային ուղղանկյուն նիստերին եւ ննանատիպ հիմքին պատկերված են խեթական ծիսական արարողակարգին բնորոշ առանձին դրվագներ: Կնիքը պատրաստված է արնաքարից (հենատիտ) եւ վերնամասում մրցաձեւ ելուստ-բռնակ ունի: Ներկայումս պահպանվում է Աշմույան թանգարանում /Collon D. 1990, էջ 48, նկ. 36/: Ընդհանուր գծագրությամբ այն հիշեցնում է նույն ժամանակաշրջանի խեթական կնիք-դրոշմները (մեր դասակարգման 1-ին ենթախմբի 3-րդ տարբերակ) եւ ամենայն հավանականությամբ իր ծագմանը պարտական է Վերջիններիս:

Այս տարբերակին վերաբերող պիրզմայաձեւ մեկ կնիք էլ հայտնի է Եգեյան աշխարհից (Կրետե): Դայտնաբերվել է Կնոսոսի պեղումների ժամանակ: Սա եռանիստ իրան ունի, սակայն նիստերից միայն երկուսն են կրում փորագիր պատկերներ: Դրանցից մեկը ներկայացնում է բարենաղբության, իսկ մյուսը՝ որսի տեսարան: Կնիքը վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին /Matz F. 1928, աղ. 12-րդ, նկ. 1; Brentjes B. 1983, էջ 43/ :

Նույն տարբերակին վերաբերող, սակայն անհամենատ ուշ թվագրում ունեցող մեկ կնիք էլ հայտնաբերվել է հյուսիսային Սիրիայի Գամիշլի (Մծբին) քաղաքի մերձակայքից: Այն քառանիստ իրան ունի եւ նիստերից մեկի վրա կից շեղագծերի մեջ ներգծած շրջանակներ, իսկ մյուս երեքին կենաց ծարի եւ աղորող քրմերի փորագիր պատկերներ է կրում (աղ. 63, նկ. 1): Պատելով հորինվածքային առանձնահատկություններից, ըստ ամենայնի, Նոր Ասսուրական թագավորության կնքագործական արհեստանոցի արտադրանք է եւ պետք է որ թվագրվի մ.թ.ա. 1-ին հազարամյակի առաջին թա-

ռորդով:

Վերջին տարածաշրջանն ուր հանդիպում են պրիզմայաձեւ կնիքների այս տարբերակին պատկանող օրինակներ՝ Դայլական լեռնաշխարհն է (աղ. 63, նկ. 2-5, աղ. 64, նկ. 2,3, աղ. 65, նկ. 4,5): Այստեղ դրանք հայտնի են բացառապես Վանտոսափի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող հուշարձաններից: Դայտնաբերվել են Կարմիր բլուրի (Թեյշեբահնի), Նորատուսի, Նոր Բայազետի (Կանո), Երեբունիի եւ Արգիշտիինիի (Արմավիր) պեղումներից /Պոտրովսկի Բ. 1953, էջ 56, նկ. 42; Պոտրովսկի Բ. 1970, նկ. 100, 101; Խօճաշ Ս., Տրչանով Հ., Օգանեսյան Կ. 1979, էջ 106-107, նկ. 119; Ենգիբարյան Ե. 1991, էջ 66: Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն. 1996, էջ 35-36/: Դատկապես ուշագրավ է կարմիրբլուրյան օրինակը (աղ. 65, նկ. 4): Նրա չորս կողային նիստերից առաջինի վրա պատկերված է աջ ոտքի վրա ծնկած, թեւատրած անձնավորություն (հավանաբար՝ Շիվինի աստվածը), որի գլխավերեւում արեւի թեւավոր սկավառակն է: Երկրորդ նիստին փորագրված է ձեռքերն առաջ պարզած թռչնարեւ քուրմ, երրորդին՝ ցլի վրա կանգնած եւ առաջ պարզած ձեռքերից մեկում եռաժամն բռնած թռչնարեւ անձնավորություն (հավանաբար՝ Թեյշեբա աստվածը), իսկ չորրորդ նիստին՝ թռչնարեւ առյուծ կամ նժոյւզ (փորագրությունը վճասված է), գլխին՝ կիսապլուսին կամ եղջյուրներ: Կնիքի հիմքին արեւի թեւավոր սկավառակի, հինգ խորադիր կետերի, ձկան եւ խորանարդի ոճավորված պատկերներ են /Պոտրովսկի Բ. 1962, էջ 106, նկ. 71/: Նման կնիքները բնորոշ են վանտոսայան կնքագրության ուշ փուլին (7-6-րդ դարեր), իսկ վերջինիս անկումից հետո ընդհանրապես դադարում են գործածվել Դայկական լեռնաշխարհում:

Դին Արեւելքի մյուս տարածաշրջաններում այս տարբերակին պատկանող պրիզմայաձեւ կնիքներ առայժմ հայտնի չեն:

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ (աղ. 64, նկ. 1, 4):

Այս տարբերակում ներառված են պրիզմայաձեւ կնիքների այն օրինակները, որոնք նիստերին երկրաչափական, պատկերային եւ տեսարանային հորինվածքների հետ միասին կրում են նաև արձանագիր տեքստեր: Ըստ որում, արձանագիր տեքստերը կարող են տեղակորված լինել ինչպես տեսարան պարունակող նիստերին, այնպես էլ առանձնացվել հատուկ այդ նպատակի համար արված նիստի (կամ նիստերի) եւ հիմքի վրա: Նման մի օրինակ պատահաբար հայտնաբերվել է Մօքինի (Գամշլի) տարածքից եւ ներկայում պահպան է մասնավոր հավաքածուում (աղ. 64, նկ. 1): Քառանիստ այս կնիքի երկու հանդիպական կողային նիստերին ծիսական արարողության տեսարաններ են փորագրված (մեկում՝ զույգ թռչնարեւ աստվածությունները կամ քրմերն աղորում են ատրուշանի կամ զոհասեղանի առջեւ, մյուսում՝ բազմած աստվածությունն օրինում է մահկանացուին): Դաշտորդ երկու կողային նիստերին տարբեր բովանդակության ասուլերեն սեպագիր տեքստեր են (վերջիններս առայժմ վերծանված չեն): Ըստ համդի-

պակաց նիստերին արված փորագիր տեսարանների, այս կնիքն ամենայն հավանականությամբ Նոր ասսուրական կնքագործությանը վերաբերող նմուշ է եւ պետք է որ թվագրվի մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին քառորդով (ավելի ստույգ թերեւս մ.թ.ա. 9-8-րդ դարերով):

Մենք նպատակահարմար գտանք այս տարբերակին վերաբերող կնիքների շարքը դասել նաեւ Դայկական լեռնաշխարհի արեւելյան շրջաններից (Եղեգնաձորի մերձակայքից) պատահաբար հայտնաբերված պրիզմայաձեւ կնիքը եւս (աղ. 64, Ակ. 4): Այն ներկայումս պահպում է Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում (ԵԵԹ, Մ.Մ.1322, Գ.Գ.5274): Բանն այն է, որ մուգ կարմիր քարից (գուցե արնաքարից՝ հեմատիտ) պատրաստված այս պրիզմայաձեւ կնիքն իր կառուցվածքով կրկնում է վանտուսայան կնքագործության որոշ առանձնահատկությունները (քառակող սեղանաձեւ նիստերով իրան, կիսագնդաձեւ՝ վերնամասում եռագալար անցումով եւ կենտրոնական անցքով գլխիկ) եւ կողային երկու հանդիպակաց նեղ նիստերին փորագիր նշաններ ունի, որոնք վանտոսայան սեպագիր են հիշեցնում: Վերջիններիս միջեւ գտնվող կողային համեմատաբար լայն նիստի վրա փորագիր գծիկներով ծառ հիշեցնող պատկեր է արված, որն ընդհանուր առնամբ վանտոսայան գոտիների, բարձրաքանդակների, կնիքների եւ դեկորատիվ արվեստի այլ նմուշների վրա պատկերված եռաճյուղ կենաց ծառերի պարզեցված եւ անփույթ արված օրինակի է նման: Դանդիպակաց չորրորդ նիստին՝ ուղղահայաց դեպի վեր բարձրացող, թույլ գիգագաձեւ խորադիր գիծ է: Կնիքի նեղ կողային նիստերին ուղղահայաց արված փորագրություններից առաջինը կազմված է սեպաձեւ 6 նասնիկներից եւ ունի այսպիսի տեսք՝ ◀◀◀◀◀◀ :

Դանդիպակաց նեղ նիստին արվածը եւս ուղղահայաց դիրք ունի, կազմված է սեպաձեւ 5 մասնիկներից եւ ներկայացված է այսպես՝

◀◀◀◀◀◀ :

Առաջին իսկ հայացքից աչք է զարնում վանտոսայան կնքագործությանը քիչ բնորոշ քարատեսակի (հեմատիտ ?) ընտրությունն, ինչպես նաեւ վանտոսայան կանոնիկ սեպագրից ներկայացված նշանների տարբերվելու: Սա իր հերթին հիմք է տալիս ենթադրելու, որ քննարկվող կնիքն ու նրա վրա փորագրված նշանները թերեւս արվել են մի մարդու կողմից, որը լավ ծանոթ չի նելով վանտոսայան կնքագործության սկզբունքներին եւ, ըստ ամենայնի, չտիրապետելով վանտոսայան սեպագրին, հավանաբար փորձել է վերարտադրել (կամ բացառված չէ նաեւ ինչ-որ նպատակների համար կենդիւ) ծերքի տակ եղած իսկական օրինակը: Դարցին այս տեսանկյունից նոտենալիս, թերեւս ինաստ ունի փորձ անել հնարավորության սահմաններուն վերականգնելու նախնական (նայր) օրինակի վրա արված տեքստի ու պատկերների իմաստը: Այս առումով, եթե ընդունենք, որ կենաց ծառի պատկերների հմաստը: Այս առումով, եթե ընդունենք, որ կենաց ծառի պատկերների հմաստը: Այս առումով, եթե ընդունենք, որ կենաց ծառի պատկերների հմաստը: Այս առումով, եթե ընդունենք, որ կենաց ծառի պատկերների հմաստը:

ված նշանախնբերից մեկն այդ տեքստի սկիզբն է, մյուսն՝ ավարտը, իսկ կենաց ծառի հանդիպակաց լայն նիստին արված գիծն՝ արձանագրված տեքստի սկիզբն ու վերջը սահմանազատող բաժանարարը: Դաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանտոսայի թագավորության գիրն ընթերցվում էր ձախից աջ, կարելի է ենթադրել, որ քննարկվող կնիքի վրա արված տեքստն է նույն ուղղությունն ունի: Ուստի մենք եւս կփորձենք ենթադրվող տեքստը վերընթերցել ձախից աջ հաջորդականությանը: Զախ կողային նեղ նիստին արված սեպախումբը՝ հնարավոր է վերականգնել (վերընթերցել) այսպես

►◀◀▼◀▼ :

Այն համապատասխանում է ուրարտերեն «GÜB» - «ձախ» զաղափարագրին /Մելիկանավոլի Ռ. 1960, էջ 40/: Առաջին հայցից այս վերակազմությունն առավել հավանական է թվում, որովհետեւ «GÜB» - «ձախ» զաղափարագրից իիշեցնող սեպախումբն արված է կնիքի հենց ձախ կողային նիստին: Չի բացառվում սակայն, որ մայր օրինակի վրա արված փորագրության այս հատվածը երկար օգտագործումից կարող էր մաշվել եւ ընդունակողին (որը, մեկ անգամ եւս ուզում ենք ընդգծել, չի տիրապետել սեպագրին) երեւալ ոչ լրիվ: Ուստի հնարավոր է, որ մայր օրինակի վրա արված սեպախումբը նախապես կարող էր նաեւ այս տեսքն ունենալ

◀▼◀▼◀▼◀▼, որը համապատասխանում է վանտոսայան «ար» վանկին /Մելիկանավոլի Ռ. 1960, էջ 36/: Ազ կողային նեղ նիստին արված սեպախումբը՝

◀▼▼◀▼◀▼, ամենից հարմար է ▶◀▼▶◀▼ «Է» վանկի վերականգնան համար: Այսպիսով, թերեւս, կարելի է իիմնավորել, որ ենթադրվելիք մայր օրինակն ունեցել է մեկընդմեջ սեպախումբով եւ պատկերներով ծածկված նիստեր: Վերջիններս, զստ ամենայնի, հաջորդական կապի մեջ են եղել միմիանց հետ եւ որոշակի իմաստ արտահայտել: Եթե սեպախումբով եւ պատկերների վերականգնան մեր փորձը ճշմարտանման է, ապա կստացվի, որ կրկնօրինակողը ձեռքի տակ ունեցել է պիրզմայաձեւ կնիք, որի նիստերին արված փորագրությունները ձախից աջ հնարավոր է վերընթերցել այսպես. «GÜB/ար + կենաց ծառ + Է»: Դաշվի առնելով այն հանգամանքը, որ վանտոսապերենում թերեւս ոչ հաճախ, բայց երեմն, այնուամենայնիվ, հանդիպում են պատկերագրի եւ սեպագրի համադրությամբ համառոտագրություններ (սափորների ու կարասների ուսերին, կալեն սալիկների վրա), կարելի է ենթադրել, որ ընդօրինակողը եւս բախվել է նաև երեւույթի հետ: Ըստ այդմ ուրեմն սխալ չի լինի կնիքի դիմային լայն նիստին պատկերված կենաց ծառի փոխարեն կարդալ նրան համարժեք

ուրարտերեն գաղափարագիրը՝ = «GİS» - «ծառ»: Այսպիսով կստացվի, որ մեր առջեւ մի կնիք է, որի երեք նիստերին մեկընդմեջ արված պատկերագրին ու սեպագրերը հնարավոր է իր ժամանակին ընթերցվել են

ա). «ԳՈՒՅ-ԳԻՇ-ԼԻ» ծեւով, որը կարծես թե իմաստ չի արտահայտում եւ ք). «ԱՐ-ԳԻՇ-ԼԻ» վանկարկմամբ, որը Վանտոսպի թագավորության տիրակալներից առնվազն երկուսի անձնանունն է հանդիսացել: Վերջինս հանդիպում է ինչպես «'ԱՐ-ԳԻ-ԻՇ-ԼԻ», այնպես էլ «'ԱՐ-ԳԻՇ-ԼԻ» վանկակապակցությամբ: Ըստ որում առաջին տարբերակը բնորոշ է միայն մ.թ.ա. 8-րդ դարի արքաների (Արգիշթի 1-ին, Սարդուրի 2-րդ) արձանագրություններին: Ինչ վերաբերում է երկրորդ տարբերակին, ապա այն հանդիպում է ինչպես վերը նշված արքաների, այնպես էլ մ.թ.ա. 7-րդ դարի նրանց հաջորդների (Արգիշթի 2-րդ, Ուուսա 2-րդ) տեքստերում: Պրիզմայաձեւ այս կնիքի վրա արված սեպանշանների եւ պատկերների աջից ձախ հաջորդականությամբ «աՐ-ԳԻՇ-ԼԻ» անձնանվան ընթերցունը, թերեւս, կարող է հիմնավորվել նաև Բաստամից հայտնաբերված եւ, ըստ մեր դասակարգման, երրորդ ենթախնճի չորրորդ տարբերակին վերաբերող կոնաձեւ կնիքի արտատպության ուշագրավ տվյալներով: Վերջինս պատկանում է Արգիշթի 2-րդի որդի Ուուսա 2-րդին եւ իրանին փորագրված տեսարանից վեր ու վար, գույզ խորադիր հորիզոնական գծերի մեջ առանձնացված, երկտող տեքստ է պարունակում: Այն Բաստամից հայտնաբերված նույն կնքադրուշի 13 տարբեր արտատպությունների համարման շնորհիվ վերծանվում է հետեւյալ կերպ: «Սա է Կնիքը Ուուսա Արգիշթորդու» /Seidl U. 1979, էջ 146, նկ. 2, աղ. 23, նկ. 1-6, աղ. 24, նկ. 1-7/: Ըստ որում տեքստի «Սա է Կնիքը Ուուսա ...» հատվածը գետեղված է փորագիր տեսարանից վեր, իսկ «... Արգիշթորդու» նասը՝ վար: Դատկանշական է, որ «Արգիշթորդի» բառի «'ԱՐ» եւ «'ԳԻՇ» սեպանշանների վերեւում փորագիր տեսարանի կենտրոնում, թերեւս ոչ պատահաբար, կենաց ծառ (կամ գուցե եռածանի, որը դարձյալ նույն իմաստն ունի) է պատկերված եւ կարծես թե հուշում է, որ անմիջապես իրեն տակ՝ վարի հորիզոնական սեպագիր տողի մեջ փորագրված «'ԳԻՇ» սեպանշանն այս անձնանվան մեջ նաև «ծառ» գաղափարի իմաստն ունի: Ավելացնենք նաև, որ ըստ ուրարտագետ Զ.Կարազյոյանի բանավոր հաղորդման «Արգիշթի» անձնանունը «աՐ + ծառի պատկեր + ԼԻ» ծեւով ներկայացված է նաև վանտոսպյան սեպագիր սալիկներից մեկի վրա: Մրանը դիտարկումներ են, որ թերեւս ավելի հավատի են դարձնում Եղեգնաձորի պրիզմայաձեւ կնիքի վրա արված նշանների մեր կողմից առաջադրված վերականգնումն ու վերծանությունը: Դաշվի առնելով այն հանգանաքը, որ Եղեգնաձորի տարածքն առավել կարեւորություն է ծեռք թերել հատկապես Արգիշթի 2-րդի ժամանակներում (այդ են վկայում նշված տարածաշրջաններում հայտնաբերված սեպագիր արձանագրությունն ու վանտոսպյան նշակույթին վերաբերող նյութական արժեքները), կարելի է ենթադրել, որ քննարկվող արտեֆակտն էլ թերեւս Արգիշթի 2-րդի գործունեության հետ առնչվող ու նրա անունը կրող պրիզմայաձեւ կնիք-կախիկի, տեղում նույն ժամանակում որոշակի նպատակով արված, պարզունակ ընդորինակումն է հանդիսացել:

Այս տարբերակին վերաբերող պրիզմայաձեւ կնիքների ուրիշ օրինակներ, Առաջավոր Արեւելքի այլ տարածաշրջաններից մեզ առայժմ հայտնի չեն:

Այսպիսով, պրիզմայաձեւ կնիքների վերը բերված շարադրանքից կարելի է եգորակացնել, որ վերջիններս եւս քանակական առումով մեծաթիվ չեն եւ ենթախմբի մակարդակում որպես ինքնուրույն ստորաբաժնում առանձնացվում են առաջին անգամ: Նրանց տարածման աշխարհագրությունն առայժմ առանձին կղզյակների ձեւով ընդգրկում է Եգիպտոսը, Եգեյան աշխարհը, Փոքր Ասիան, Սիրիա-Պաղեստինյան աշխարհը, Հայկական լեռնաշխարհն, Իրանական սարահարթն ու Միջազգետքը (աղ. 66): Տարբերակի մակարդակում ենթախումբը ներկայացված է հիմարեւելյան կնիքների 4 տարբերակներից 3-ով (առայժմ բացակայում է 2-րդ տարբերակը):

ՅԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՍԻՔՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Իմի բերելով նախորդ գլուխմերում արված դիտարկումների արդյունքները, կարելի է արձանագրել, որ այս աշխատանքում առանձնացված ու դասղասկած կնիքների չորս ենթախմբերի ընդհանուր թվով տասներեք տարբերակներից Միջագետքում հանդիպում են 9-ը (1,1: 1,2: 1,3: 1,4: 2,1: 2,3: 2,4: 3,1: 4,1)* : Դա կազմում է հինարեւելյան կնիքների քննարկված տեսականու 69%-ը: Ըստ որում նշված 9 տարբերակներից 8-ը (1,1: 1,2: 1,3: 2,1: 2,3: 2,4: 3,1: 4,1) նախապես հանդիպում են Միջագետքում, ապա տարածվում Յին Արեւելքի եւ Միջերկրականի ավազանի մյուս տարածաշրջաններում: Այլ խոսքով, քննարկվող տարբերակների 61,5%-ը (13-ից 8-ը) հարավմիջագետքյան ծագում ունեն:

Սիրիա-Պաղեստինյան աշխարհում քննարկված 13 տարբերակներից հանդիպում է 8-ը (1,1: 1,2: 1,3: 1,4: 2,1: 2,3: 2,4: 4,4)՝ ողջ տեսականու մոտ 61,5% -ը: Դրանցից 7-ը (1: 1,2: 1,3: 2,1: 2,3: 2,4: 4,4)՝ այսինքն մոտ 54% -ը, նախապես հանդիպում է այստեղ, ապա տարածում ստանում ուսումնասիրվող մյուս տարածաշրջաններում: Ուշագրավ է, որ միջագետքյան եւ սիրիապաղեստինյան ծագում ունեցող տարբերակներից 6-ը (1,1: 1,2: 1,3: 2,1: 2,3: 2,4) ընդհանուր են երկու տարածաշրջանների համար, նույնչափ վաղ դրսեւրում ունեն երկու միջավայրերում էլ եւ միաժամանակ կարող են եւ միջագետքյան, եւ սիրիապաղեստինյան նախաօրինակներ համարվել: Յանգանանք, որ թույլ է տալիս ավելի որոշակի առանձնացնել աշխարհագրական այն արեալը (Միջագետք - Սիրիա - Պաղեստինյան տարածաշրջանը), ուր ծեւավորվել եւ առաջին անգամ կիրառության մեջ են դրվել առարկաներ, որ արդյունքում հայտնի են «կնիքներ» անվանք: Ըստ որում գարգացման որոշակի փուլում նշված աշխարհագրական ընդհանուր տարածքը եւս բաժանվել է ինքնուրույն միավորների՝ Յարավային Միջագետքի եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհի (ներառյալ նաև Յուսիսային Միջագետքը), որոնցից յուրաքանչյուրում զարգացել են իրեն բնորոշ եւ մյուսին անծանոթ կնիքների ինքնատիպ տարբերակներ: Այդպիսի Միջագետքում 2-ն են (3,1: 4,1), իսկ Սիրիա-Պաղեստինյան աշխարհում՝ 1-ը (4,4):

Փոքր Ասիայում քննարկված 13 տարբերակներից հանդիպում է 7-ը (1,1: 1,3: 1,4: 2,3: 2,4: 3,3: 4,3)՝ մոտ 54%: Ըստ որում նշված տարբերակներից միայն 1-ը (3,3-ը) նախապես հանդիպում է այստեղ, ապա տարածում ստանում այլ տարածաշրջաններում: Այն կազմում է քննարկվող տարբերակների մոտ 8%-ը:

* Ստորակետից ծախ դրված թվանշանը ցույց է տալիս ենթախումբը, աջը՝ տարբերակը:

Եզիպտոսում 13 տարբերակներից վկայված է 6-ը (1,3: 1,4: 2,1: 2,3: 2,4: 4,3)՝ մոտ 46%-ը: Տեղում առաջացած նախնական տարբերակները 2-ն են (1,4: 4,3), ինչը կազմում է ամբողջի մոտ 15 %-ը:

Իրանական սարահարթում հանդիպում է ընդամենը 7 տարբերակ (1,1: 1,2: 1,3: 2,1: 2,3: 2,4: 3,4)՝ մոտ 54 %:

Դայկալան լեռնաշխարհում վկայված են քննարկվող կնիքների բոլոր 13 տարբերակներն էլ՝ 100%, սակայն տեղական ծագում ունի միայն տարբերակներից 1-ը (3,4-ը), որը կազմում է ողջ տեսականու մոտ 8%-ը:

Մյուս տարածաշրջաններից յուրաքանչյուրում հանդիպող տարբերակների քանակն ու ողջ տեսականու մեջ նրանցից յուրաքանչյուրի տոկոսային ծավալն այսպիսին է. Միջերկրականի պազան - 6 տարբերակ (1,1: 1,3: 2,3: 2,4: 3,1: 4,3)՝ 46 %, Ինդոսի հովիտ - 4 տարբերակ (1,4: 2,3: 2,4: 3,3)՝ մոտ 30 %, Միջին Ասիա - 4 տարբերակ (1,1: 1,3: 2,1: 3,3)՝ մոտ 30 %, Արարական թերակղի - 3 տարբերակ (1,3: 2,3: 2,4)՝ 23 %: Ըստ որում, Վերջին տարածաշրջաններում թվարկված տարբերակներից ոչ մեկը տեղական ծագում չունի եւ հետեւաբար, քննարկված ողջ տեսականու մեջ վերջիններիս կողմից ներմուծված տեղական առանձնահատկություններով կնիքների ծավալը հավասար է 0 %-ի:

Արված դիտարկումները հնարավորություն են ընձեռում նաեւ, դասակարգման այս եղանակով առաջին անգամ ներկայացվող հինարեւելյան կնիքների համար կազմելու պարբերացման ու ժամանակագրության նոր սանդղակ (տես աղ. 68-ը):

Հենվելով վերոիիշյալ սանդղակի տեղեկատվական հիմքի վրա եւ իմի բերելով հինարեւելյան կնիքների 4 ենթախմբերի ներկայացված տարբերակներին վերաբերող ողջ շարադրանքը, կարելի է արձանագրել, որ մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակների սահմանագծում Սիրիա-Պաղեստինյան աշխարհի (հատկապես Անուլի հովտի) եւ Միջագետքի էնեղլիթյան վաղերկրագործական բնակատեղիներում տարածում են ստացել օրգանական նյութից (փայտ, ոսկոր, խեցի), ապա նաեւ քարի տարբեր տեսակներից պատրաստված եւ հիմնականում պարզ երկրաչափական խորադիր գծանախշումներ ունեցող, հարք կամ քիչ ուռուցիկ մակերեսով կոճականնան առարկաներ, որոնք հասարակական հարաբերությունների զարգացմանը գուգընթաց աստիճանաբար վերածվել են հասարակության սոցիալական բարձր շերտերը ներկայացնող մարդկանց անձը, սեփականությունն ու իրավունքը հաստատող խորհրդանիշների՝ կնիքների: Շնորհ երկուհազարամյա (մ.թ.ա. 6-4-հազարամյակներ) կիրառության ընթացքում այս կնիքների մակերեսներին արված փորագրությունները պարզ երկրաչափական նախշերից վերածվել են քարդ տեսարամների: Իրենք կնիքներն օգտագործվել են մեկ սեղմումով մեկ ամբողջական դաշվածք ստանալու համար եւ մ.թ.ա. 4-րդ հազարամյակից լայն տարածում գտել Յին Արեւելքի վաղերկրագործական բնա-

Կատեղիներում:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը, արտահանվող եւ ներմուծվող ապրանքների տեսականու ընդլայնումը, առեւտրա-փոխանակային բազմաբնույթ կապերի խորացումը, տարանցիկ առեւտրական կենտրոնների հիմնումն ինքնարերաբար առաջ էին քաշում վերոհիշյալ գործարքների ծեւակերպման ու վավերացման ավելի կատարյալ ծեւերի ու միջոցների մշակում եւ կիրառում: Այդ առումով դրոշնկիցներն իրենց փոքր չափերով ու սահմանափակ հնարավորություններով (դրոշման փոքր մակերես, սյուժետային բովանդակությամբ որոշակի բարդ տեսարանների փորագրման անհնարինություն, կիրառման ոչ մեծ ինտենսիվություն, հեշտ կեղծման հավանականություն եւ այլն) ի վիճակի չեխ ապահովելու վերը նշված գործընթացներից բխող բոլոր պահանջները: Այդ իսկ պատճառով առեւտրա-փոխանակային եւ իրավա-քաղաքական առավել ինտենսիվ գործառնություններ իրականացնող տարածաշրջաններում (Միջագետք, «Արգավանդ կիսալուսնու» շրջան) մ.թ.ա. 4-րդ հազարամյակի կեսերից սկսեցին գործածվել գլանաձեւ կառուցվածք ունեցող կնիքներ, որոնք ավելի համապատասխան էին նոր հարաբերությունների առաջադրած պահանջներին, քիչ էին ենթակա կեղծման եւ հնարավորություն էին ընձեռում զլորման եղանակով կրկնվող տեսարանների (դաշվածքների) անսահմանափակ շարք ստանալու, դրանով իսկ արագացնելով, դյուրացնելով եւ ավելի ապահով ու արդյունավետ դարձնելով կատարվող գործառնությունները: Այս շրջանում հատկապես ուշագրավ էին միջագետքյան Ուրուկ եւ Զենդեթ-Նասր բնակավայրերում պատրաստված կնիքները, որոնց բազմաթիվ նմուշներն ու ընդորինակումները լայն տարածում ստացան Միջագետքի, Սիրիա-Պաղեստինյան աշխարհի եւ հարավ-արեւմտյան Իրանի (Էլամ) վաղբրոնգեղարյան հուշարձաններում: Այսուհանդերձ պատմական մի որոշ ժամանակահատված (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կես - մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկիզբ) դրոշն-կնիքներն ու գլանաձեւ կնիքները Դին Արեւելքի զարգացած քաղաքակրթություններում կիրառվեցին կողդ-կողքի: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից արձանագիր տեքստերի, բարդ սյուժեների, բազմագուտի (ռեգիստրներով) տեսարանների, ինչպես նաև դրանց երեքի համատեղ օգտագործումը կնքագործության մեջ, առավել եւս ընդգծեց գլանաձեւ կնիքների առավելությունը դրոշն-կնիքների նկատմամբ՝ զիր ու գրականությունից օգտվող եւ առեւտրա-փոխանակային բուժն գործառնությունների մեջ ներգրավված տարածաշրջաններից (Միջագետք, Սիրիա-Պաղեստինյան աշխարհ, մասամբ նաև Էլամ) դուրս մղելով դրոշն-կնիքների կիրառությունը:

Մինչդեռ նշված ժամանակահատվածում դեռևս իրենց գիրը չունեցող եւ անմիջականորեն առեւտրա-փոխանակային բանուկ ճանապարհների մոտ չգտնվող Դին Արեւելքի եւ Միջերկրականի ավագանի մյուս տարածաշր

ջաններում (Եգեյան աշխարհ, Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Արաբական թերակղզի, Միջին Ասիա, Ինդոսի հովիտ) գլանաձեւ կնիքների մուտքը չկարողացավ շրջանառությունից լիովին դուրս մղել դրոշմ-կնիքների կիրառությունը: Վերջիններս, թեև սահմանափակ քանակությամբ, շարունակեցին օգտագործվել այստեղ նաև մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների ընթացքում: Դենց նման համատեղ կիրառությունն, ըստ մեզ, արդյունքում հանգեցրեց կնիքների նոր տեսակի՝ կոնաձեւ կնիքների առաջացմանը մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծում եւ նրանց հետագա աստիճանական տարածմանը Դին Արեւելքի բավական սահմանափակ հատվածում (Եգիպտոս, Փոքր Ասիա, Միջիա-Պաղեստինյան աշխարհ, Հայկական լեռնաշխարհ, Միջին Ասիա)՝ մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներում: Դին Արեւելքի եւ Միջերկրականի ավազանի միակ տարածաշրջանը, որտեղ հնագույն ժամանակներից առկա հիերոգլիֆ գրի պայմաններում, գլանաձեւ կնիքները ոչ միայն չկարողացան կիրառությունից դուրս մղել դրոշմ-կնիքներն, այլև վերջիններիս համեմատությամբ այդպես էլ լայն տարածում չստացան՝ Աֆրիկայի հյուսիս-արեւելյան ծայրամասն է, Եգիպտոսը: Այստեղ մ.թ.ա. 4-րդ հազարամյակից տարածված ինքնատիպ դրոշմ-կնիքները՝ կոյաբեզները, մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակը ներառյալ մնացին Եգիպտոսում արտադրվող կնիքների գերիշխող տեսակը:

Դին Արեւելքում մ.թ.ա. 3-րդ հազարամյակից ծեւավորված առաջին պետական կազմավորումների, ապա եւ պետությունների առկայության պայմաններում, կնիքները ոչ միայն դարձան ամենալայն իրավունքներով օժտված որոշակի անձանց (թագավոր, թագուհի, թագաժառանգ, քրնապետ) եւ սոցիալական սանդղակի վերին աստիճաններին կանգնած խավերի (ուազմական ավագանի, քրնություն, վաճառականական դաս, արիեստավորներ) մենաշնորհը, այլև աստիճանաբար վերածվեցին յուրաքանչյուր քաղաքական կազմավորման անկախությունը, հզրությունը, գերիշխանությունը, հեղինակությունը, ինքնատիպությունն ու հարստությունը հաստատող արտահայտամիջոցների: Այդ է պատճառը, որ պատմական թատերաբեմում մ.թ.ա. 3-1-ին հազարամյակներում իրար հաջորդող հզոր պետություններից յուրաքանչյուրը (Եգիպտոսի Միջին եւ Նոր թագավորություններ, Նոր Խեթական թագավորություն, Կասպիտական Բաբելոն, Միտան-Շի, Միջին եւ Նոր Ասսուրական թագավորություններ, Վանտոսպի թագավորություն, Աքեմենյան Իրան) ժամանակ առ ժամանակ հաստատում էր, իսկ ենթակա տարածաշրջաններում նաև պարտադրում, կնիքների ծեւի, չափի, նյութի, պատկերագրման ու վերջինիս սյուժետային ծանրաբեռնվածության ընտրության իր կողմից թելադրվող տարբերակները:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի շումերա-ակկադական եւ Ուրի 3-րդ հարստության կնքագործության մեջ այդ ինքնատիպությունն արտահայտվում էր կնիքների մակերեսներին արված տեսարաններում մարդկանց դեմքերը դի-

մացից՝ անշարժ, իսկ մարմինները դեմքի համեմատ որոշ անկյան տակ թերված դիրքով, շարժման մեջ պատկերելիս: Փորագրություններում գերիշխում էին միջագետքյան էպոսից, առասպելներից ու ավանդույթներից վերցված տարրեր դրվագները, առօրյա կյանքի ու կենցաղի տեսարանները, որոնք երբեմն աջ կամ ձախ կողմից երկզվում էին ուղղահայաց ընթերցվող սեպագիր տեքստերով: Կնիքները հիմնականում զլանաձեւ էին, պատրաստված կրաքարից, օճառաքարից եւ օձաքարից:

Մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների եզիպտական կնիքագործության համար, ի տարբերություն Հին Արեւելքի մյուս երկրների, բնորոշ էր կոյաբգեզ-կնիքների օգտագործումը: Ինքնատիպ ձեւից ու կառուցվածքից զատ նրանց յուրահատուկ էր մի հնարանք եւս: Դա ձվածիր շրջանակով սահմանազատված արձանագիր (հիերոգլիֆ) տեքստի տեղադրումն էր կոյաբգեզի հարթ մակերեսին փորագրված տեսարանի կենտրոնում: Այստեղ կնիքների պատրաստման համար օգտագործվում էին փղոսկրը, կվարցը, օճառաքարը, օձաքարը, կրաքարը, հասպիսը, որոնք հաճախ ծածկվում էին դեղին, կանաչ եւ փիրուզագույն ջնարակով:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի Նոր Խեթական թագավորության տիրակալները, միջագետքյան զլանաձեւ կնիքների եւ եզիպտական կոյաբգեզների ձեւերը չկրկնելու նպատակով, նախընտրեցին առավելապես հեմատիտից եւ գեոտիտից պատրաստված, շրջանաձեւ հարթ մակերեսով, կշռաքարաձեւ իրանով եւ երբեմն նաև մրճաձեւ բռնակով դրոշ-կնիքների կիրառումը: Սրանց վրա, ի տարբերություն եզիպտական կոյաբգեզների, արձանագրությունը տեղադրվում էր ոչ թե տեսարանի կենտրոնում, այլ երկու կամ երեք սեպագիր բոլորաշրջան գոտիներով օղակում էր այն:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանում (մ.թ.ա. 16-րդ դար) պատմական թատերաբեն իջավ Կասսիտական Բաբելոնը ավանդաբար շարունակելով Շարավային Միջագետքում մ.թ.ա. 3-րդ հազարամյակի Շիւմերի, Ակկադի, Ուրի 3-րդ հարստության, ինչպես նաև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսի «Շամուրաբիի դարաշրջանի» զլանաձեւ կնիքների արտադրության հորինվածքային առանձնահատկությունները, այն համալրեց նոր հնարանքով: Պահպանելով տեսարանի աջ կամ ձախ կողմում ուղղանկյուն շրջանակի մեջ ուղղահայաց գետեղված տեքստի սկզբունքը, կասսիտները տեսարանի վերեւում (նրան գուգահեռ) ավելացրին սեպագիր հորիզոնական տող: Ստացվեց «կամարաձեւ» դասավորված եւ կրկնվող բովանդակությամբ արձանագրություն, որի կենտրոնում տեսարանն էր: Այստեղ կնիքների արտադրության համար օգտագործվում էր լազուրիտը, քաղքեղութը, հասպիսը, ագարը:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդին կազմավորված խուրի-Միտաննի պետությունը եւս իր նորամուծությունները ներդրեց հինարեւեյան կնքագործության մեջ: Դրանցից առաջինը զլանաձեւ կնիքների վրա փո-

րագրված տեսարաններում ընդգծված համաշխատության հաստատումն էր, որն արտահայտվում էր կենաց ժաղի շուրջ հավասար հեռավորության վրա նույն քանակով (հաճախ նաև նույն դիրքով) մարդկանց, կենդանիների եւ այլ պատկերների տեղադրմանը: Երկրորդ նորամուծությունը ողջ տեսարանն աջ եւ ձախ հավասար մասերի բաժանելն էր, որոնցից մեկը հիմնականում պատկերում էր դեմ հանդիման կանգնած մարդկանց եւ, ըստ ամենայնի խորհրդանշում մարդկանց աշխարհը (քառոս), իսկ երկրորդը՝ հաճախ հորիզոնական գծով կամ պատկերանախշով բաժանվում էր երկու հավասար կեսերի, եւ վերին ու ստորին կեսերում դարձյալ պահպանելով համաշխատության սկզբունքը, ըստ ամենայնի, ներկայացնում կանոնակարգված խտոնիկ աշխարհն ու կոսմոսը: Կնիքների արտադրության համար օգտագործվում էին հենատիտը, հասպիսը, լեռնային բյուրեղը, օճառաքարը, օճաքը եւ կրաքարը:

Մ.թ.ա. 13-րդ դարից կազմավորված Միջին Ասսուրական, իսկ մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներից Նոր Ասսուրական թագավորությունները նույնպես իրենց «ուղղումները» մտցրին հիմարեւելյան կնքագործության մեջ: Գլանաձեւ կնիքների վրա փորագրված տեսարաններում գերիշխողը դարձնելով դիցաբանական սյուժեն եւ խախտելով սեպագրի տեղադրման կանոնիկ սկզբունքը, ասսուրացի կնքագործներն այն գետեղեցին տեսարանի ամենատարբեր հատվածներում: Տեքստը կարող էր կարդացվել ուղղահայաց եւ գետեղված լինել տեսարանից աջ կամ ձախ, կարող էր միախառնվել տեսարանի պատկերներին եւ մեկնաբանելով յուրաքանչյուր կերպարը, ընթերցվել ինչպես վերից վար կամ վարից վեր, այնպես էլ ձախից աջ: Կնիքները պատրաստվում էին ագարից, քաղքեղոնիտից, դիորիտից, գագատից:

Կազմավորվելով մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդում եւ որպես ինքնուրույն պետական միավոր հանդես գալով մ.թ.ա. 9-րդ դարում, քննարկված պետական կազմավորություններից անհամեմատ ուշ, Վանտոսպի թագավորության տիրակալները մեծ ընտրություն ունեին սեփական կնքագործության զարգացման համար: Օգտվելով հիմարեւելյան կնքագործության թագմադարյան ավանդույթներից, եւ միեւնույն ժամանակ փորձելով դրսեւորել սեփական ինքնատիպությունը, նրանք հնտորեն օգտագործեցին մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծից Միջագետքում, Հայկական լեռնաշխարհում եւ Փոքր Ասիայում հայտնի ու (իսկա սահմանափակ տարածում ունեցող) կոնաձեւ կնիքների ձեւը, միտաննիական օրինակների՝ տեսարանի կառուցման համաշխատության սկզբունքը եւ կասսիտներից ասսուրացիներին անցած՝ տեսարանի վերեւում հորիզոնական դիրքով տեղադրված արձանագիր տեքստի հնարանքը եւ ստեղծեցին սեփական կնիքները, որոնք ի տարբերություն վերը նկարագրված նախատիպների, արձանագիր հորիզոնական տեքստ պարու-

նակում էին նաեւ տեսարանի ստորին մասում: Երեւոյթ, որ Վաճառոսափի թագավորության նորանուժությունն էր հինարեւելյան կնքագործության մեջ: Կնիքները հիմնականում պատրաստվում էին զագատից, հազվադեպ՝ քաղքեղոնիտից եւ օճառաքարից:

Մյուս տարածաշրջաններում (Բալկանյան թերակղզի, Էգեյան աշխարհ, Արաբական թերակղզի, Միջին Ասիա) կնքագործությունը հիմնականում զարգանում էր հինարեւելյան այս զարգացած քաղաքակրթությունների եւ հատկապես Միջագետքի ու Սիրիա-Պաղեստինյան աշխարհի անմիջական ազդեցության տակ, հանգանանք, որ մեկ անգամ եւս մատնանշում է վերջիններիս առանձնակի դերը կնիքների եւ ընդհանրապես կնքագործության զարգացման գործում:

ԿՆԻՔՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԱՌՈՐՅԱ
ԳՈՐԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԽՈՐՃՐԴԱՆՇԱՆՆԵՐ

ԿՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դինարեւելյան հուշարձաններում պահպանված գրավոր սկզբնաղբյուրներն ու պեղված հնագիտական նյութերը հետաքրքիր տեղեկություններ են պարունակում կնիքների պատրաստման ու փորագրման, ինչպես նաև դրանք իրականացնող վարպետներին ներկայացվող պահանջների մասին։ Գրավոր սկզբնաղբյուրներում կնիքները հիշատակվում են «կոռուզ» (շումերերեն), «զանգ» (ակկադերեն), «կոսուկի» (ասուլերեն), «հեռ» (եգիպտերեն), «SID» (խուրրիերեն, միտաննիերեն), «KISIB» (ակկադերեն, ուրարտերեն) եւ այլ անվանումներով ու գաղափարագրերով (Աճառյան Հ. 1973, էջ 608; Դյակոնօ Ի. 1963, էջ 33, 34, 36)։ Սոցիալ-տնտեսական հարաբերություններում նշանակալի դեր ստանձնած այս առարկաների պատրաստման հնարքների կատարելագործումն ու արտադրական եղանակների մշակումը, գրադարձնութիւնը այս տեսակն աստիճանաբար վերածեցին որոշակի գիտելիքներ եւ հմտություն պահանջող, համբավաբեր ու շահեկան մասնագիտության։ Դանգանանք, որ իր հերթին պայմանավորեց այս արտադրածյուղուն բարձր արհեստավարժության հասած որոշ անձանց ընդգծված դերը տվյալ հասարակության մեջ։ Ծնումերական տեքստերը նրանց անվանում էին «bargul», իսկ ակկադականները՝ «purkullu» /Collon D. 1987, էջ 102-103/։ Ուշագրավ է, որ մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների կնիքների վրա նույնիսկ պահպանվել են ժամանակի հայտնի կնքագործների անունները։ Դրանց թվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջի միջագետքի վարպետներ Ուր-Անանան Ուր-Գիգիի որդին եւ Կիլուլան Ուր-Բագարայի որդին, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդին խուրրիական աշխարհում մեծ համբավ վայելող ալալախցի կնքագործ Էկլուվան, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին Սիրիա-Պաղեստինյան աշխարհում հայտնի Ոխմութ-Լանին Աղադիրիի որդին եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջի լարասցի վարպետ Պուզուր-Նիմկարակը Կա-Նաթիի որդին /Collon D. 1982a, նկ. 121; Collon D. 1987, էջ 103, 134, նկ. 564, 566, 567, 794; Beck P., Rainey A. 1973; Parrot A. 1954, նկ. 260/։ Այս առումով առավել արժեքավոր տեղեկություններ է պարունակում Աքեմենյան Իրանի տիրակալ Կյուրոսի ժամանակներին (մ.թ.ա. 6-րդ դար) վերագրվող սեպագիր տեքստերից մեկը, որում արձանագրված են

որակյալ կնքագործին ներկայացվող պահանջները: Ըստ այդ տեքստի սկսնակն առնվազն չորս տարի պարտավոր էր աշակերտել փորձված կնքագործի մոտ, լավ ծանոթանալ տարբեր քարատեսակների առանձնահատկություններին եւ յուրացնել կնքագործության բոլոր նրբությունները: Դրանց հետո միայն նա կարող էր սեփական արհեստանոց բացել եւ օգնական ունենալ: Նման վարպետներից առավել հաճախ աքեմենյան տեքստերում հիշատակվում են ոմն Բեզալելն ու նրա օգնական Ահոլիաբը, որոնք վարպետացած էին դրոշմ-կնիքների արտադրության գործում:

Աշխատանքի ընթացքում կնքագործ վարպետին երեմն համագործակցում էր նաև գրագիրը: Դրա անհրաժեշտությունն առաջանում էր հիմնականում արձանագիր տեքստերով կնիքների պատրաստման ժամանակ: Կնքագործական արհեստանոցների, նրանցում օգտագործվող աշխատանքային գործիքների եւ կնիքների պատրաստման եղանակների մասին հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նաև հնագիտական հուշարձանները: Դրա լավագույն վկայությունը Միջագետքի եւ Սիրիա-Պաղեստինյան աշխարհի Թել-Ասսար, Լարսա եւ Ուգարիթ բնակավայրերում պեղումների ժամանակ բացված, եւ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին վերաբերող, ակնագործների շրջիկ արհեստանոցների մնացորդների եւ նրանցում օգտագործված տարբեր չափի շաղափների, նեղ սայրով հատիչի, դուրի, փոքր քարե զնդանի, սրաքարերի, ինչպես նաև փոքր սափորի մեջ անփոփլված անավարտ կնիքների, ուլունքների եւ արժաքե ժապավենաձեւ կիսապատրաստուկների հայտնաբերումն է /Frankfort H. 1939, էջ 5; Arnaud D., Calvet Y., Huot J. 1979, էջ 1-64; Schaeffer C. 1983, էջ 165; Collon D. 1987, էջ 100-104/: Այս առումով շատ ուշագրավ են նաև ակնագործական արհեստանոցներ ներկայացնող մ.թ.ա. 2-րդ հազարամյակի եգիպտական բարձրաքանդակներն ու փորագորությունները /Wilkinson A. 1971, էջ 2; Brentjes B. 1983, էջ 11; Moneté P. 1989, էջ 148/: Նշված բոլոր տվյալների համադրումը թույլ է տալիս պնդել, որ կնիքների պատրաստման համար հինարեւելյան վարպետներն օգտագործել են կարծր քարից կամ մետաղից պատրաստված դուրատիպ գործիքներ, դանակներ, հատիչներ, ասեղներ, բիզեր, իսկ անցքերը բացվել են աղեղնաձեւ սարքերի վրա ամրացված շաղափների միջոցով՝ միակողմանի կամ երկկողմանի գայլիկոնման եղանակով (աղ. 67): Վերջին տվյալը հաստատում են ինչպես կնիքների գայլիկոնված անցքերի դիտարկումներն, այնպես էլ Աֆղանստանի Մունդիգակ բնակավայրից հայտնաբերված եւ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերով թվագրված լազուրիտե անավարտ գլանաձեւ կնիքը, որի մասամբ բացված կենտրոնական անցքի մեջ պահպանվել է պարուածեն ատամներով պղնձե կոտրված շաղափի մնացորդը /Jarrige J. 1985, էջ 281-291; Collon D. 1987, էջ 103-104/:

Ինչ վերաբերում է կնիքների մակերեսներին փորագրված պատկերներին ու տեսարաններին, ապա ձեռքի տակ առկա նյութը թույլ է տալիս ասել, որ

Վերջիններս հիմնականում կատարվել են խորադիր գծանկարնան, կետադրվագման ու փորագրման եղանակներով։ Ըստ որում, Միջազգետքի (ՈՒր, Դիքոլիքք) հնավայրերից հայտնաբերված եւ ներկայումս Լոնդոնի (BM 122942-122943, BM 1933. 10-13, 235), Բեռլինի (VA 15710), Բաղդադի (IM 1419) եւ Ֆիլադելֆիայի (CBS 31-43-7, CBS 31-43-178, CBS 32-40-316) թանգարաններուն պահպող քարե փորագրազարդ սալիկների մնացորդները վկայում են, որ հին կնքագործները նախապես նման սալիկների վրա փորագրել են առաջարկվող տեսարանը, ապա՝ սյուժեն եւ նրանում ներառված կերպարների քանակն ու դիրքը հանաձայնեցրել պատվիրատուի հետ, ճշտել պատրաստվելիք կնիքի քարատեսակի, չափերի, կրելաեղանակի հետ առնչվող բոլոր հարցերն, ապա նոր միայն ձեռնամուխ եղել բուն օրինակի ստեղծմանը։

ԿՆԻՔՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Մասնագետների կարծիքով /Մ. Էբերտ, Ս. Փշետրսկի, Բ. Գոֆֆ, Բ. Բրենտյե/ մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակներից հանդես եկած այս առարկաները, սկզբնական շրջանում, նույնատիպ նյութից (փայտ, ոսկոր, խեցի, կավ, քար) պատրաստված թռչնաձեւ, կենդանակերպ եւ երկրաչափական բնույթի կախիկների նման համարվել են հնայիլներ, ապա, ըստ ամենայնի, օգտագործվել որպես գործվածքեղենը դաշելու եւ մարդու մարմինը վիտելու հարմարանքներ, իսկ այնուհետև՝ վերածվել համայնքին, տոհմին եւ նույնիսկ առանձին ընտանիքին պատկանող առարկաներն ու ունեցվածքը դրոշմանշանով մյուսներից զատելու միջոցի /Ebert M. 1928, էջ 161; Przeworski S. 1938, էջ 227-228; Mecquenem R. 1938, էջ 144-145; Goff B. 1956, էջ 23-38; Goff B. 1963, էջ 195-210; Budge E. 1968; Виноградов В. 1963, էջ 212-215; Խանզադյան Է., Սկրտչյան Կ., Պարսանյան Է. 1973, էջ 133-134; Բրենտյես Բ. 1976, էջ 97-98; Ահտոնովա Ե. 1984, էջ 26/: Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, աստիճանաբար ավելի եւս հաստատվելով որպես անձ, սեփականություն, իշխանություն ու իրավունք խորհրդանշող առարկաներ, կնիքների որոշ տեսակներ, այնուամենայնիվ, գոյության ողջ ընթացքում չկորցրին տնտեսության միշտը բնագավառներում ունեցած իրենց դերը: Դրանցից մեկը խեցեգործությունն էր, որի մեջ կնիքների առանձին օրինակներ օգտագործվում էին որպես խեցանոթների իրաները դաշագարդելու հարմարանքներ: Նման անոթների բազմաթիվ նմուշներ հայտնաբերվել են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի Միջագետքի (Ուրուկ), Բալկանյան թերակղզու (Լերնա, Զիգուրիես, Թորոս), մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսի Հայկական լեռնաշխարհի (Լաշեն, Սեւան, Ն.Գետաշեն, Ծալքար, Ուգերլիկ-թեփե, Ապարան, Վերին Նավեր, Մեծանոր եւ այլն), Միջին Ասիայի (Տահա դեպէ, Մուլգաք), մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 3-րդ քառորդի Միջիա-Պաղեստինյան աշխարհի (Թել Մուհամեդ Արաք, Թել Մոզան), ինչպես նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսի Ասկենինյան թերակղզու (Ետրուսկյան դամբարաններ) հնագիտական համալիրներում /Boehmer R. 1985, էջ 104-105; Wiencke M. 1970, էջ 103-105, նկ. 201-203; Մարտիրօսյան A. 1964, էջ 57-58, նկ. 21, 22; Մանուկյան Յ. 1981, էջ 24-25; Կյանքարեա K. 1985, էջ 89-104, նկ. 1, 3, 5, 6; Մասիմով Ի. 1981, էջ 145-147, նկ. 10-12; Collon D. 1988, էջ 68-71, աղ. 7, նկ. 4, 7; Buccellati G., Kelly-Buccellati M. 1988, աղ. 16, նկ. 28; Walters H. 1912, էջ 243, 245; Piotrovsky B. 1970, նկ. 66; Մարտիրօսյան A. 1974, էջ 94, նկ. 59; Schaeffer C. 1962, էջ 296, նկ. 235/:

Մյուս բնագավառներն, ուր (թեև հազվադեպ) օգտագործվում էին կնիքները՝ ակնագործությունն ու հենց կնքագործությունն էր: Պահպանված նյութերը վկայում են, որ քարից պատրաստված գլանաձեւ կնիքները կիրառվել են կավե ուլունքահատիկները նախշելու եւ կավից կամ նածուկից պատրաստված գլանաձեւ կնիքների մակերեսները պատկերագրելու համար: Վերջիններս այդ նպատակի հանար օգտագործված գլանաձեւ

Կնիքների ոչ թե պարզ կրկնությունը կամ պատճենն էին (ինչպես թվում է առաջին հայացքից), այլ նրանց հակաղարծ պատկերները կրող օրինակներ: Դա լավ նկատվում էր երկու կնիքներով թաց կափի վրա գուգահեռաբար արված դաշվածքներն ուսումնասիրելիս: Միեւնույն տեսարանը մի դեպքում ստացվում էր աջից ձախ, իսկ մյուսում՝ ձախից աջ: Կար տարբերակող մի մասնամաս եւս: Մայր օրինակի (քարե կնիքի) վրա արված տեսարանի բոլոր խորադիր պատկերները, կավե կնիքի վրա ստացվում էին վերադիր: Նման կնիքներ հայտնաբերվել են Ուրի, Շնչի եւ Նուզի պեղումներից: Առաջին երկուսը վերաբերում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակին, իսկ Նուզի օրինակը թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով /Amiet P. 1972, նկ. 1022, 1069, 1299; Gibson M., Biggs R. 1977, էջ 10; Collon D. 1987, էջ 115, 119, նկ. 502/: Անհրաժեշտ տվյալների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում հավաստի ենթադրություններ անել այս եղանակով պատրաստված կնիքների կիրառնան նպատակի վերաբերյալ: Այսուհանդերձ բացառված չէ, որ նրանք պատրաստվել են խոշոր առեւտրական տների կամ արտադրական կենտրոնների կառավարիչների պատվերով, ձեռնարկություններում աշխատող առեւտրականներին եւ արհեստավորներին տիրոջ անձնական կնիքի արտատպություններով օժտված էժանագին օրինակներով ապահովելու համար: Դրա նպատակն, ըստ ամենայնի, մի դեպքում վաճառքի հանվող սեփական տեսականու պիտակավորումն էր նրանց հետ անմիջականորեն կապված պատասխանատունների կողմից, մյուս դեպքում, հավանաբար, սեփական կնիքի կեղծնան հնարավորության բացառումը: Դնարավոր է, որ գլանաձեւ կնիքների նման պատճեններ արվում էին նաև հինարեւելյան տիրակալների արքունի պալատականների համար: Վերջիններս տվյալ հասարակության վերնախավի ներկայացուցիչները լինելով անշուշտ իրավունք ունեին սեփական կնիք ունենալ եւ այն կիրարել անձնական նպատակներով, սակայն պետական գործառնությունների ժամանակ, ըստ ամենայնի, պարտավոր էին օգտվել միայն մայր կնիքից արտատպված կավե օրինակներից: Այս ենթադրությունը մասամբ կարելի է հիմնավորել Լուլրում պահվող գլանաձեւ կնիքի մի արտատպությամբ, որի վրա կարդացվում է «... Թուրայի տիրակալ Սումիրափայի՝ Յարիմ-Լիմի որդու, իշտար աստվածուիու սիրելիի, կնիքաց կնիքը» /Nougayrol J., Amiet P. 1962, էջ 169-174; Collon D. 1987, էջ 127-128, նկ. 543/:

Կնիքների օգտագործման մի հետաքրքիր բնագավառի մասին է նշում է Դ.Կոլոնը: Ըստ նրա, ուղղանկյուն, ոչ մեծ կավե տախտակների վրա գլանաձեւ կնիքներով արված դաշվածքները, հավանաբար, ժամանակին ծառայել են որպես անձը հաստատող վկայական կամ «այցետոն»: Չի բացառվում, որ այդպիսի մի «այցետոն» է իրենից ներկայացնում նաև Յայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Զուրտաքերիի թիվ 3 դամբարանաբլրում, հայտնաբերված կավե ուղղանկյուն դաշագարդ տախտակը /Ջապարիձե Օ. 1969, էջ 35, 258, աղ. 13-րդ, լուսանկար 2/:

ԿՆԻՔՆԵՐԻ ԿՐԵԼԱԶԵՎԵՐԸ

Հինարեւելյան կնիքների կիրառության բազմաբնույթ եղանակները բնականաբար, պայմանավորում էր նաև նրանց կրելածելի հետ կապված նորմերի մշակում: Այս առումով հինարեւելյան մի շարք որմնանկարներ ու բարձրաքանդակներ ներկայացնում են կնիքները կրելու տարրեր եղանակներ՝ պարանոցին, գլխի վրա, կրծքին, գտուով վրա, ձեռքին: Այս տվյալները լավ հաստատվում են նաև հնագիտական գտածոներով: Իրանական սարահարի Թեփե Գիյան, Շհշ եւ Թեփե Յիսսար հնավայրերի մ.թ.ա. 2-րդ հազարամյակով թվագրվող դամբարաններում կնիքներն ուղղութահատիկների ու փոքրիկ արձանիկների հետ միասին բացվել են կմախրի պարանոցի հատվածում /Przevorski S. 1938, էջ 227-228; Warren M. 1938, էջ 153-154; Schmidt E. 1937, էջ 54/: Ըստ որում, յուրաքանչյուր հանգուցյալի մոտ սովորաբար պեղվել է մեկ, եզակի դեպքերում երկու, երեք, հինգ, ինը, իսկ մի դամբարանում (Թեփե Յիսսար 2-րդ) նույնիսկ 13 կնիք: Նույն երեւույթը նկատվում է նաև Եգիպտոսի Հին եւ Միջին թագավորությունների ժամանակաշրջաններին վերաբերող թաղումներում, այն տարրերությամբ, որ նրանցից մեկում հանգուցյալին պատկանող չորս կնիքներն ամրացվել են ձեռքին /Brunton G. 1937, էջ 97-98; Scharff A. 1926, էջ 58; Կիհ X. 1976, էջ 53-54/:

Կրծքին կամ պարանոցին կրվող մեկ եւ ավելի կնիքների սովորույթը նկատվում է նաև Միջին Ասիայի (Ալքին դեպէ, Սապալլիտեպէ) մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների թաղումներում /Ackarow A. 1977, էջ 42, 139-140; Maccon B. 1981, էջ 42, 52, 54; Ահոնովա E. 1984, էջ 32/: Նույնն է պատկերը նաև Միջագետքում (Խաֆաջէ, Ուլ, Ուլուկ, Ձեմիեթ-Սասր): Տեղի դամբարաններում in situ բացված կնիքները թույլ են տալիս պնդել, որ պարանոցին կրվողները վերը թվարկված օրինակների նման, ուղղութահատիկների հետ միասին շարվել են նույն ոլորաքուի վրա: Դամաննան երեւույթ նկատվում է նաև Յայկական լեռնաշխարհում: Ներքին Գետաշենի թիվ 21 (ստորին թաղում) եւ Նորատուսի թիվ 1 (2-րդ խուց) դամբարանների պեղումները վկայում են, որ նրանցից յուրաքանչյուրում, հանգուցյալի վգին, ուղղութաշարի կենտրոնում հացված է եղել 3-ական կնիք: Ըստ որում նկատվում է մի ուշագրավ օրինաչափություն՝ երկու դեպքում էլ երեք կնիքներից կենտրոնականը ծածկված է փիրուզագույն կամ կանաչավուն ջնարակով: Երեք ջնարակածածկ կնիքներով, ուղղութաշար վզնոցների անենավաղ օրինակը Յայկական լեռնաշխարհում հայտնի է Օզնիի (Թռենդը) կուր-արաբայան թիվ 1 դամբարանից: Թերեւս այստեղ արժե կրկին ընդգծել նաև Սաղուգայի թռենդ-վաճածորյան թիվ 2, արդեն քննարկված, դամբարանից հայտնաբերված ուլյե կրնածեւ երեք կնիքների փաստը: Այս երեւույթը Յայկական լեռնաշխարհում շարունակում է նաև Ուշ Բրոնզե շրջափուլում (Լոռի բերդ՝ դամբարան 7, Արթիկ՝ դամբարան 274): Ըստ որում երբեմն նկատվում է դամբարանում բացված կնիք-ուղղութաների քանակի փոփոխություն: Այսպես, Արթիկի թիվ 99, 227, 306, 396 դամբարաններում, ուղղութաշարերի մեջ հանդիպում են մեկական, թիվ 514 դամբարանում՝ երկու, իսկ թիվ 422 դամբարանում՝ 10 ջնարակածածկ կնիքներ: Յատկանշական է, որ վերջին դամբարանում, մի քանի տասնյակ հա-

տիկներից կազմված վզնոցի շարի մեջ, վերը նշված 10 կնիքների հետ հայտնաբերվել է նաև միտաննիական գլանաձեւ պատկերազարդ կնիք:

Ինչ վերաբերում է հինարեւելյան դամբարաններում կմախքի կրծքի շրջանում հայտնաբերված օրինակներին, ապա նրանց մի մասը դարձյալ կրվել է վերը նկարագրված եղանակով, իսկ մյուսներն ամրացվել են օղակաձեւ զլիսիկով եւ ոլորուն հիմքով բրոնզե ձողի վրա եւ կախվել շարից առանձին, կրծքի վրա: Երբեմն բրոնզե ձողին փոխարինել է խեցուց, ոսկորից, քարից կամ այլ նյութից պատրաստված օդակավոր հարմարանքը, որը հանքաձոյլիքի (բիտում) օգնությամբ անրացվել է գլանաձեւ կնիքի վերնամասում /Frankfort H. 1955, նկ. 32, 33; Boehmer R. 1985, էջ 139; Buchanan B. 1966, նկ. 14; Collon D. 1987, նկ. 476, 482, 483, 486/: Միջագետքում կնիքները կրելու մի հետաքրքիր եղանակի մասին էլ ենթադրել է տալիս Թել Ասմարից (Եշուննա) հայտնաբերված եւ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսով թվագրվող օրինակը: Այս գլանաձեւ կնիքը հազցված է բրոնզե շքասեղի վրա: Չանի որ վերջիններս հիմնականում օգտագործվել են հազուսի կամ թիկնոցի եզրերը միացնելու եւ սանրվածքը զարդարելու համար, ապա տեղին է ենթադրել, որ Թել Ասմարի կնիքով շքասեղը եւս կրվել է հազուսի վրա կամ վարսերի մեջ /Frankfort H. 1939, աղ. 2, նկ. I; Frankfort H. 1955, աղ. 2; Collon D. 1987, էջ 108-109, նկ. 474/: Ուշագրավ է, որ Յայկական լեռնաշխարհի Քարաշամբ բնակավայրի ուշբրոնզեդարյան դամբարանադաշտի թիվ 107 դամբարանի գետիտե կնիքը եւս հայտնաբերվել է քանոյակազարդ շքասեղի հետ միասին:

Կնիքների կրնան մի ինքնատիպ եղանակ էլ ներկայացնում է Սիրիա-Պաղեստինյան աշխարհի Մարի բնակատեղիի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի շերտից հայտնաբերված խեցե ներդիրը: Ըստ նրա վրա արված փորագրության, գլանաձեւ կնիքներ կրել են նաև գոտուց իջնող ոլորաքությի վրա /Parrot A. 1962, աղ. 12-րդ, նկ. 3; Collon D. 1987, էջ 108-109, նկ. 473/: Նույն կրելաձեւը փատված է նաև միջինասիական դամբարանային համալիրներում /Антонова Е. 1984, էջ 32/:

Յին Արեւելքում եւ Միջերկրականի ավազանում կնիքների կրնան մեզ հայտնի վերջին եղանակը՝ նատների վրա կրելն է: Այդ նպատակի համար ազնիվ մետաղներից պատրաստված մատանիների վրա գլանաձեւ կնիքներն ամրացվել են այնպէս, որ օգտագործնան ժամանակ վերջիններս կարողանան պտտվել իրենց առանցքի շուրջը: Նման կնիքներ հայտնաբերվել են Բիբլիսի եւ Կարթագենի պեղումներից, կատարման հորինվածքային առանձնահատկություններով առավել մոտ են խուրի-միտաննիական կնճագործությանը եւ վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին /Chéhab M. 1937, էջ 11, 303; Amiet P. 1955, նկ. 1; Collon D. 1986, էջ 68, նկ. 18; Collon D. 1987, նկ. 200, 576/: Կնիքների կրնան այս եղանակը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին առավել տարածված էր Բալկանյան թերակղզում (Միթենե), այն տարբերությամբ միայն, որ այստեղ նատանիներին ազուցվում էին ոչ գլանաձեւ, այլ դրոշմ-կնիքներ: Գործնականում սրանք ավելի հարմար էին կիրառության համար, քանի որ թույլ էին տալիս օգտվել կնիքից առանց մատանին մատից համելու: Կնճամատանիների այս ձեւն առավել տարածում ստացավ անտիկ դարաշրջանում:

ԿՆԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՇԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Կնիքներին վերագրվել են նաև գերբնական հատկություններ: Սրանց սաղմերն, ըստ ամենայնի, ծեւավորվել են դեռևս մարդկության զարգացման ամենավաղ փուլում, երբ կնիքների նախնական օրինակներն ուլունքների ու զանազան կախիկների նման առավելապես դեկորատիվ-էսթետիկական նշանակություն ունեին եւ երեմն միայն հմայիլների դեր էին կատարում: Ամրապնդվելով տնտեսության տարբեր բնագավառներում, կնիքները ոչ միայն չկորցրին իրենց վերագրվող գերբնական հատկությունները, այլ ընդհակառակը, ներգրավեցին ծիսա-պաշտամունքային արարողությունների համակարգը: Այդ են վկայում նյութական մշակույթի մի շարք արտեֆակտներ եւ արձանագիր տեքստեր: Ըստ վերջիններիս, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսին, մարդուն չար լեզուներից ու գրպարտությունից գերծ պահելու նպատակով կավից արհեստական լեզու էին պատրաստում եւ այն դաջում չարխափան հատկություններ ունեցող գլանաձեւ կնիքով: Այնուհետեւ դաջազարդ լեզվակը տեղադրում էին կավե փոքրիկ մակույկի մեջ եւ նետում գետը, հավատալով, որ դրանով վաճում են գրպարտությունը: Իրար հաջորդող կենաց ժառերի ու համակենտրոն շրջանագծերի պատկերներով նման դաջազարդ կավե լեզվակ հայտնաբերվել է Ուրից, ունի 11,5 սմ երկարություն եւ վերաբերում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին /Legrain L. 1936, նկ. 481; Gurney O. 1960, էջ 221-227; Collon D. 1987, էջ 115-119, նկ. 497/: Մեկ այլ կավե լեզվակ վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին, հայտնաբերվել է Ալալախից /Collon D. 1975, նկ. 234; Collon D. 1987, էջ 115-116, նկ. 498/:

Գլանաձեւ կնիքների որոշ արձանագիր օրինակներ ել իրենց տեքստերում հիշատակում էին հինարեւելյան խոշոր աստվածությունների անունները եւ համարվում էին նրանց աստվածային կամքի ու իրամանի հաստատողները: Պահպում էին խոշոր տաճարական հանալիիներում եւ օգտագործվում բացառիկ դեպքերում: Նման բացառիկ դեպքերից էին արքայի թագավորությունն ու նրա աստվածային իշխանության հաստատումը, ինչպես նաև նոր տարվա հետ կապված ծիսական հանդիսությունները: Այդ նպատակով օգտագործված «աստվածապատկա» կնիքներն ու նրանց դաջվածքները, հանդիպում են Նեմրութի, Աշշուրի, Նինվեի, Ելեխ Յամադի, Բաբելոնի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսն ընդգրկող հնագիտական հուշարձաններից եւ, դատելով նրանց վրա պահպանված արձանագրություններից, պատկանել են հինարեւելյան աստվածներ Աշշուրին, Մարդուկին, Աղադին, Ներգալին, Մեպլամթա-Էային (Լագաշի աստվածություն), Իրա՛ումին /Watanabe K. 1985, էջ 387; George A. 1986, էջ 133-146; Brentjes B. 1983, էջ 134; Wiseman D. 1958, էջ 21; Collon D. 1987, էջ 131-134, նկ. 559-564, 566-567/: Միջագետքից հայտնաբերված նման կնիքներից մեկի վրա արձանագրված է «/Սա/ Բախտի /հովանավոր/ աստվածությունների կնիքն է: /Նրանցից/ մեկն Աշշուրն է, աստվածների տիրակալը, նյոււններն իգիզին ու Անունակին են՝ երկնքի ու

ստորգետնյա աշխարհի եւ մարդկության աստվածները: Այն ամենն, ինչ այս կախով կկնքվի, այլևս անհնար է խախտել: /Իսկ/ նա ով /այնուամենայնիվ երբեւ/ կիանողնի զանց առել այդ, ապա Աշշուրը՝ աստվածների տիրակալը եւ Մալխասուն, թող խոցեն նրան ու նրա երեխաներին, իրենց ահազդու գենքերով...» /Collon D. 1987, էջ 134/: Ի տարբերություն մյուս կնիքների, սրանք անհամեմատ մեծ չափեր ունեն (երկարությունը՝ 5,5-19 սմ, տրամագիծը՝ 2,5-6 սմ), պատրաստվել են թանկարժեք քարերից (հատկապես լազուրիտից) եւ երբեմն նաև ամրացվել ունեն գլխադիրներով: Նման կնիքներ, ըստ ամենայնի, գոյություն են ունեցել ոչ միայն Միջազգետքում: Այդպիսի մի օրինակ (երկարությունը 21,6 սմ, տրամագիծը 1,5 սմ) հայտնաբերվել է Իրանական սարահարթի Շահեղադ հնավայրի մ.թ.ա. 3-րդ հազարամյակով թվագրվող դամբարաններից մեկում, պատրաստված է կրաքարից եւ ներկայացնում է բուսականության ու կենդանական աշխարհի հովանավոր աստվածություններին /Hackemi A. 1972, նկ. 324; Dyson R., Harris M. 1986, էջ 106/:

Դայկական լեռնաշխարհում նման կնիքների կիրառման փաստ հանդիպում ենք Սարգոն 2-րդի լուսվյան սալիկի արձանագիր տեքստում, ուր հաղորդվում է Վանտոսայի թագավորության կրոնական կենտրոն Մուսասիրի Խալիֆի աստծո տաճարում պահվող ունենալու մասին, որին ագուցված կախով հաստատվում էին Բագրատու-Բագմաշտու (Առուբանի) աստվածությունների խալիֆի կոնց, որոշումները /Պոտրովսկի Բ. 1944, էջ 274-275/: Թերեւս «աստվածային» գորությանք օժտված եւ հաղթանակ շնորհող մի այլ կնիքի պատրաստման մասին է հաղորդում նաև Վանտոսայի թագավորության տիրակալ Սարդուրի 2-րդը: Նրա տարեգրության, ըստ Գ.Մելիքիչվիլու մ.թ.ա. 744-741 թ.թ. իրադարձությունների նկարագրությանը վերաբերող, մի հատվածը հաղորդում է.

| | | | | |
|-----------------|-------------------|---------|-------------------|---------------------|
| ... LÚ | ir - di | a - li | KUR | qul - <u>ha</u> - i |
| [i] š - ti - ni | | ma - nu | za - áš - gu - bi | |
| [K!] ŠIB | | AN.BAR | za - du - bi | DUB - t[e] |
| [URU] | il - da - mu - šá | | te - ru - bi... | |

«... Կուլխա Երկրի բոլոր irdi մարդկանց,
որ այնտեղ /դեռ/ մնացել էին, ես սպանեցի: /Այդ առքիվ/
Երկաքե կնիք պատրաստեցի: Արձանագրություն
իլդամուշա քաղաքում տեղադրեցի...»

Մելիքիշվիլի Գ. 1960,
էջ 280-282/:

Դինարեւելյան գերազույն աստվածություններին պատկանող ժիսական կնիքներից զատ, ըստ ամենայնի, պահպանական հատկություններ են վերագրվել նաեւ հասարակության տարբեր ներկայացուցիչներին պատկանող անձնական կնիքների մի մասին: Պատահական չէ, որ նրանց վրա արված փորագրությունները ներկայացնում են տարբեր աստվածությունների ու նրանց խորհրդանշների, կուռքերի եւ ծիսա-պաշտամունքային արարողությունների տեսարաններ, ինչպես նաեւ կրում աղոթքի, օրինանքի, մաղթանքի ու նվիրատվության տեքստեր: Վերջիններս իրենց բովանդակությամբ բավական լակոնիկ են ու խորհրդանշական: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսի բարելոյնյան կնիքներից մեկի վրա փորագրված է. «Գրա ինձ եա: Դու ուրախության պահապանն ես ամեն մեկի, ով օրինում է քեզ» /Buchanan B. 1981, նկ. 819/: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսի կասսիտական օրինակի վրա կարդացվում է. «Օ՛ Մարդուկ, վսեմ բարձրյալ, ազնվազարմ /տեր/, ում ձեռքերում են երկնի ու երկրի հզոր ուժերը: Միշտ առաջնորդող եղիր, եւ /ինձ/ քո ծառային, հայացքովդ երջանկացրու» /Limet H. 1971, աղ. 6, նկ. 2; Van Buren E. 1954, աղ. 1, նկ. 4; Collon D. 1987, էջ 106-107, նկ. 462/: Թել Սուլբեյիից հայտնաբերված մեկ այլ կասսիտական կնիքի տեքստն այսպիսին է. «Մարդուկ, երկնի ու երկրի իմաստուն, կյանքի հովանավոր, /իու/ որ արդարադատությամբ լի արարում ես երկնի ու երկրի լուսը, արա այնպես, որ /ես/՝ քեզ երկրպագողն ու այս կնիքը պատրաստողը, միշտ քաջառողջ լինեմ» /Boehmer R. 1981, նկ. 19/: Կասսիտական երրորդ կնիքը հաղորդում է. «Ենթամունա աստծո իրամանով, այս /կնիքն/ օգտագործողը թող լինի հաստատուն ու կյանքով լի» /Porada E. 1948 թ, նկ. 603; Collon D. 1987, էջ 196-197, նկ. 960, 961/: Նույն ժամանակաշրջանի խուրրիական կնիքի տեքստն այսպիսին է. «Աղադ, դու իմ խորհրդատուն ես: Սին, դու հովանավորն ես իմ արքայական իշխանության: /Եա/՝ Սուլիմիա-փան, Յարհմ-Լիմի որդին, Թուլբայի տիրակալը՝ Իշտար աստվածուիու սիրելին են» /Nougayrol J., Amiet P. 1962, էջ 169-174; Collon D. 1987, 127-128, նկ. 543/: Իրանական սարահարթից հայտնաբերված կնիքներից մեկի վրա արձանագրված է. «Թենիքի-Սիար՝ Ենչի եւ Անշանի թագավոր, Կիրվաշիր եւ Ինշուշինակ աստվածների ծառա: Ամենայն սիրով տուր նրանց իրենց սրտի ուզածը: Երկրպագիր նրանց հավիտյան» /Collon D. 1987, էջ 127-128, նկ. 547/: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին աստուրական կնիքի վրա հանդիպում է նի այլ տեքստ-բանաձեւ. «Նաբու աստծուն, իր տիրոջը, Նաբու-Յարիխ-Իլանին Մարդուկ աստծո գարեջրագործը, իր կյանքի /փրկության/ հանար այս կնիքը նվիրաբերեց» /Wiseman D. 1959, աղ. 64/: Օրինանքի տեքստերից եւ փորագիր ծիսական տեսարաններից զատ, ին մարդկանց պատկերացումներում կնիքներին վերագրվող գերբնական հատկությունների հետ առնչվում էր նի հանգանանք եւս: Դա պերճանքի բազմապիսի առարկաների, արձանիկների, ներդիրների, երեսապատման նաեւ կնիքների պատրաստման հանափ հումք հանդիսացող քարատեսակների ընտրությունն էր: Այն պատահական բնույթ չէր կրում եւ եսթետիկական հատկանիշներից զատ, որոշակի հմայա-պահպանական ծանրաբեռնվածություն

ուներ: Ըստ որում, եթե քարատեսակների մի մեջ խումբ (կրաքար, ավազաքար, գիպս, ալեբաստր, օճառքաքար, օձաքար, ագաք, սարդին, քլորիտ, կվարց, կալցիտ, քաղքեղոնիտ, լեռնային բյուրեղ, սարդին եւ այլն) բնորոշ էր Դին Արեւելքի գրեթե բոլոր տարածաշրջաններին, ապա թանկարժեք եւ կիսաքանակարժեք քարերի մի որոշակի մաս, համեմատաբար, լոկալ կիրառություն ուներ: Միջազգետքի համար նման առանձնահատուկ քար էր հանդիսանում լազուրիտը (լազվարդ), իրանական սարահարթում՝ հեռվանդիտն ու մորդենիտը, Սիրիա-Պաղեստինյան աշխարհում եւ Միջերկրական ավազանում՝ թերեւս հասպիսը, Փոքր Ասիայում՝ հեմատիտը (արճաքար), Շայկական լեռնաշխարհում՝ գագատը (գիշեր): Երբեմն հանդիպում են նաև կնիքներ, որոնք պատրաստված են այդ նպատակի համար Դին Արեւելքում հազվադեպ կիրառվող քարատեսակներից (արագոնիտ, ամազոնիտ, նեֆրիտ, խրիզոլիտ, երկնաքար, մեղեսիկ, օբսիդիան):

Եթեւս հնագույն ժամանակներից պահպանված բանավոր գրուցներում, արձանագիր տեքստերում, ինչպես նաև հռոմեացի (Կայոս Պլինիոս Սեկունդ, Խսիդր Սեւիլիացի), հույն (Եպիփանես Սալամինցի, Պտելլոս), արաբ (Ալ-Խազինի, Ալ-Կինդի, Թեյֆաշի), հայ (Միհրար Այրիվանեցի, Արաքել Ղավրիժեցի), միջնասիացի (Ալ-Բիրունի, Ավիցեննա) պատմիչների եւ ուշ միջնադարի եվլուպացի մտածողների (Ֆիզմայեր, Շիյողեր) մոտ պահպանվել են ուշագրավ փաստեր թանկարժեք քարերին վերագրվող գերբնական հստկությունների մասին: Ըստ այդ տեղեկությունների սարդինը (աղեղ, սեյլան, պիճառ) կտրում էր ներքին եւ արտաքին արճահոսությունը, եթե այն քարի կամ մետաղի առաջացրած վերքից չէր: Փարատում էր չար մտքերը եւ օգնում հղի կանանց հեշտ ծննդաբերելու: Ազարը (ակատես, շերո) պահպանում էր բորոտությունից ու քոսից, օձի ու կարիճի խայրոցներից ու քույնից: Մարդուն պերճախոսություն ու ինմաստություն էր շնորհում: Շակինը (յախոնտ, յաղութ, կայժ) բերանը դնելիս կտրում էր ծարավը, վանում էր չարքերից, մարդուն օժտում հաճելի վարդեցողությամբ: Զնրուխտը կուրացնում էր օձերին ու վիշապներին, վանում կարիճներին ու նորմերին, պաշտպանում ամեն տեսակ թույնից, հնարավորություն ընձեռում կանխատեսելու ապազան: Տոպազը (տպազին, կորունդ) եւ նեֆրիտը (յաշմ) վանում էին երիկամային ցավերը: Շափյուղան (սապֆիր) վերացնում էր ավելորդ մսային աճուկները, ամրացնում էր տեսողությունն ու սիրտը, օգնում տենորի ու մելամաղձության ժամանակ: Մեղեսիկը (ամեթիստ, ախլամա) կտրում էր ծարավը, բացում ախորժակը, փարատում ծանր տրամադրությունը, բուժում մեջքի ցավը, պահպանում դեւերից, հնարավորություն տալիս կառավարել քամին ու փոթորիկները: Լեռնային բյուրեղը (կրիստալ) գերծ էր պահում մղձավանցից, բուժում ատամները: Լազուրիտը (լազվարդ, լապիս-լազոլի) նպատակ էր տեսողությանը, հանում էր մեջքի ցավը, բուժում ճինար (հավանաքար հողացավ) հիվանդությունը: Սերողիկը (յամանի) ի զորու էր փլված տաճ կամ պատի տակ ընկած մարդուն ողջ պահել: Օձաքարը (սերպենտին) բուժում էր օձի խայրոցն ու կարմիր քամի (օձի ցավ) հիվանդությունը: Ոսկեքարը (խրիզոլիտ) չեզոքացնում էր ստա-

մորսի ցավերը: Սարը (համպար, յանտար) վաճում էր գլխացավը, օգնում տեսողությանը: Յեմատիտը (արնաքար, սղուն քար) ամոքում էր ուռուցքները: Գագատը (գիշեր, գիշերաքար, սեպած) հատկություն ուներ փոխելու երեխայի աչքի գույնը (կապույտը դարձնել սել): Վրան նայելիս լավացնում էր տեսողությունը: Յասպիսը (ջասպեր, յասպիս, զապարճատ) ավելացնում էր աչքի լույսը, մարդուն պահպանում կայծակից ու երկրաշարժից: Մ.թ.ա. 6-րդ դարի Բաբելոնի տիրակալ Նաբոնիդի տեքստերից մեկը նշում էր, որ «... թանկարժեք հասպիսից պատրաստված կնիքը՝ արքայական քար է» /Առաքել Ղավիթեցի 1988, էջ 454-471; Պատկանյ Կ. 1979; Պետրով Յ. 1985, էջ 84-109; Բրիկման Յ. 1779, էջ 173; Բիրունի Ա. 1963, էջ 53, 138; Պյուլյաև Մ. 1888, էջ 362-365; Կայ Պլինիուս Հելվետուս 1819; Collon D. 1986; MHM 1992, էջ 151-152/:

Բնականաբար թանկարժեք եւ կիսաբանկարժեք քարերին վերագրվող այս հատկությունները նույնությամբ փոխանցվում էին նաև նրանցից պատրաստված կնիքներին եւ անրապնդվում Յին Արեւելքի եւ հատկապես Միջագետքի տարբեր առասպելներից, բանավոր ու գրավոր գրուցներից, ավանդություններից եւ ծիսական արարողություններից վերցված հանապատասխան դրվագների փորագրությամբ: Նման հատկություններով օժտված կնիքները, ինչպես ցույց են տալիս Բ.Գոֆֆի ուսումնասիրությունները, նպաստում էին գերծ մնալ չար աչքից եւ ձախորդություններից, սեւ մոգությունից, իհվանդություններ տարածող չարքերից, բուժում հողացավն ու բերանի գարշահոտությունը, օգնում կանանց ծննդաբերության ժամանակ /Goff B. 1956, էջ 18/: Վերջին փաստը հաստատում էն նաև իհնարեւելյան արձանագիր երազիանները: Ըստ նրանց, երազում կարմիր քարից կնիք տեսնելը խորհրդանշիշն էր ուստրեր ու դուստրեր ունենալու, իսկ արձանագիր տեքստովը՝ որդու ծննդյան եւ հանգստության: Նույն տեքստերի հանաձայն երազում կնիքի կորուստը կանխանշում էր երեխայի մահ /Oppenheim A. 1956, էջ 276/:

Կնիքների ծիսական բնույթը ներկայացնող եւս մեկ առանձնահատկություն նկատվում է Յայկական լեռնաշխարհի (Սախիջեւանի Քյոլ-թեփե 1-ին, Դվին, Մեծամոր, Մոլսաննար-թափա, Սարի-թեփե), Կովկասի (Կատնալիխելի, Սելի-Գելե, Մելանի, Գունիք, Ալխան-կալա) եւ Միջին Ասիայի (Մուրգաբ) հնագիտական համալիրներում: Տեղի մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների բնակատեղիների պաշտամունքային համալիրներից պեղված դրոշմակնիքները (գլանաձեւ եւ կոնաձեւ օրինակներ չեն հայտնաբերվել), ինչպես ենթադրում են ուսումնասիրողները, առնչվում են ծիսական հացի թխման արարողությունների հետ: Նրանցով դաշվել են թխվելիք հացի եւ բլիթների մակերեսները: Այս առումով հատկապես կարեւոր են Մեծամորի եւ Կատնալիխելիի մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների սահմանագծով թվագրվող սրբարաններից հայտնաբերված դրոշմ-կնիքները, որոնց հետ միասին նույն տեղում պեղվել են նաև նման դաշագարդ հացերի կավե մանրակերտները (կրկնօրինակները) /Խաչուտայավուլի Դ. 1964, էջ 16; Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, էջ 133-134; Նարիմանօվ Ի. 1973, էջ

124-125; Кушнарева К. 1977, № 45, 57-58; Алиев В. 1971, № 226; Сарнианидзе В. 1976; Антонова Е. 1984, № 30-31; Котович В. 1965, № 57/: Դաջազարդ ծիսական հացեր թխելու սովորությունը Դայկական լեռնաշխարհում, Կովկասում եւ Միջին Ասիայում պահպանվեց քրիստոնեության եւ մահմեդականության ընդունումից հետո եւս: Դրա լավագույն վկայությունը մինչեւ 20-րդ դար հասած տարբեր կրոնական ժեսերի ժամանակ գարանախշերի, դաջերի եւ դրոշմների զանազան օրինակների օգտագործումն է: Քրիստոնյաների մոտ այն կիրառվում է Ծննդոց, Նոր տարվա, Զատկի, Վերափոխման տոների ու պատարագի, իսկ մահմեդականների մոտ՝ Ուրազայի, Ռամադանի (Ռամազան) եւ Ամբար-Օնայի հանդիսությունների ժամանակ /Խանզադյան Ե., Մկրտչյան Կ., Պարսամյան Ե. 1978, № 134, 135; Բարձաւելիձե Ե. 1957, աղ. 18-րդ; Անդրеև Մ. 1953, № 39; Չեսարև Գ. 1969, № 244; ՀՍՀ, հատոր 6, 1976, № 648/:

Դնագիտական հուշարձանների պեղումներից ստացված տվյալներն ու հինարեւելյան գրավոր սկզբնադրյուլըների հաղորդումները հիմք են տալիս ենթադրելու, որ տնտեսության մեջ եւ հասարակական կյանքում բազմաբնույթ կիրառություններ գտած եւ դրանով իսկ իրենց որոշակի դերն ու նշանակությունը ձեռք բերած այս առարկաները, ժամանակի ընթացքում, վերածվել են խորհրդանիշների, որոնցով էներգիյան վաղերկրագործական բնակավայրերում մատնանշվել են դրանք կրողների սեռա-տարիքային առանձնահատկությունները, զբաղմունքն ու համայնքի ներսում ունեցած դիրքի, իսկ Բրոնզի դարաշրջանից սկսած՝ միայն սոցիալական կարգավիճակը (առանց սեռա-տարիքային սահմանափակումների): Այս առունով վաղուց արդեն մասնագետները նկատել են, որ էներգիյան եւ երեմն նաև վաղբրոնզեդարյան (վաղ փուլի) դամբարանային համալիրներում պեղված կնիքների գերակշիռ մասը կանանց թաղումներից են: Այս երեւույթը համեմատաբար լավ փաստագրված է Իրանական սարահարթի եւ Միջին Ասիայի դամբարանադաշտերում: Թեփե Յիսաար 1-ինի կանանց 8 թաղումներում ընդհանուր թվով հայտնաբերվել է 37, իսկ տղամարդկանց 5 (որոնցից մեկը կասկածելի) թաղումներում՝ ընդամենը 6 դրոշմ-կնիք: Այստեղ նկատվում է մի տեսնենց եւս: Եթե տղամարդկանց մոտ դրոշմ-կնիքները հիմնականում մեկական են յուրաքանչյուր դամբարանում, ապա կանանց թաղումներում հանդիպում են 1, 2, 3, 5, 9 եւ նույնիսկ 13-ական օրինակներ /Schmidt E. 1937, էջ 69-84/: Նույն երեւույթը նկատվում է նաև Թեփե-Յիսաար 2-րդում, ուր տղամարդկանց 5 եւ կանանց 2 թաղումներում ընդհանուր առնամբ հայտնաբերվել են հավասար թվով (6-ական) դրոշմ-կնիքներ: Ինչ վերաբերում է կնիքները կրողների տարիքային ցենզին, ապա այդ տվյալը ցավոք, ժամանակին չի հաստատագրվել: Նման պատկեր է նաև Շահրի-Սոխտայի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի դամբարանադաշտում: Կնիքներ պարունակող 12 դամբարաններից 9-ը պատկանել են կանանց եւ միայն 3-ը՝ տղամարդկանց: Դետագրքիր է, որ այստեղ բացվել են նաև մեկ եւ ավելի կնիքներ պարունակող խմբային թաղումներ /դամբարաններ 132 եւ 311/, ուր կնիքները գտնվել են միայն կանանց կմախքների մոտ: Դանգուցյալների տարիքային ցենզը դարձալ որոշված չէ /Piperno M. 1979/: Անեն դեպքում, դատելով ընդհանուր նկարագրությունից, թվում է, որ եւ Թեփե Յիսաարում, եւ Շահրի-Սոխտայում գործ ունենք հասուն տարիքի անհատների հետ, քանի որ այս դամբարանադաշտերի մյուս դամբարաններում հայտնաբերված կմախքների մի մասի համար, առանց նշելու տարիքային սահմանները, օգտագործվում են նաև «երիտասարդ» եւ «երեխա» բնութագրումները: Մի դեպքում միայն Շահրի-Սոխտայի դաբարանադաշտում ֆիքսվել է տարիքը: Դա 6-7 տարեկան երեխայի թաղում է, որի մոտ հայտնաբերվել է դրոշմ-կնիք /Ահոնովա E. 1984, էջ 32/:

Միջին Ասիայի (Ալբինեալե, Սապալիտեալե) մ.թ.ա. 3-րդ հազարամյակի թաղումներում նույնպես դրոշմ-կնիքների հիմնական մասը հայտնաբերվել է

կանաց թաղումներում: Այստեղ եւս տարիքային բնորոշումները բացակայում են: Միայն Սապալլիտեպէի թիվ 113 դամբարանում հայտնաբերված երկու դրոշմ-կնիքները պատկանել են Երիտասարդ կոնջ /Maccoon B. 1981, էջ 42, 52, 54; Aскарօվ Ա. 1977, էջ 42, 139-140/:

Ինչ վերաբերում է Յին Արեւելքի մյուս տարածաշրջաններին, ապա Էնեոլիթյան-վաղբրոնզեդարյան մեջ հետաքրքրող դամբարանների մարդաբանական նյութի խիստ սահմանափակ ուսումնասիրվածությունը հնարավորություն չի տալիս նույնիսկ խոսել կնիքները կրողների սեռա-տարիքային պատկանելության մասին: Այնուամենայնիվ վաղերկրագործական մի շարք բնակատեղիների (Չարալ-հույուկ, Թեփե-Գավրա, Թել Բրակ, Նեա-Նիկոնեիա, Կուկուտենի, Տրիպուն, Ուսատովի, Վիխվատինցի, Ստարչետ, Կյորոշ եւ այլն) սրբարաններում կանանց արձանիկների հետ նույնատիպ դրոշմ-կնիքների հայտնաբերումը, թույլ է տալիս այստեղ եւս, նշված ժամանակաշրջանում, հավանական համարել կանանց (եւ հատկապես հասուն տարիքի կանանց) հետ վերջիններիս կապը: Անշուշտ նկարագրված երեւույն ավելի շատ բնորոշ էր էնեոլիթյան ժամանակաշրջանին, եթե, ըստ Զ.Մելլաարտի, վաղ երկրագործության գարգացմանը գուգընթաց, աստիճանաբար, սկսում է նվազել որսորդության ու տղանարդու, եւ տվյալ հասարակության մեջ ավելի ընդգծվում կոնջ եւ նրա հետ անմիջականորեն կապված առարկաների ու խորհրդանշիների դերը: Նման արտեֆակտներից մեկը հենց դրոշմ-կնիքներն էին, որ մինչ այդ անհայտ էին հնագիտական համալիրներում /Mellaart J. 1967, էջ 176/: Դարցին այս տեսանկյունից մոտենալիս, թերեւս ինաստ ունի ենթադրել, որ «կնիք»-ը բառարմատի նակարդակում կարող է առնչվել «մայր» եւ հատկապես «կին» հասկացությունների հետ եւ, հենց վերջինից ճյուղավորվելով՝ աստիճանաբար վերածվել յուրօրինակ ինաստային ժանրաբեննվածություն կրող արտահայտության, ապա՝ ինքնուրույն բառի: Դա կարծես թե առավել նկատելի է հայերենում, որը «կին /բարբառային կնիկ/», «կինք /հետք/» եւ «կնիք» բառերը եւ հնչելածեւով, եւ արտաքրնամբ գրեթե նույնական են: Ըստ Զ.Աճառյանի «կին»-ը բնիկ հայերեն բառ է եւ ունեցել է երկու համազոր արմատներ՝ «-կին» եւ «կան»: Ըստ որում «-կին» արմատը ծագում է հնախոսական «ցWen-» կամ «ցWēn-» ձեւից, իսկ «կան»-ը՝ «ցWη-»-ից /Աճառյան Զ. 1973, էջ, 588-590/: Այդ նույնինաստ երկու արմատներից հայերենի տարբեր բարբառներում ունենք «կին, գին, գեն, ծին, ջան, կանացի, կանանց, կանանի» («1. կին, 2. ծնունդ, 3. ժառանգականություն» ինաստներով), «կինք» («1. հետք, 2. ուժ, գորություն» ինաստներով), «կնիք, կնուք, կնոր, կնոնք, կնույն, գնյունք, գունունք» («1. տարիքային որոշակի սահմանների հաղթահարմանն ուղղված ժիսակատարություն, 2. մկրտություն» ինաստներով) եւ հնդեվիոպական մի խումբ լեզուներում հանդիպող՝ «ցնա» - «աստվածուիի» (սանսկրիտ), «յան» - «կին» (սանսկրիտ), «կնիկ» - «օրիորդ, աղջիկ» (պահլավերեն), «զան» - «կին» (պահլավերեն, պարսկերեն), «շն» - «կին» (քրդերեն), «յինա՛» - «կին» (աֆղաներեն), «qēns, qinō» - «կին» (գորերեն), «cwen, queen» - «կին, բագու-

հի» (անգլերեն), «շեն» - «կին» (ռուսերեն) եւ նի խումբ այլ նույնատիպ եւ նույնինաստ բառեր /Աճառյան թ. 1978, էջ 564-566, 588-590, 591-592; Գամքրելիձե Տ., Խանով Բ. 1984, էջ 748-749/: Ինչ վերաբերում է «կինք» բառին, ապա այն բացահայտ ընդհանրություններ ունի ակլաղական «զառա-զս» եւ ասսուրական «կո-ոս-սկ-ու», «կանիկ» բառերի հետ եւ, ըստ էության, սեմական լեզվընտանիքի բառարմատ է համարվում:

Ինչպես ուրեմն բացատրել հնդեվրոպական «ց'են-, ց'են-, ց'են-» եւ սեմական «զառազու, կոսու, կանիկ» բառարմատների նմանության պարագան եւ կոնկրետ մեկ լեզվի (տվյալ դեպքում՝ հայերենի) բառարմատների հիմնաշերտուն երկուսի պահպանված լինելու փաստը: Բացառված չէ, որ դեռևս՝ նոստրատիկ (հնդեվրոպականի եւ սեմականի դեռ բաժանված) նախալեզվում ձեւավորված «կին» արմատը (նկատի ունենալով մարդկային հասարակության միայն իգական կեսի մենաշնորհը հանդիսացող ծնելու հատկությունը) նախապես ընկալվեր որպես «իր նմանին արարող, ստեղծող, վերաբտադրող, ծնող» եւ ըստ այդմ էլ, ավելի ուշ (թերեւս էնեոլիթյան - վաղերկրագործական ժամանակաշրջանից) տարածվել նաեւ նման հատկություններ դրսեւրող եւ դեռևս իրենց ինքնուրույն անվանումը չունեցող նոր առարկաների (դրոշմ-կնիքների) վրա: Այս առումով «կին», «կինք» եւ «կինք» բառերի նոստրատիկ ծագումը վկայում է մի դիտարկում եւս: Դա, ժամանակի ընթացքում հնդեվրոպական բառ դարձած «կին» բառարմատի խիստ հազվադեպ երեւակումն է (նույն ինաստով) սեմական լեզուներում (ակլաղերեն՝ «կինու» - «հարճ», արամերեն՝ «կու» - «կին») եւ սեմական «զառազու, կանիկ» բառարմատի պահպանումն է հնդեվրոպականներում (հայերեն՝ «կինք, կինք, կնունք», ռուսերեն՝ «կնիգա», «կնյացիք» եւ այլն):

«կին», «կինք (հետք)» եւ «կինք» բառերի նույն նախարարմատից ծագելը, մեր կարծիքով, վկայում է ուշադրության արժանի մի փաստ եւս: Դա հայերենի «տիպ» բառարմատն է: Արմատական բառարանում այն միաժամանակ հանդես է գալիս երեք առանձին ինաստուերով.

ա) նշանակում է «կինքի թողած հետք, դրոշմվածք, կաղապար»,
բ) նշանակում է «կանացի սեռական օրգան, իգական անդամ»,
գ) նշանակում է «ծովախնեցի, խխունչ, ոստրե, գաղտակուր» (Աճառյան թ. 1979, էջ 408-409): Այսպիսով «տիպ» բառի առաջին երկու ինաստուերի հոմանիշ լինելը միաժամանակ «կին» եւ «կինք» բառերին, մեկ անգամ եւս ենթադրել է տալիս վաղ անցյալում վերջիններիս նույնինաստ լինելու եւ թերեւս նույն նախարարմատից ծագելու հանգամանքը: Ուշագրավ է, որ այս վերակազմության համատեքստում աշխատում է նաեւ «տիպ» բառի երրորդ՝ «ծովախնեցի, խխունչ, ոստրե, գաղտակուր» ինաստը: Բանն այն է, որ էնեոլիթյան - վաղբրոնզեդարյան մի շարք հուշարձաններում (Թել Բրակ, Ֆեստոս, Այա-Երիխնի) ծովախխունչների որոշ տեսակներով (հատկապես cypraea moneda - ով) դրոշմազարդել են խեցեղենի մակերեսը եւ, ըստ էության, վերջիններս կիրառել որպես դրոշմ-կնիքների նախարարմատեր, իսկ ըստ

հնդկական «Միաբհարատա» ոյուցազնավեպի՝ Արատտայի բնակիչները «ծովախխունջ» բառն օգտագործել են որպես «կանացի սեռական օրգան, իգական անդամ» հասկացության հոմանիշ /Levi D., Carnici F. 1988, էջ 320, աղ. 27; Կարնապարա 1990, էջ 110-111, 252/: Տվյալներ, որ դարձյալ խոսում են մեր վարկածի օգտին:

Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաղ, նախնադարյան համայնական կարգերի քայլայման պայմաններում, կնիքների հանդեպ կանանց ունեցած գերակայությունն աստիճանաբար ընկած եւ նրանք՝ տվյալ համայնքի կոնցը պատկանող հնայիլ-խորհրդանշաններից սկսեցին վերածվել տոհմի, ընտանիքի եւ անգամ առանձին անհատի անձնական սեփականությունն, իրավունքն ու իշխանությունը խորհրդանշող առարկաների: Հանգամանք, որ մի կողմ մնելով սեռա-տարիքային սահմանափակումներն, այս դեպքում որոշակիորեն ընդգծում էր տվյալ հասարակության սոցիալական սանրուլակում անհատի ունեցած կարգավիճակը:

Այս տեսանկյունից հետաքրքիր տեղեկատվություն են պարունակում Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան դամբարանները: Դրանցից ամենավաղերը (Թուեր՝ դամբարանաբլուրներ թիվ 6, 15, 16, Սաղուգայի հովիտ՝ դամբարանաբլուր թիվ 2, Քարաշամբ՝ Մեծ դամբարանաբլուր) վերաբերում են Միջին Բրոնզի շրջափուլի թուեր-վանաձորյան մշակույթին, թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագծով եւ, ինչպես նշեցինք ուսումնասիրության համապատասխան հատվածում, ուսկուց պատրաստված ուշագրավ առարկաներ են պարունակում, որոնք գլանածեւ ու կրնածեւ կնիքների հնքնատիպ օրինակներ են հանդիսանում եւ, ըստ այդն էլ, կարող էին որպես իշխանության խորհրդանշաններ ընկալվել: Վերջին ենթադրությունը կարելի է հիմնավորել չորս կարեւոր դիտարկումներով.

ա). քննարկվող իրերը հայտնաբերվել են թուեր-վանաձորյան մշակույթը կրող էրնիկ տարրի առաջնորդներին (հնարավոր է եւ աշխարհիկ, եւ հոգեւոր) պատկանող թաղումներից,

բ). պատրաստված են ոսկուց, որն ինքնին իշխանության ու կարգավիճակի խորհրդանշան է,

գ). իրենց վրա կրում են դրվագված զարդեր եւ նախշամոտիվներ, որոնք յուրահատուկ են թուեր-վանաձորյան բրուտագործությանը, ոսկերչությանն ու որմնանկարչությանը եւ, ըստ էության, մշակութային տարբերանշանների դեր են կատարում,

դ). ունեն կանոնիկ ձեւ ու չափ, որը խոսում է քննարկվող իրերի ոչ պատահական, այլ ավանդական օգտագործման, կարեւորության եւ որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն ունենալու մասին:

Այս առումով առավել ինֆորմատիվ է Սեւանի ավագանի Ներքին Գետաշեն բնակավայրի մոտ գտնվող դամբարանահաշտում պեղված 21 դամբարանը, որ վերաբերում է Միջինից Ուշ Բրոնզի շրջափուլին անցման ժամանակաշրջանին եւ թվագրվում՝ մ.թ.ա. 16-15-րդ դարերի սահմանադժով /Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991, էջ 33-35/: Արեւելք-արեւմուտք կողմնորոշումով, քարաշար այս դամբարանի մոտ 15,6 քառ.մ. մակարդակությամբ գործում է առաջարկված պատճենահանումը:

ունեցող խցի հատակին, ընդհանուր քանակով 37 սափորիկների, քրեղանների ու կավե մեծ կաթսայի հետ մեկտեղ թաղված էին նաև 18 կմախքներ: Ըստ որում դամբարանախցի ողջ արեւելյան կեսը զբաղեցնում էին այս եւ ծախս կողքերին կծկված դիրքով պառկած երկու ամբողջական կնախքները, որոնցից առաջինը մոտ 50 տարեկան տղամարդ էր, իսկ երկրորդը՝ մոտ 27 տարեկան կին*: Նրանց գլխավերեւում, հյուսիսային պատի տակ դրված էր մոտ 5-7 տարեկան շան կմախք, որի առջեւի եւ ետեւի թաթերը՝ նախադաստակի եւ նախագարշապարի հատվածում օղակված էին բրոնզե ժապավեններով: Պառկած զույգի ոտնաթաթերի մոտ, հարավային պատի տակ, դրված էին երեք ոչխարների ոսկերներ, կզաքիսի եւ աղվեսի զանգեր, ինչպես նաև 6-10 ամսեկան եւ 1,5 տարեկան երկու երեխանների ստորին ծննդներ: Դամբարանախուց իջեցված հանդերձանքի, սպառազինության եւ պերճանքի առարկանների ողջ տեսականին դրված էր միայն նկարագրված զույգի մոտ: Մնացած 16 մարդկային կմախքները (երկուուր համապատասխանաբար խցի հարավ-արեւելյան եւ հյուսիս-արեւելյան անկյուններում, իսկ 14-ը՝ երեք հաջորդական շարքերով՝ խցի արեւանության կեսում) թաղված էին նստած դիրքով եւ զուրկ էին որեւէ արտեֆակտից: Թաղման համախմբի նույն հարության վրա տեղափորված լինելը, արտեֆակտների անխաթար վիճակը, խցի տարրեր հատվածներում տեղադրված կավանոքների որակի, չափի, ծեւի, պատրաստման եւ նախշազարդման նախանական փոխկապակցվածությունը վկայում են դամբարանախցի հատակին միաժամանակյա ակտով կատարված թաղման արարողության մասին: Բերված տվյալները եւ հատկապես խուցն իջեցված հանգուցյալների կմախքների միջյանց նկատմամբ ունեցած հիերարխիկ դիրքը, քույլ են տալիս ենթադրել, որ տվյալ դեպքում մենք, ըստ ամենայնի, գործ ունենք հասարակության մեջ որոշակի ստատուս ունեցող տղամարդու՝ «տիրոջ», թաղման արարողության հետ, որի ժամանակ բռնությամբ սպանվել են նույն դամբարանախուցն է իջեցվել ուղեկցող անձնակազմը: Ն.Գետաշենի թիվ 21 դամբարանի այս մանրանասն նկարագրությունը բերվեց ոչ պատահաբար: Բան այն է, որ մոտ 50-ամյա «տիրոջ» կմախքի պեղման ժամանակ՝ բրոնզե դաշտույնի, լանջապանակի բրոնզե սկավառակաձեւ վահանակների, սրոցաքարի եւ այլ նյութերի հետ միասին, վերջինիս պարանոցի մոտ բացվեց գլանաձեւ հատիկներից կազմված ուլունքաշար վզնոց, որի կենտրոնում ամրացված էին ջնարակապատ երեք պրիզմայաձեւ կնիքներ: Ամենայն հավանականությամբ վերը նկարագրված ոչ շարքային նյութերի հետ միասին, սրանք եւս կոչված էին ընդգծելու հանգուցյալի բարձր սոցիալական կարգավիճակը: Պրիզմայաձեւ կնիքը հանգուցյալի սոցիալական կարգավիճակը: Պրիզմայաձեւ կնիքը հանգուցյալի սոցիալական կարգավիճակը:

* Մեռա-տարիթային բնորոշումները կատարել են մարդարաններ
Ռ.Մկրտչյանը եւ Ա.Փալիկյանը:

13-րդ դարերով թվագրվող, թիվ 11ա դամբարանում: Դյուսիս-արեւելքից հարավ-արեւնուտք կողմնորոշված եւ միաժամանակյա ակտով խնճային թաղում պարունակող այս հիմնահողային դամբանախցում հայտնաբերվել են կծկված դիրքով ծախ կողին պառկած երեք կանանց վատ պահպանված կմախճներ: Նրանցից մեկը, որ 18-22 տարեկան էր, ճակատին բրոնզե ճակատակալ ուներ, իսկ մյուս երկուսի մատները զարդարում էին բրոնզե լարից պատրաստված 20 մատանիներ: Դյուսիս-արեւելյան պատի տակ, կծկված դիրքով, աջ կողին, առանձին պառկած էր 30-40 տարեկան տղանարդ: Նրա վիզն ու կուրծքը զարդարում էին բրոնզե կիսալուսնաձեւ կախիկը, բրոնզե շրջանաձեւ ցանցկեն հմայիլն ու սպիտակ մածուկից պատրաստված եռանիստ պրիզմայաձեւ կնիք-տարբերանշանը: Այս դեպքում, դարձյալ, ըստ ամենայնի, գործ ունենք «տիրոջ» թաղման արարողության հետ:

Դամանման պատկեր է նաև Սեւանի ավագանի Գավառ (Կամո) քաղաքից մոտ 1 կմ հեռավորության վրա գտնվող Մոքքի ծոր դար դամբարանադաշտի, մ.թ.ա. 15-14-րդ դարերով թվագրվող, թիվ 12 դամբարանում: Խնճային թաղում պարունակող, արեւելք-արեւնուտք կողմնորոշմամբ, ուղղանկյուն դամբարանի կենտրոնում, աջ կողքին կծկված դիրքով պառկած հանգուցյալի մոտ հայտնաբերվել է սպիտակ մածուկից պատրաստված պրիզմայաձեւ կնիք: Դամբանախցի տարբեր անկյուններում նստած դիրքով եւ անկանոն թաղված ուղեկցող անձնակազմը վկայում է, որ տվյալ դեպքում ես գործ ունենք հասարակության մեջ որոշակի կարգավիճակ ունեցող տղանարդու «տիրոջ» միաժամանակյա ակտով իրագործված թաղման արարողության հետ, որի ընթացքում դարձյալ բռնությամբ սպանվել եւ դամբանախուց է իջեցվել ուղեկցող անձնակազմը: Ըստ որում «տիրոջ» մոտ գտնված արտեֆակտերը (ցանցկեն օղակավոր գլխանատվ, շրջանակավոր դաստակով եւ եռանկյունաձեւ լայն չեղբով դաշույն, գլանաձեւ ջնարակածածկ ուլունքներ, փիրուզագույն ազնիվ պատինայով բրոնզե լայն, փորագրազարդ ապարանջան եւ այլն) իրենց ուղղակի գուգահեռներն ունեն Ն.Գետաշենի թիվ 21 դամբարանի ստորին թաղման տիրոջը պատկանող գույքակազմում եւ պրիզմայաձեւ կնիք-տարբերանշանի հետ միասին ընդգծում են նշված թաղումների «տերերի» նույն սոցիալական դասին պատկանելը: Դանգուցյաների մոտ տարբեր քանակով (մեկ, երեք) պրիզմայաձեւ կնիքների առկայությունը, հավանաբար, ունեցել է այդ կարգավիճակի (թերեւս նաև կաստայականության կամ կլանի) բնորոշման իր կոնկրետ հնաստը: Թե ինչումն է կայացել այն, մենք առայժմ ծեռնապահ ենք մնում նեկանքանելուց, սակայն կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկաները, տվյալ դեպքում, կապ չեն ունեցել սեռա-տարիքային ցենզի հետ, քանի որ վերը նկարագրված հասուն տարիքի տղանարդկանց թաղուներից զատ հայտնաբերվել են նաև Նորատուսի մ.թ.ա. 15-14-րդ դարերով թվագրվող եւ 13-15 տարեկան աղջկա թաղում պարունակող թիվ 1 քառախուց դամբարանի թիվ 2 դամբանախցում: Մերեւս կանանց են պատկանել (դատելով դամբանախցերի գույքակազմներից) նաև Արթիկի թիվ 306, 396 եւ 422 կատակոմբային թաղումներից հայտնաբերված եւ մ.թ.ա. 15-13-րդ դարերով թվագրվող համալիրների

Կնիքները: Ցավոք ժամանակին այս դամբարաններից հայտնաբերված մարդաբանական նյութերի անտեսումն այսօր թույլ չի տալիս խոսել վերջիններիս տարիքային ցենզի նասին եւ հաստատապես փաստել սեռային պատկանելությունը:

Պրիզմայաձեւ կնիքների սոցիալական կարգավիճակի տարբերանշաններ լինելու հանգամանքը բացատրելի է մի դիտարկմանք եւս: Բանն այն է, որ նման կնիք-տարբերանշանները բնորոշ են որոշակի աշխարհագրական տարածքի եւ որոշակի ժամանակահատվածի թաղումներին: Այսպէս. եթե նրանք հաճախակի են Սեւանի ավազանի մ.թ.ա. 16-13-րդ դարերի հարուստ (հաճախ նաև խմբային) թաղումներում, ապա ընդհանրապես բացակայում են Թուղթի, Կարմիր բերդի, Կարմիր վանքի, Մեծամորի, Օշականի, Քարաշամբի, Թալինի, Չերքի, Ուկեհասկի, Շոռոմի, Էլառի, Վերին Նավերի, Եղեգնաձորի եւ Յայաստանի համաժամանակյա այլ հուշարձանների հնագիտական համալիրներում: Լորի բերդում (ըստ հրատարակված նյութերի) եւ Շիրակավանում (դամբարան 71, թվագրվում է մ.թ.ա. 14-րդ դարով, նյութը հրատարակված չէ, պեղող հնագետ Լ.Ա.Պետրոսյան) ներկայացված են միայն մեկական օրինակով, Արթիկում, ինչպես նշեցինք վերեւում, վկայված են թիվ 306, 396 եւ 422 դամբարաններում (յուրաքանչյուրում մեկական հատ, ըստ որում թիվ 422-ում՝ միտաննիական կնիքի հետ միասին): Ընդհանրապես բացակայում են Վրաստանի համաժամանակյա հուշարձաններում, իսկ Աղբեկանում՝ մեկական օրինակով հանդիպում են միայն Մինգեչառուի թիվ 63 (հիմնահողային), Ղուշչու թիվ 31 (քարարկղային), եւ Կալաքենոյի թիվ 92 (քարարկղային) դամբարաններում: Ինչ վերաբերում է Յայկական լեռնաշխարհի եւ հարակից շրջանների՝ մ.թ.ա. 12-րդ դարով եւ ավելի ուշ թվագրվող հնագիտական համալիրներում խնդրո առարկա պրիզմայաձեւ արտեֆակտների բացակայությանը, ապա վերջինս դարձյալ գալիս է հիմնավորելու այն ենթադրությունը, որ պրիզմայաձեւ կնիքները կոնկրետ ժամանակահատվածի եւ կոնկրետ տարաշրջանի իրավա-քաղաքական հարաբերությունների արդյունք են եւ որոշակի սոցիալական կարգավիճակ ցուցանող տարբերանշաններ: Բացառված չէ, որ նրանք մ.թ.ա. 16-13-րդ դարերում Սեւանի ավազանում կազմավորված հզոր ռազմա-քաղաքական միուրյան մեջ մտած ցեղային առաջնորդների եւ նրանց մերձավորների իշխանական տարբերանշաններն են հանդիսացել եւ վերջիններիս կողմից երբեմն նաև հանձնվել են հարակից տարածաշրջանների այն առաջնորդներին, որոնք, ընդունելով «սեւանցինների» գերիշխանությունը, նրանց հրամանների ու հանձնարարականների իրականացնողներն են հանդիսացել իրենց ենթակայության տակ գտնվող տարածքներում: Թերեւս սրանով կարելի է բացատրել նման կնիքների առատությունը Սեւանի ավազանում եւ խիստ սակավությունը՝ հարակից շրջաններում:

Քիչ այլ պատկեր է ստացվում Յայկական լեռնաշխարհի երկրաչափական պատկերներով գլանաձեւ (տեղական) կնիքները նույն տեսանկյունից ուսումնասիրելիս: Նախ այս կնիքներն անհամեմատ ավելի լայն աշխարհագրական ու ժամանակագրական սահմաններ են ներառում եւ շարունա-

կաբար կիրառվել են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ քառորդից մինչեւ Վանտոսպի թագավորության ժամանակները ներառյալ: Ըստ որում, պրիզմայաձեւ կնիքների նման, սրանք էլ դամբարաններում հանդիպում են քանակական տարբեր համադրումներով (մեկ-երեք) եւ դարձյալ կապված չեն սեռա-տարիքային ցենզի հետ: Գլանաձեւ, ջնարակածածկ նման կնիք-տարբերանշանների ամենավաղ երեք օրինակները Դայլկական լեռնաշխարհում հայտնի են Օգնիի (Թունդր) թիվ 1 եւ 2 մանկական (կոնկրետ տարիքն ու սեռը տրված չեն) դամբարաններից /Կօրյուկաշվիլ Լ., Գոգած Յ. 1974, էջ 39-40, աղ.3, աղ.4, աղ.29, նկ. 122-125, 133-136/: Նշված իրատարկության մեջ գետեղված լուսանկարներից կարելի է ենթադրել, որ սալարկուային նեղ դամբարանահսկերում, կծկված դիրքով, աջ կողքին պառկած այս երկու երեխաններն ել, ըստ ամենայնի, տղաներ են: Նման կնիքներ հանդիպում են նաև մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծի բեղենյան եւ թռեղք-վաճածորյան մշակույթների դամբարաններում (Թռեղք՝ դամբարանաբլուրներ 6, 8, Կիրովական, Արցախ՝ Խաչենագետ), ուսկե, արժաքե մեծարժեք իրերի, բրոնզե գենքի ու սպասքի, ինչպես նաև խեցեգործական բարձրարվեստ նմուշների հետ միասին: Ըստ որում իրենք էլ պատրաստված են ոսկուց եւ դրանով իսկ կարծես ընդգծում են սոցիալական կարգավիճակի տարբերանշաններ լինելու պարագան: Ուշագրավ է, որ նման կնիքներից մեկն էլ հայտնաբերվել է սեւան-ուզերլիկյան մշակույթին պատկանող, արեւելք-արեւմուտք կողմնորոշմամբ եւ խմբային թաղումով, Նորատուսի թիվ 26 քարաշար, օվալաձեւ դամբարանում եւ հստակորեն թվագրվում է մ.թ.ա. 16-րդ դարով: Մ.թ.ա. 15-9-րդ դարերում, սպիտակ մածուկից պատրաստված եւ երբեմն նաև ջնարակված այս կնիքները հաճախակի են դարնում Շիրակի (Արքիկ, Պարմի գյուղ), Գուգարքի (Լոռի բերդ), Տավուշի (Արծվանիստ), Սեւանի ավազանի (Սարուխան), Արարատյան դաշտի (Արգիշտի-խմիլի), Եղեգնաձորի (Զոջ դար), Նախիջենանի (Կարմիր վանք, Շահրախտի) եւ Արցախի (Գետաբակ, Չովդար, Ղուշլի) հնագիտական համալիրներում: Տարածական եւ ժամանակագրական նման լայն սահմանները վկայում են Դայլկական լեռնաշխարհում քննարկվող կնիքների օգտագործման խորն ավանդույթների ու թերեւս լրիվ չպարզված ինստատյան որոշակի ծանրաբեռնվածության մասին: Ցավոք նշված դամբարաններից հայտնաբերված մարդաբանական նյութին վերաբերող տվյալների բացակայությունն ու թաղման համայնապատկերի ոչ մանրամասն ֆիքսումն, այսօր անհնարին են դարձնում սեռա-տարիքային կոնկրետ տվյալների վրա հիմնված հավանական եզրահանգումները: Չի բացառվում, որ սպիտակ շաղախից պատրաստված, երբեմն ջնարակածածկ, տեղական գլանաձեւ կնիքներն էլ սոցիալական կարգավիճակի (գուցե նաև կաստայականության կամ կլանի) մի այլ կոնկրետ դրսեւրնան խորհրդանիշներ հանդիսացած լինեն: Այս առումով ուշագրավ է, որ երբեմն սպիտակ շաղախից պատրաստված եւ՝ գլանաձեւ, եւ՝ պրիզմայաձեւ ջնարակածածկ կնիքները հանդիպում են նույն դամբարանում: Դանգամանք, որ կարող է նույն երնո-աշխարհագրական միջավայրում ձեւավորված առանձին եւ իրարից անկախ, ուազմա-քաղաքա-

կան կազմավորումների դաշինքի եւ համագործակցության վկայություն լինել: Մասնավորապես այդպիսի պատկեր է ներկայացնում Լոյի բերդի թիվ 7 դամբարանը: Այստեղից հայտնաբերված հնագիտական նյութերի մի մասը (հատկապես մետաղը) ուղղակի նույնական է Լճաշենի իշխանական դամբարանների տեսականու հետ, իսկ ուղևոքաշարի մեջ հանդիպում են եւ գլանաձեւ, եւ պրիզմայաձեւ մեկական կնիք:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի՝ միտաննիական, կասսիտական եւ եգիպտական կնիքներ պարունակող ուշբրոնզեդարյան թաղումներին, ապա կարելի է ենթադրել, որ նրանցում օտարերկրյա կնիքների հայտնաբերման փաստը թերեւս խոսում է տվյալ էրնո-աշխարհագրական միջավայրում փաստացի իշխանության հասած ու սոցիալական ամենաբարձր կարգավիճակն ունեցող անհատների «de jure» եւ «de facto» միջազգային ճանաչման մասին: Մասնավորապես այդ է վկայում Արթիկի թիվ 422 դամբարանում «տեղական նշանակության» պրիզմայաձեւ եւ գլանաձեւ կնիք-տարբերանշանների հետ, նույն ուղևոքաշարի մեջ «միջազգային ճանաչման» խորհրդանշի հանդիսացող միտաննիական կնիքի հայտնաբերումը: Իրավական փաստացի ճանաչում է խորհրդանշում նաեւ Սեւանի ավագանի Լճաշեն քնակավայրի մոտ գտնվող դամբարանադաշտի թիվ 97 դամբարանից հայտնաբերված միտաննիական կնիքը: Դամբարանային նույն համակիրից հայտնաբերված բրոնզե գնդաձեւ, զարդարուն գուրզը, ցանցկեն դաստակով բրոնզե կարծ սուրը, փայտե մարտակառը, ոսկե զարդերն, ինչպես նաեւ Ուշ Բրոնզի շրջափուլի վաղ փուլին վերաբերող «եռագույն» խնցելենը թույլ են տալիս քննարկվող դամբարանը թվագրել մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին կեսով, իսկ նրանուն թաղված 25-30 տարեկան տղամարդուն, նկատի ունենալով նաեւ միտաննիական ջնարակված կնիքի առկայությունը, համարել լճաշենյան հասարակության ամենալայն իրավունքներով օժտված եւ սոցիալական ընդգծված բարձր կարգավիճակ ունեցող անհատներից մեկը:

Ախտոսանքով պետք է արձանագրել, որ հնամարդաբանական նյութի պահպաննան, արժեքավորման եւ տեղեկատվական բացառիկ հնարավորությունների անտեսման հետեւանքով, սեռա-տարիքային եւ էրնո-սոցիալական հետազոտությունների իրականացման հնարավորությունից գրկվել են նաեւ Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Իրանական սարահարթի, Միջագետքի, Սիրիա-Պաղեստինյան աշխարհի եւ Միջերկրականի ավագանի հնագիտական հուշարձանների զգալի մասը: Ահա թե ինչու մեր ուսումնասիրության համար Լճաշենից, Ն.Գետաշենից, Մոքքի ծորից եւ Նորատուսից պեղված մարդաբանական նյութերն իրենց սեռա-տարիքային տվյալների հավաստիությամբ, ինչպես նաեւ մարդաբանական տիպերի հետազոտման տեղեկատվական հնարավորություններով, այսօր էտալոնային հուշարձանների կարգավիճակ են ձեռք բերում եւ կարեւոր նշանակություն ունեն Դին Արեւելքի էրնո-մշակութային ուսումնասիրությունների իրագործման համար:

ՎԵՐԶԱԲԱՆ

Նախորդ գլուխներում ներկայացված դիտարկումների ու մեկնաբանությունների արդյունքները հնարավորություն են ընձեռում հավանական հետեւություններ անել մի կողմից Դայկական լեռնաշխարհի, մյուս կողմից Մերձավոր Արեւելքի եւ Միջերկրականի ավագանի միջեւ պատմական որոշակի ժամանակահատվածում գոյություն ունեցած էրնո-մշակութային, սոցիալ-տնտեսական եւ ռազմա-քաղաքական կապերի ու փոխառնչությունների ուղղվածության եւ հաճախականության վերաբերյալ: Այս առումով Դայկական լեռնաշխարհից հայտնաբերված եգիպտական (Մեծամոր), միտանիական (Լճաշեն, Արթիկ, Մեծամոր, Լոռի բերդ, Շամիրամ, Դրազդան, Շահթախտի, Առաջաձոր), կասսիտական (Մեծամոր) եւ ասսուրական (Խոջալու) կնիքներն ու դրոշները, որպես պետական իշխանության եւ իրավադիվանագիտական հարաբերությունների խորհրդանշաններ, ձեռք են բերում տեղեկատվական առանձնահատուկ արժեք՝ իհմք հանդիսանալով պատմա-քաղաքական հավանական վերակազմությունների համար:

Բանն այն է, որ մ.թ.ա. 17-15-րդ դարերում Մերձավոր Արեւելքում ձեւավորված հզոր պետությունների, եւ հատկապես Նոր Խեթական թագավորության ու Եգիպտոսի աշխարհա-քաղաքական շահերի բախումը հանգեցրել էր այնպիսի լուրջ հակառակ ռազմա-քաղաքական խնբավորումների ստեղծման անհրաժեշտությունը: Ըստ որում, եթե Նոր Խեթական թագավորությանը համակրում էին Փոքր Ասիայի արեւմուտքում (Արծավա, Վիլուսա) եւ հարավում (Ալալախ, Կիծուվատնա) տեղավորված ոչ մեծ պետություններն, ապա խեթական հարածուն վտանգը Եգիպտոսի դաշնակիցների շարքն էր մոել Սիրիա-Պաղեստինյան աշխարհի իշխանությունները, Սիստանին եւ Կասսիտական Բարելոնը: Վերջիններս իրենց հերթին, այդ այլանսն էլ ավելի ամուր դարձնելու միտումով, աշխատում էին նրա մեջ ներքաշել նաեւ իրենց ենթականներին ու հարեւաններին: Նման քաղաքական գործարքները, որպես օրենք ավարտվում էին պայմանագրի ստորագրմամբ ու դինաստիական ամուսնությամբ, իսկ երեմն էլ ամրապնդվում, վստահության խորհրդանշի հանդիսացող, անձնական կնիքների փոխանակման արարողությամբ: Ահա ռազմա-քաղաքական եւ դիվանագիտական բարդ հարաբերությունների այս հենքի վրա միանգանայն բացատրելի են Եգիպտոսի փարավոն Թուրմոս 3-րդի (մ.թ.ա. 16-րդ դարի վերջ-մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին կես), կասսիտական տիրակալներ Ուլամ-Բուրարիաշի՝ Բուրնա-Բուրարիաշի որդու (մ.թ.ա. 15-րդ դարի կեսեր) եւ Կուրիգալզուի (մ.թ.ա. 15-րդ դարի վերջ-մ.թ.ա. 14-րդ դարի 1-ին կես) կնիքների եւ խորհրդանշների հանդես գալը Դայկական լեռնաշ-

խարիի մ.թ.ա. 15-14-րդ դարերի հարուստ դամբանային համալիրներում: Սա մի կողմից նատնանշում էր մետաղագործական ավանդույթներով եւ սպառագինության բարձրորակ արտադրանքով հայտնի Յայկական լեռնաշխարհի որոշակի դերն այդ քաղաքական գործընթացներում, նյուս կողմից մի անգամ եւս անուղղակի կերպով հուչում նշված ժամանակաշրջանում այստեղ արդեն ձեւավորված պետական կազմավորումների գոյության փաստը: Վերջիններից երկուսը՝ Յայսան եւ Ածին, որպես հալառակորդ կողմ հիշատակվում են մ.թ.ա. 15-13-րդ դարերի խեթական տեքստերում, իսկ երրորդը՝ Նախրին (Նեխերի-Նիխիրի-Նիխիրիա), որպես Կարդունիաշի (Կասսիտական Բաբելոն) դաշնակից՝ մ.թ.ա. 13-րդ դարի ասսուրական արձանագրություններում /Կապանցյան Գ. 1947, էջ 37; Մակկուն Դ. 1983, էջ 41-42; Գերի Օ. 1987, էջ 28-33; Ավետիսյան Գ. 1984, էջ 45; Խաչատրյան Բ. 1971, էջ 128-145; ԻԴԲ 1988, էջ 144-150; Deller K., Fadhil A., Ahmad K. 1994, էջ 461-467/: Մեծամորում հայտնաբերված եգիպտական եւ կասսիտական թագավորական կնիքները լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու Յայկական լեռնաշխարհում մեկ այլ պետական կազմավորման գոյությունը եւս: Վերջինիս անվանումը մեզ առաջմ հայտնի չէ, թեեւ ինչպես ենթադրում են որոշ ուսումնասիրողներ /Ե.Խանզադյան, Գ.Արեշյան/, այն, հավանաբար, մ.թ.ա. 9-րդ դարից վանտոսայան (ուրարտական) արձանագրություններում հիշատակվող երիւնի երկիրը կարող է լինել /Խանզադյան Թ. 1982, էջ 37:«

Այսպիսով, տարածաշրջանի մ.թ.ա 2-րդ հազարամյակի կեսի ռազմա-քաղաքական իրադրության հնարավոր վերակազմության հենքի վրա նյութական նշակույթի խնդրո առարկա արտեֆակտների համառոտ քննարկումը վկայում է Միջերկրականի ավագանի եւ Մերձավոր Արեւելքի որոշ տարածքների, այդ թվում նաև Յայկական լեռնաշխարհի համար կապերի ու փոխանչությունների արեւմտյան (նաև հարավ-արեւմտյան) ուղղության կարեւորությունն ու առաջնայնությունը: Ուշագրավ է, որ հենց այս ժամանակահատվածում, իսկ ավելի կոնկրետ թերեւս մ.թ.ա. 16-13-րդ դարերում է, որ վերոհիշյալ գործընթացների անմիջական ազդեցության տակ նկատվում է Յայկական լեռնաշխարհի համար կապերի ու փոխանչությունների հարավային (միջագետքյան) ոչ ավանդական ուղղու աշխուժացում: ճանապարհ, որն իր գոյության ողջ ընթացքում, կասսիտական գերիշխանության ժամանակներից (մ.թ.ա. 16-13-րդ դարեր) ոչ առաջ եւ ոչ էլ հետո, այլևս երբեք ննան կարեւորություն չի ունեցել Յայկական լեռնաշխարհի համար, եւ իր անակնկալ դրսեւորմամբ, ռազմա-քաղաքական խիստ կարեւոր գործոնից զատ, հնարավոր է, որ պայմանավորվել է նաև դեռեւս ըստ արժանվույն չուսումնասիրված էրնիկական, սոցիալական, տնտեսական եւ այլ դրդապատճառներով...»

Մերձավոր Արեւելքում եւ Միջերկրականի ավագանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդում ձեւավորված իրավա-քաղաքական եւ էրնո-նշակութային հարաբերությունների լավ մշակված համակարգն, ինչպես վկայում են գրավոր սկզբնաղբյուրներն ու ժավալուն հնագիտական պեղումների արդյունքներն, անսպասելի խաթարվեց մոտավորապես մ.թ.ա. 13-12-րդ

ηαρτερή սահմանագծին, իիմք հանդիսանալով միջցեղային բախումների, ինչպես նաև էրնիկական լուրջ ու լայնամասշտար տեղաշարժերի համար: Արդյունքում մ.թ.ա. 13-րդ դարի վերջում Բալկանյան թերակղզու կենտրոնական եւ հարավային շրջանների պետական կազմավորումները դաժան հարձակման ենթարկվեցին հյուսիսից եւ հյուսիս-արեւմուտքից ներխուժած ցեղախմբերի (հավանաբար իլիրացիներ եւ դորիացիներ) կողմից, կողոպտվեցին եւ ավիրվեցին: Աղետի գոտում հայտնվեցին Բեռտիան, Արեւնտյան Ալտիկան, Խտոնոս, Արեւմտյան Արգոլիդան, Յուլիսիսային Լակոնիան եւ Մեսսենիան: Տեղի բնակչությունը լրեց բնակավայրերը: Նշված շրջանների փախստականներով լցվեցին աղետից համեմատաբար քիչ տուժած Արեւելյան Ալտիկան, Արայան, Եգեյան ու Հոնիական ծովերի կղզիները /Desborough V. 1964, էջ 221; Styrenius C. 1967, էջ 36; Bouzek J. 1969, էջ 51, 92; Lang M. աղ. 124; Buck R. 1969, էջ 276; Անդրեև Ю. 1976, էջ 13/: Դենց այս գործընթացների արդյունքում է, որ Սիցերկրականի ավազանում սկիզբ առան դարակազմիկ այն տեղաշարժերը, որոնք մ.թ.ա. 13-րդ դարի վերջի եւ մ.թ.ա. 12-րդ դարի եգիպտական հիերոգլիֆ տեքստերում հայտնի են «ծովի ժողովուրդների գաղբ» անվամբ: Ավարառուական նպատակներ հետապնդող բազմաթիվ հարձակումներից հետո, մ.թ.ա. 13-րդ դարի վերջում «ծովի ժողովուրդները» լիբիացիների հետ դաշնակցած ներխուժեցին եգիպտոս, սակայն ինչպես ցույց տվին հետագա իրադարձությունները, հիմնավորապես չկարողացան հաստատվել այստեղ: Մ.թ.ա. 1219 թվին նրանք առաջին լուրջ պարտությունը կրեցին Մեռնեպտա փարավոնից, իսկ 1170 թվին Ռամզես 3-րդի կողմից վերջնականապես վտարվեցին Երկրից /ИДВ 1988, էջ 558-564/: Թողոնելով եգիպտոսը «ծովի ժողովուրդները» ցրվեցին ողջ Սիցերկրականով մեկ: Պուլեսատ-փոխտացիները հաստատվեցին Լեռանտում, շերդանները՝ Սարդինիայում, շեկելեշ-սիկունները՝ Սիցիլիայում, տուրուչա-տիրս-էտրուսկներն՝ Ապենինյան թերակղզու արեւնտյան հատվածներում, իսկ աքայվաշա-ախիլվա-աքայացիները, լուկա-լիբիացիներն ու դանունա-դանայացիները՝ Փոքր Ասիայի արեւնտյան եւ հարավային շրջաններում: Ըստ ամենայնի, դենց այս ժամանակ է, որ պուլեսատ-փոխտացիների հարվածների տակ վերջնականապես կործանվեց վաճառաշահ Ուգարիթը: Նոյն մ.թ.ա. 13-12-րդ դարերի սահմանագծին բնակլիմայական խիստ անբարենպաստ պայմանները (Երաշտ, Երկրաշարժեր, համաճարակներ), «ծովի ժողովուրդների» մի նախ ներխուժումն ու նրանց ազդեցության տակ Փոքր Ասիայի տարբեր հատվածներում գլուխ բարձրացրած ցեղախմբերը (թրակիացիներ, փռուգիացիներ, մուշկեր, արմեններ, կասկեր եւ այլն) պատճառ դարձան հզոր խեթական պետության թուլացնան ու տրոհմանը: Օգտվելով տարածաշրջանում ստեղված խառնաշփոր վիճակից, ինչպես նաև եգիպտոս-Միտանի-Կասսիտական Բարելոն ռազմա-քաղաքական դաշինքի փաստացի լուծարումից, մինչ այդ պատմական թատերաբենում մեծ կշիռ չներկայացնող Ասուրական պետության տիրակալները մ.թ.ա. 12-րդ դարի սկզբներին կարողացան իրենց գերիշխանության տակ առնել Բարելոնն ու վտարել կասսիտներին, ինչպես նաև տեր դառնալ խեթերի եւ ալգիացիների

կողմից արդեն կործանված եւ տվյալ պահին փաստորեն ոչ-մեկին այլեւս չպատկանող, նախկին Միտաննիական պետության տարածքներին: Բարելոնի թուլացումից օգտվեցին նաև էլամի տիրակալները, որոնք սկսած մ.թ.ա. 13-րդ դարի վերջից պարբերաբար ավարառուական արշավանքներ էին կազմակերպում դեպի Յարավային Միջագետք: Բարելոնից հեռացած կասսիտների հիմնական մասը, նույն մ.թ.ա. 13-12-րդ դարերի սահմանագծում, ըստ ամենայնի ապաստան գտավ Կենտրոնական Զագրոսից արեւելք ընկած տարածքներում՝ մասնավորապես Լուրիստանում, աննախադեա թափ հադրութելով տեղի սոցիալ-տնտեսական հարաբերություններին:

Այսպիսով մ.թ.ա. 12-րդ դարի առաջին քառորդում Վերոհիշյալ գործընթացները հանգեցրին Միջերկրականի ավազանում եւ Մերձավոր Արեւելքում սոցիալ-տնտեսական, երնո-մշակութային եւ ռազմա-քաղաքական հին համակարգի վլուզմանը, որի հետեւանքով փաստորեն փակվեցին առեւտրական վաղեմի ճանապարհներն ու դադարեցին գործել մշակութային կապերի ավանդական ուղիները: Տարածաշրջանում սկիզբ առած երնո-քաղաքական խորն ու արմատական փոփոխությունները հիմք հանդիսացան քաղաքական նոր ուժերի ու խմբավորումների ձեւավորման համար, որոնցում թելադրող դիրք ստանձնեց Ասսուրական պետությունը:

Տեղի ունեցող փոփոխությունները բնականաբար իրենց ոլորտն առան նաև Յայկական լեռնշխարից: Որպես Միտաննիի եւ Կասսիտական Բարելոնի երեմնի համակիր ու դաշնակից, այն մ.թ.ա. 13-12-րդ դարերում պարբերաբար սկսեց ենթարկվել Ասսուրական պետության տիրակալների (Սալմանասար 1-ին, Թուկուրի-Նինուրտա 1-ին, Թգլարպալասար 1-ին) արշավանքներին ու ավերածություններին: Սակայն այս ժամանակաշրջանում Յայկական լեռնաշխարիի համար ոչ այնքան վտանգավոր էին այդ արշավանքները, որքան արեւմտյան ավանդական առեւտրական ուղու փակուն ու մշակութային կապերի ու փոխանչությունների խզումը: Թերեւ հենց այս է պատճառը, որ միանգամից կարեւորություն ստացան առեւտրական այն ուղիներն ու մշակութային բոլյ կապերը, որոնք թեւեւ հնագույն ժամանակներից դեպքից-դեպք գործում էին արեւմտյանն գուգահեր, սակայն իրենց տեսակարար կշռով ու ծավալով, դատելով հնագիտական համալիրների ընձեռած տվյալներից, միայն օժանդակ ու պյանանական նշանակություն ունեին: Այս առումով, նկատի ունենալով տարածաշրջանում ստեղծված քաղաքական իրավիճակը, կարելի է պնդել, որ Յայկական լեռնաշխարիի համար մ.թ.ա. 12-րդ դարից առանձնակի նշանակություն պետք է ձեռք բերեր կապերի ու փոխառնչությունների հարավ-արեւելյան ուղին: Տվյալ պահին այն հեռու էր ընկած արեւմուտքում տեղի ունեցող երնիկական ինտենսիվ տեղաշարժերից ու բախումներից եւ միեւնույն ժամանակ ինչ-որ չափով ապահով էր ասսուրացիների կողմից կատարվող ոտնձգություններից: Քննարկվող ուղին Թալիշի եւ Մերձուրմիական տարածքների վրայով Յայկական լեռնաշխարի կապում էր Իրանական սարահարթի հյուսիս-արեւմտյան շրջանների, ապա Լուրիստանի եւ Խուզիստանի, իսկ այստեղից էլ Պարսից ծոցի հետ: Միանգամայն հասկանալի է, որ աշխարհագրական դիրքի եւ ուղղվածության պատճառով

